

4

799(47.925)

h-42

624



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
СЕКТОР ИСТОРИИ И ТЕОРИИ ИСКУССТВ

БАБКЕН АРУТЮНЯН

АРМЯНО-РУССКИЕ  
ТЕАТРАЛЬНЫЕ  
СВЯЗИ

КРАТКИЙ ОЧЕРК

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН

1955

2013-2008

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՊՈ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԴԵՍՏԱՆ  
ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐ

ՎԱՎԿԵՆ ՀՈՐՈՒԹՅՈՒՆԵԱԾ

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ  
ԹԱՏԵՐԱԿԱՆ  
ԿԱՊԵՐԸ

ՀԱՄԱԴՐԱ ԱԿՆԱՐԿ



Տպագրված է Հայկական ՍՍՌ Գիտությունների  
ակադեմիայի Խմբագրական-հրատարակչական  
խորհրդի ոռումամբ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ  
ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՍԵԿՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ

Հայ-ռուսական քատերական կապերը մեր  
քատրոնի պատմության կարևոր օղակն են կազ-  
մում, պատմություն, որի գոյացումը անքակտե-  
լիորեն կապված է ոռոս մեծ ժողովրդի դեմոկրա-  
տական կուսուրայի հետ: Ստեղծելով իրենց ազ-  
գային քատրոնը՝ հայ բեմի առաջավոր գործիչները  
միշտ հենվել են ոռոս քատերական արվեստի ռեա-  
լիստական տրադիցիաների վրա, քատրոն, որը  
դեռևս անցյալ դարում ձեռք էր բերել համաշխար-  
հային հոշակ:

Մինչուղյուցինն հայ քատրոնի պատմության  
մարքսիստական լրասարանումը հնարավոր է միայն  
հայ-ռուսական քատերական կապերի լիակատար  
ուսումնասիրության դեպքում:

Վերջին տարիներու սովետահայ քատերագետ-  
ները նշանակալի աշխատանք են կատարել այդ



493-2003

թեմայի մշակման գործում՝ այն շոշափելով առանձին գրեթերում, հոդվածներում, զեկուցումներում և գիտական հաղորդումներում:

Ընթեցողի ուշադրության առաջարկվող արվեստագիտության թեկնածու Բաբկեն Հարությունյանի ներկա աշխատության մեջ առաջին անգամ փորձ է արվում հակիրճ հանրագումարի թերել պատմա-ժամանակագրական կարգով հայ-ռուսական բատերական կապերի հարուստ պատմությունը՝ անցյալ դարի 20-ական թվականների սկզբից մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

(1828—1861)

1

Հայ-ռուսական կովտորական կապերի առաջացումը վերաբերում է դեռևս Կիկյան Ռուսիայի ժամանակաշրջանին, սակայն առանձին ուժով այդ կապերը զարգացան և ամրապնդվեցին միմիայն Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո:

1828 թվականին իրականացավ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, որը հայ ժողովրդին ու միայն փրկեց թյուրքական և պարսկական ասիմիլյատորներից, այլև անկասկած մի խոշոր քայլ կատարեց նրա պատմական զարգացման ճանապարհին: Պատմական այդ ակտի պրոգրեսիվ նշանակությունը նախ և առաջ այն է, որ Արևելյան Հայաստանի մուտքը Ռուսաստանի տնտեսա-քաղաքական կյանքի ընդհանուր հունի մեջ նպաստեց նոր, պատմականորեն ավելի պրոգրեսիվ, կապի-

տալիստական հարաբերությունների աճին ֆեոդալական մի այնպիսի հետամնաց երկրում, ինչպիսին էր այն ժամանակ Հայաստանը: Երկրորդ՝ բարերար ազգեցություն ունեցավ ոռուսական առաջավոր մտքի ավելի, քան երբեք ակտիվ ներթափանցումը Հայաստան: Երրորդ՝ այդ միակցման հետևանքով ուժեղացավ ոռուսական օրիենտացիան նմանապես և Արևմտյան (Յուրքական) Հայաստանում, որով ազգային-ազատազրական շարժումը այնտեղ մի նոր գարկ և թափ ստացավ:

Սերո շփումը Ռուսաստանի ավելի բարձր կուլտուրայի, նրա գիտության, առաջադիմական-դեմոկրատական գրականության, արվեստի, թատրոնի հետ, որոնց նշանակությունը շնորհիվ դրանց հումանիստական գաղափարների և դեմոկրատիզմի վաղուց արդեն դուրս էր եկել ազգային շրջանակներից և բարերար ազգեցություն էր գործում շատ ուրիշ, առանձնապես արևելյան ժողովուրդների կուլտուրայի զարգացման վրա,— նրապատում էր նաև Հայաստանի կուլտուրական վերելքին: Պատահական չէ, որ Կարլ Մարքսին ուղղած իր նամակներից մեկում Ֆրիդրիխ Էնգելսը նշում էր Արևելքի համար Ռուսաստանի պրոգրեսիվ նշանակությունը<sup>1</sup>:

<sup>1</sup>ՏԵ՛ս Կ. Մարքս, Փ. Էնգելս, Сочинения, том 21, стр. 211.

Ակսած 1828 թվականից ցարական Ռուսաստանի կազմի մեջ մտած Արևելյան Հայաստանը իր էկոնոմիկայի և կուլտուրայի զարգացման մեջ գնում էր հիմնականում Ռուսաստանի հետ մի ընդհանուր ուղիղով:

Ռուսաստանի ազատագրական շարժման ազգականական շրջանում՝ 1828—1861 թվականներին<sup>1</sup> հայ հասարակական-քաղաքական միտքը ձևավորվում էր, այսպես կոչված, «լուսավորական շարժման» ազգեցության տակ:

Հայ, ինչպես և այլ երկրների լուսավորիչները, իրենց հարազատ ժողովրդի զարգացման գիխավոր նախապայմանը համարում էին լուսավորության լայն տարածումը: Այս ժամանակաշրջանում, որի մասին այստեղ խոսվում է, ոռուսական առաջավոր հասարակական մտքի անմիջական ազգեցության տակ սկսվում է հայ ժողովրդի հոգևոր կուլտուրայի ժաղկումը նրա բոլոր բնագավառներում:

Մեկը մյուսի հտեւից բացվում են հայկական ուսումնական հաստատություններ Ռուսաստանում, Անդրկովկասում, ինչպես և արտասահմանի հայ-

<sup>1</sup>Հայութական թատերական կապերի զարգացման հարցը քննելիս մենք ընդունում ենք լենինյան պարբերացումը Ռուսաստանում ազատագրական շարժման երեք փուլերի մասին (տես Վ. Ի. Լենին, երկեր, հատ. 20, էջ 297):

կական գաղութներում։ Հիշենք, օրինակ, Արևելյան լեզուների կազմարյան ճեմարանը Մոսկվայում՝ 1815 թվականին, Ներսիսյան հոգեոր դպրոցը թիֆլիսում՝ 1824 թվականին, դպրոցներ Երևանում, Շուշում, Նոր-Նախիչևանում, Պոլսում, Կալկաթաւում և այլուր։

Հայկական զարգացող պարբերական մամուկի ներսում սկսվում է անհաջող պայքար պրոգրեսիվ և ռեակցիոն ուղղությունների միջև՝ հայ ժողովրդի կյանքի համար ոռւսական կուտուրայի նշանակության գնահատման շուրջը։ Հակառակ առանձին թերթերի և ամսագրերի ռեակցիոն ելույթներին՝ ավելի առաջավոր դեմոկրատական մամուկը հայ ժողովրդի ապագան տեսնում էր իր և ոռւս հպոր ժողովրդի միասնության մեջ, և իր էջերում արծարծում էր հայ ժողովրդի հասարակական կյանքի առավել հրատապ հարցերը, այդ թվում նաև լեզվի, գրականության և արվեստի հարցերը։

Դեռևս XIX դարի սկզբից ծայր է առնում ոռւս առաջավոր նկարչության, երաժշտության, գրականության և թատրոնի փորձի յուրացումը հայկական կուտուրայի գործիչների կողմից։

Հատկապես խոշոր էր ոռւսական պրոգրեսիվ գրականության դերը հայկական նոր կուտուրայի դարդացման և ձևավորման գործում, որի հանձա-

րեղ հիմնադիրը հանդիսացավ Խաչատուր Աբովյանը (1805—1848)։

Մեծ գրող-դեմոկրատ և լուսավորիչ Խաչատուր Աբովյանը հայ և ոռւս ժողովրդների բարեկամության բոցավառ մոնետիկն էր։ Նրա «Վերք Հայաստանի» հայրենասիրական վեպում, որ այդ բարեկամության սբանչելի ջատագովությունն է, մեծ զգացմունքով նկարագրվում է հայ աշխատավոր ժողովրդի խանդավառ վերաբերմունքը դեպի ոռւսական բանակը։ Աբովյանը նկարագրում է, թե ինչպես էին «ծեր, մանուկ, աղջիկ, պառավ» ընկնում ոռւս զինվորների վզովն «ու էնպես նվազած հոգին քաղված մնում»<sup>1</sup>։

Խաչատուր Աբովյանը խորապես համոզված էր, որ միայն Ռուսաստանը կարող է ազատագրել հայ ժողովրդին ֆիզիկական բնաշնչումից և նրա առաջ բաց անել կուլտուրական հետագա զարգացման անսահման հեռանկարներ։ Դրա համար էլ նա գրում էր, թե «զժոխքի քանդվիլը մեղավորների համար էն զինը չէր ունենալ, ինչպես Երևանու բերդի առնիլը հայերի համար»<sup>2</sup>։

Հմբոնելով ոռւս մեծ կուլտուրայի խոր նշա-

<sup>1</sup> Խաչատուր Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, հայկական ՍՍԾ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1948, հատ. 3, էջ 179.

<sup>2</sup> Նույն ակդում։

նակությունը հայ ժողովրդի կյանքում՝ Խաչատուր Աբովյանը հրապարակ էր գալիս որպես նրա անխոնջ պրոպագանդիստը։ Նրա ստեղծագործական ողջ կյանքի անբաժան մասն են կազմում կրթությունը ուսուական կուլտուրան և սերտ կապը նրա հետ։ Դեռևս ուսանողական տարիներին Դորագոտում (Էստոնական ՍՍՌ, այժմյան Տարտու քաղաքում) Խաչատուր Աբովյանը ծանոթանում է ուսուարակության առաջավոր ներկայացուցիչների հետ։ Նա դառնում է Ի. Ա. Կոփլովի առաջին թարգմանիչներից մեկը, որ մոտ էր նրան իր ստեղծագործության խորը գաղափարայնությամբ և ժողովրդայնությամբ։ Խաչատուր Աբովյանը թարգմանում է նաև Ն. Մ. Կարամզինի, Ի. Ի. Դմիտրեկի և ուստի այլ հեղինակների մի շարք երկերը։

Զինված XIX դարի առաջին կեսի ուսուացավոր հասարակության դեմոկրատական հայացքներով՝ Խաչատուր Աբովյանը հայ իրականության մեջ անխոնա պայքարում էր ֆեոդալա-կղերական խավարամոլության դեմ։ Իր ստեղծագործության մեջ նա աննկուն մարտնչում էր իրեն ժամանակակից հայ գրականության կլասիցիստական քարացած կանոնների դեմ, ժողովրդին անհասկանալի հին-հայերեն գրաբար լեզվի դեմ, որով գրված էին հայ դպրոցական թատրոնի կլասիցիստա-

կան ողբերգությունները, — հանում աշխարհաբար լեզվի, հանուն ռեալիստական նոր գրականության և դրամատուրգիայի։

Հայ-ռուսական կուլտուրական կապերի ամրապնդման նշանակալից վկայություններից մեկն էլ ուսուարակների երկերի հայերեն թարգմանությունն է, որ կատարել են Ռուսաստանում սովորած և աշխատած՝ հայկական կուլտուրայի առաջավոր գործիչները։ Խաչատուր Աբովյանի կատարած թարգմանությունների հետ միասին լույս են տեսնում ուսուական օգոնդիայի լավագույն նըմուշների թարգմանությունները, մասնավորապես Ա. Ս. Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը» և «Կովկասի գերին», որ կատարել էր Մոսկվայի Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանի ուսերեն լեզվի դասատու Մկրտիչ Էմինը, իսկ 1843 թվականին Լազարյան ճեմարանը Մոսկվայում, նույն ճեմարանի ուսանող Հ. Համազաւյանի թարգմանությամբ, հրատարակում է Ա. Ս. Պուշկինի, Մ. Ֆ. Ցուլովի կոմունականությամբ ժամանակակից հայ գրականության ժողովածում։ Մի փոքր ուշ, 1848 թվականին, Լազարյան ճեմարանը լույս է ընծայում Մ. Վ. Ղոմոնոսովի, Գ. Ռ. Դերժավինի, Ի. Ա. Կոփլովի երկերի հայերեն ժողովածուն։

Իրենց հերթին ուսուարակական և կուլտուրական գործիչները առանձին հետաքրքրություն

են հանդես բերում դեպի Հայաստանը, նրա պատմությունն ու արվեստը։ Ա. Ս. Պուշկինը, Ա. Ս. Գրիբոեդովը, Դ. Վ. Դավիդովը, ինչպես և շատ դեկաբրիստներ, որոնք աքսորված են եղել Կովկաս՝ Ա. Ա. Բեստովինը, Ա. Ի. Օդոնսկին, Վ. Կ. Կյուփիլը և կույզները և ուրիշներ, եղել են Հայաստանում։ Իրենց երկերում նրանք նկարագրել են բազմաշարժարշար հայ ժողովրդի ծանր կյանքը և հրապարակ են եղել որպես Հայ-ռուսական բարեկամության ջատագովներ։ Այդպիսին է, օրինակ, Ա. Ս. Պուշկինի «Թոն» բանաստեղծությունը։ Ա. Ս. Գրիբոեդովը, ինչպես հայտնի է, մտադիր էր գրելու «Ռադամիստ և Զենոբիա» ողբերգությունը Հայ-վրացական պատմությունից։ Տարաբախտաբար այս երկից պահպանվել են լոկ սեագիր ուրվագծերը։

2

Հասարակական-կուլտուրական ստեղծված իրադրության մեջ հայկական նոր թատրոնի գարգացումը սերտորեն կապված էր ոռւս ժողովրդի դեմոկրատական թատերական կուլտուրայի հետ։ Հայ բեմական արվեստի պրոգրամի գործիչները, ինչպես XIX դարի սկզբին, այնպես էլ հետագայում, գտնվում էին ոռւս թատրոնի հետ ստեղծագործական բեղմնավոր համագործակցության մեջ։

Շատ փաստեր են վկայում այդ մասին։ Հայկական նոր թատրոնի առաջին ներկայացումները Անդրկովկասում բեմադրվել են դեկաբրիստների ապստամբության նախօրեին, Ռուսաստանի հոգեվոր կյանքի բուռն վերելքի տարրում, այն ժամանակ, երբ Մոսկվայում բացվեց Փոքր թատրոնը (1824 թվականին)։ Այդ ներկայացումների կազմակերպիչը Թիֆլիսի Ներսիսյան հոգեմոր դպրոցում՝ այդ դպրոցի ղեկավար Հարություն Ալամդարյանն էր (1796—1834), Խաչատուր Աբովյանի ուսուցիչը, հայտնի բանասեր, մանկավարժ և բանաստեղծ, որն իր կրթությունը ստացել էր Մոսկվայի Լազարյան ճեմարանում և այդ ժամանակ աշխատում էր Թիֆլիսում՝ իրեն ոռւսաց լեզվի դասաւու։

Հարություն Ալամդարյանը, որը չերմորեն ողջունեց Արևելյան Հայաստանի ազատագրումը և ոռւս զորքերի կողմից ներկանի բերդի առումը գիտեց որպես հայ ժողովրդի երշանիկ ապագայի հաստատ առհավատչյան՝ ոռւս կուլտուրայի և գրականության մի կրթություն պրոպագանդիստ էր հայ իրականության մեջ։ Նրա դպրոցական թատրոնում ներկայացվում էին ինչպես իր՝ Հարություն Ալամդարյանի պիեսները, նույնպես և ուսումնառնի սան Գալուստ Շերմագանյանինը (վախճ. 1883 թ.), որը հետագայում XIX դարի առաջին


կեսի հայ թատրոնի ամենանշանավոր գործիչներից մեկն էր և իր վրա կրել էր ոռւա առաջավոր դրամատուրգիայի և թատրոնի ուժեղ ազդեցությունը։ Դեռևս 1826 թվականին, մինչև Արևելյան Հայաստանի Ռուսաստանի հետ միակցումը, լինելով Ներսիսյան հոգևոր դպրոցի աշակերտ, Գալուստ Շերմազանյանը իր «Ասրի-բեկ և Գիքի» դպրոցական շարադրության հերոսի բերանով, — որը նա հետո վերածեց պիեսի, — Հայաստանի պատմական ճակատագիրը կապով էր Ռուսաստանի հետ։

Հայ թատրոնի զարգացման վրա ուսւ ռեա-  
լիստական դրամատոպրֆիայի ազդեցության ծա-  
վալման մեջ մեծ նշանակություն ունեցան ուսւե-  
րեն ներկայացումները, որ Անդրկովկասի հայե-  
րին ու վրացիներին ծանոթացրին Ա. Ս. Գրիբոե-  
դովի «Խելքից պատուհաս» կլասիկ կոմեդիայի  
հետ: Առաջին ներկայացումը խաղացվեց Երևա-  
նում, 1827 թվականին, ուսւ զորքերի կողմից  
Երևանի բերդի գրավումից անմիջապես հետո:  
Մամուլով այս պատմական ներկայացման մասին  
հիշվում է 1832 թվականին. «... «Խելքից պատու-  
հաս» կոմեդիան խաղացվել է 1827 թվականին,  
Երևանի բերդում» հեղինակի ներկայությամբ: Կո-  
մեդիան գրելիս արդյոք Գրիբոեդովը կարող էր  
կարծել, որ նրա բեմադրությունը ինքը կտեսնի

պարսկական սատրապի բնակարանում...»<sup>1</sup>; «Խելքից պատուհասը» ներկայացվել է ռուսերեն լեզվով՝ 20-րդ Հետևակ դիվիզիայի ռուս սպաներից և նրանց ընտանիքների անդամներից կազմված գերասան-սիրողների ուժերով; Ա. Ս. Գրիբոեդովի՝ այդ ներկայացմանը ներկա լինելու մասին վկայում է Ալեքսեյ Վեսելովսկու 1874 թվականին գրած ակնարկը «Խելքից պատուհասի» բեմական պատմության մասին.— «Թիֆլիսից Երևանի միջով անցնելիս Գրիբոեդովին խնդրեցին այցելել ներկայացմանը («Խելքից պատուհաս»— Բ. Հ.) և հասանելի եռ կառձիրը նոր մասին»<sup>2</sup>;

Հատկապես «Խելքից պատուհաս» կոմեդիայի  
բեմադրության փաստը, այն էլ Երևանի բերդի  
պարսիկ սարդարի պալատում և հենց ոռւս սպա-  
ների ուժերով՝ նշանակալից Երևույթ է մի շարք  
հանգամանքներով:

Ինչպես հայտնի է, ցարական գրաքննությունը արգելել էր «Խելքից պատուհաս» կոմեդիայի բեմադրությունը, որը դիմակապերծ էր անում աղնը-վական-կալվածատիրական Ռուսաստանի շինովնիկական բյուրոկրատական աշխարհը։ Կոմեդիայի հեղինակը՝ Ա. Ա. Գրիբուենը մեծ մասնակցու-



թյուն էր ունեցել պարսկական լծից Արևելյան Հայաստանի ազատագրման մեջ և ոռւա հասարակության առաջավոր շատ մարդկանց հետ պարզեատրվել էր «Երևանի բերդի առումը» մեղալով<sup>1</sup>: «Խելքից պատուհասի» առաջին բեմադրությունը նախ և առաջ վկայում է այդ պիհեսը բեմադրող սիրողների պրոգրեսիվ տրամադրությունների մասին, այն խոր հարգանքի մասին, որ նրանք տածում էին գետի մեծ հեղինակը: Այդ բեմադրությունը մի պայծառ երևույթ էր նիկոլաևյան ռեակցիայի խավար ֆոնի վրա, — երևույթ, որը շատ ազնիվ զգացումներ արթնացրեց Հանդիսատեսների մեջ, քանի որ նրանց սրտերում գեռնես վառ էր դեկաբրիստների՝ լավագույն ապագայի այդ մարտիկների, ապստամբության հիշատակը:

Ներկայացման հրատապությունը պարզ էր և Հայաստանի համար. Կոմեղիայի գաղափարական էությունը համապատասխանում էր այն պայքարի ողջ բովանդակությանը, որ մղում էր հայ ժողովուրդը պարսիկ ասիմիլյատորների և կեղեքիչների դիմ: Վերջապես «Խելքից պատուհասի» առաջին բեմադրության փաստը Երևանում, Սովետա-

<sup>1</sup> Տես Գ. Պարսամյանի «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին» հոդվածը, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկադիր», Երևան, 1954, № 10, էջ 15:

կան Հայաստանի ապագա մայրաքաղաքում՝ առանձնապես թանկ է հայ ժողովրդի համար, որ չի մոռանում իր հավատարիմ բարեկամ Ա. Ս. Գրիգորեգովին, որն այնքան շատ բան արեց պարսկական տիրապետությունից հայերին ազատագրելու համար: «Խելքից պատուհաս» կոմեղիան հետագայում առավել ևս մեծ գեր խաղաց քննադատական ռեալիզմի համար հայ թատրոնի մղած պայքարում, մի դեր, որն ըստ էության, սկսվեց Արեվելյան Հայաստանի ազատագրության առաջին իսկ օրերից:

Այդ բեմադրությունը շատ մեծ նշանակություն ունի նաև այն պատճառով, որ նա ժամանակի տեսակետից Ա. Ս. Գրիգորեգովի կոմեղիայի առաջին բեմական մարմնավորումն է, որովհետեւ, ինչպես հայտնի է, ոստական կայսերական բեմում «Խելքից պատուհաս» կոմեղիան ներկայացվեց 1831 թվականից, իսկ ծայրամասերի թատրոններում՝ միայն 1863 թվականից: Ի նշումն այդ հիշարժան թվականի — Ա. Ս. Գրիգորեգովի անմահ կոմեղիայի առաջին բեմադրման — Երևանում հուշատախտակ է փակցված այն շենքի վրա, որ կառուցված է այժմ ճիշտ այն տեղում, որտեղ գտնվում էր սարդարի պալատը Երևանի բերդում, որտեղ և կայացել էր կոմեղիայի անդրանիկ բեմադրությունը:

Դժբախտաբար, «Խելքից պատուհասի» 1827 թվականի բեմադրության և գրիբոեդովյան կոմիդիայի բեմական պատմության ուսումնասիրման համար այդ նշանակալից փաստը հարկ եղած չափով չի գնահատվում կամ պարզապես ինչ-որ տարօրինակ մոռացության է մատնվում սովետական մի քանի թատերագետների կողմից։ Այսպես, օրինակ, պրոֆ. Վ. Ա. Ֆիլիպովի վերջերս լույս տեսած բրոցյուրում, որը նվիրված է «Խելքից պատուհասի» պատմությանը ուսւ բեմում, ճիշտ է, հաստատվում է, որ «1827 թվականին նեթագրովում էր կոմեդիայի բեմադրությունը Երևանում, սակայն իշխանությունը, իմանալով ներկայացման մասին, այն արգելեց»<sup>1</sup>։ Հեղինակը, սակայն, մոռանում է ավելացնել, որ մի ներկայացում համենայն դեպք կայացավ։

Թատերագետ Ռուբեն Զարյանը, այս առթիվ բանավեճի մեջ մտնելով պրոֆ. Վ. Ի. Ֆիլիպովի հետ իրավացիորեն նկատում է. «Գրիբոեդովի հիշատակն այնքան նվիրական է մեզ համար, որ նրա անվան հետ կապված յուրաքանչյուր փաստ պահանջում է հոգատար վերաբերումնք և խորա-

գույն ուշադրություն։ Եվ ամեն մի անբարեխողձություն, թեկուզ և աննշան փաստի նկատմամբ, ոչ միայն վիրավորական է մեծ գրողի հիշատակի համար, այլև մի որոշ իմաստով խանգարող արգելք նրա թողած ժառանգության և այդ ժառանգության հետ կապված պատմության գիտականորեն հիմնավորված ուսումնասիրության գործում»<sup>1</sup>։

Դրանից հետո «Խելքից պատուհասը» բեմադրվել է 1828 թվականին, Թիֆլիսում, Ներսիսյան հոգևոր դպրոցում։ Ուսաերեն խաղացված ներկայացմանը մասնակցել են Հայեր և ոսուներ՝ դեներալ Հախվերդյանի և Ալեքսանդր Շավաճաճեկի ընտանիքների անդամները։ Ա. Ա. Գրիբոեդովը անձամբ ակտիվ մասնակցություն է ունեցել այդ ներկայացման նախապատրաստմանը և փորձերի ժամանակ ամեն կերպ օգնել է սիրողներին իր ցուցմունքներով։ Այսպիսով, կարելի է ասել, որ այդ բեմադրության ոեթիսուրան այս կամ այն շափով կատարել է հենց ինքը՝ մեծ կոմեդիագիրը։ Հանձարեղ հեղինակի մասնակցությունը այդ ներկայացման նախապատրաստմանը՝ տալիս է նրան առավել ևս մեծ արժեք։

<sup>1</sup> Ռուբեն Զարյան, Պայքար ուսւ դրամատուրգիայի համար հայ թատրոնում, Հայութեանքատ, Երևան, 1954, էջ 18։

<sup>1</sup> Проф. В. И. Филиппов, „Горе от ума“ А. С. Грибоедова на русской сцене, Изд. „Знание“, Москва, 1954, стр. 6.

Շուտով, 1832 թվականին, Ա. Ս. Գրիբոեդովի կոմեդիան մի անգամ ևս բեմադրվում է Անդրկովկասով, դարձյալ թիֆլիսում և նորից սուսերեն լեզվով, նույն հայկական հոգմոր դպրոցի դաշիճում: Ներկայացմանը մասնակցել են թատերական սիրողներ՝ սուսներ, հայեր, վրացիներ: Այսպես, օրինակ, Զացկու դերը խաղացել է Դ. Զուբարյովը, Զամուսովի դերը՝ Մ. Ղամազյանը, իսկ Սկալովուրինը՝ Ռ. Բագրատիոնը<sup>1</sup>:

Ա. Ս. Գրիբոեդովի կոմեդիայի սուսերեն այդ ներկայացումների մեջ Անդրկովկասով, որոնց մասնակցում էին նաև հայերը, — մենք հաստատում ենք, որ, իրոք, հայ սիրողական թատրոնի գործիչները խորը կերպով ծանոթ էին իրենց ժամանակակից ուսւ դրամատուրգիայի լավագույն երկերին: Իսկ դա, անկասկած, կարեւոր նշանակություն ուներ հայ-սուսական թատերական կապերի ամրապնդման համար: Դրա հետ միասին բերված փաստերը ապացուցում են այն ժամանակվա մուսաստանի ժողովուրդների —

<sup>1</sup> «Եկեղից պատռհասի» այս և նախորդ բեմադրությունների մանրամասնությունների մասին տես Ռ. Զարյանի հոդվածներում՝ հրատարակված «Սովետական հայաստան» թերթի 1945 թ. հունվարի 6-ի ու 16-ի համարներում և «Գրական թերթի» 1951 թ. մայիսի 28-ի համարում:

ուսաների, հայերի և վրացիների — բեմի և գրականության առաջավոր գործիչների ստեղծագործական մոտիկությունը և համամտությունը:

Այս փաստերը մեծ նշանակություն են ստանում հայ կուլտուրայի պատմության ուսումնասիրության համար նաև նրանով, որ դրանք, հայ սիրողական թատրոնի ներկայացումների հետ միասին, վկայում են հայ իրականության մեջ գոյություն ունեցող լուսավորական հոսանքի մասին, որի արտահայտություններից մեկն էլ անշուշտ հենց այդ բեմադրություններն էին:

Ա. Ս. Գրիբոեդովի «Խելքից պատռհաս» և ն. Վ. Գոգոլի «Մեկգոր» հիմնալի սատիրական կոմեդիաները խոր սկզբունքային դեր խաղացին հայկական դրամատուրգիայում և թատրոնում XIX դարի 40-ական և 50-ական թվականներին առաջացած և հետագայում, 60-ական թվականներին զարգացած քննադատական ուելիզմի մեջ: Հենց այդ երկելի կոմեդիաների ազդեցության տակ էր գրված 1842 թվականին Գալուստ Շերմազանյանի «Նկարագրությունք ինչ-ինչ գործոց Կարապետ եպիսկոպոսի» սատիրական պիեսը, որ դիմակազերծ էր անում ցարական շինովնիկներին, հայ հոգևորականությանը և վաճառականությանը: Եվ բոլորովին պատճեական չէ, որ «Նկարագրությունք ինչ-ինչ գործոց Կարապետ եպիսկոպոսի»

պիեսի բեմադրությունը շուտով արգելվեց, իսկ ինքը՝ հեղինակը հաւածանքի ենթարկվեց:

Հայ գրամատուրգների ոռւսական կովտուրայի հետ ունեցած շփման հետևանքներն զգացվում էին նաև այդ հեղինակների մի քանի երկերում. այդպիս է, օրինակ, Խաչատուր Աբովյանի «Ձեռդրա կամ որդիական սեր» (1841) պիեսը, որի գլխավոր հերոսուհուն՝ Ֆեռդրա անունով ոռւս աղջկան՝ հեղինակն օժտել է խոր մարդասիրության, անձնազոհության և հոգու կայունության բարձր հատկություններով:

Ժամանակակից հայ թատերագիտության առաջցումը նույնպես կապված է 20—30-ական թվականների ոռւս առաջավոր հասարակական մտքի բարերար ազդեցության հետ, Մոսկվայի համալսարանի, ոռւս մեծ ունվագիչուներ-դեմոկրատ Վ. Գ. Բելինսկու անվան հետ, որի երկերը փոքր դեր չեն խաղացել հատկապես սկսած 60-ական թվականներից՝ հայկական ռեալիստական թատրոնի զարգացման մեջ:

20-ական թվականների վերջին և 30-ական, թվականների սկզբին Մոսկվայի համալսարանում, Վ. Գ. Բելինսկու, Ա. Ի. Գերցենի, Ն. Պ. Օգարյովի և ուրիշների հետ սովորել են ոչ քիչ թվով հայեր<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Ռուս Օգանոսյան, Հայության պատմության առաջնային գործականությունները՝ առաջնային գործականությունները, Երևան, 1952, էջ 25.

Դրանց թվում էր նաև Սարգիս Տիգրանյանը (1812—1873), որն ընդունվել էր համալսարան 1829 թվականին և սովորել Վ. Գ. Բելինսկու հետ՝ ֆիլոլոգիական ֆակուլտետում։ Սարգիս Տիգրանյանը ակտիվ կերպով մասնակցում էր ուսանողական գրական խմբակում, որի շունչն ու հոգին էր ոռւս հանճարեղ քննադատը։

Սարգիս Տիգրանյանի սերը գեպի թատերական արվեստը արտահայտվում է նրանում, որ նա, հայ ուրիշ ուսանողների հետ միասին (թ. Խաղամյան և ուրիշներ) մասնակցում է գրամատիկ խմբակի ներկայացումներին, իսկ 1832 թվականին գրած և 1834 թվականին հրատարակած Ծասինի «Գողգոթիա» ողբերգության իր թարգմանությանը կցում է դրամայի պատմության և թերիայի մասին մի մեծ առաջաբան, որի մեջ, ինչպես մատնանշում են այս հարցի սովորական ուսումնասիրողներ՝ պոտֆեսորներ Ա. Արշարունին և Ռ. Հովհաննիսյանը, Ս. Տիգրանյանը արծարծում է նույն հայացքները, ինչ որ Վ. Գ. Բելինսկին՝ «Գրական երազանքներում»<sup>1</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Ռուս Օգանոսյան, Հայության պատմության առաջնային գործականությունները՝ առաջնային գործականությունները, Երևան, 1952, էջ 25. Ա. Արշարունունու ձեռագրը՝ «Մի էջ հայ թատերագիտական մաքի պատմություններ», պատրաստված տպագրության՝ ՀՍՍՌ ԳԱ Արգևուների պատմության և ահսության սեկտորի կողմից։

Սարգիս Տիգրանյանի այս աշխատության նշանակությունը հայ-ռուսական թատերական կապերի ամբապնդման համար կայանում է նրանում, որ այնուեղ խոսվում է նաև ոռւս գրականության նախապուշկինյան շրջանի, հատկապես Ա. Սումարոկովի, Յա. Կնյաժնինի, Վ. Օզերովի գրամատուրգիայի մասին։ Նշանակալից է, որ հիշյալ դրամատուրգների երկրից ամենաբարձր տեղը նա հատկացնում է Վ. Օզերովի ողբերգություններին՝ նրանց ազատափրության և հայրենասիրության համար, այդպիսով, հրապարակ գալով, ոռւս պաշտոնական քննադատության դեմ, որը Ա. Սումարոկովին համարում էր ոռւսական Շեքսպիր<sup>1</sup>:

Ա. Տիգրանյանի այդ աշխատությունը ոչ մի-այն ոռւս գրամատուրգիայի առաջին գնահատականն էր հայ թատերագիտական մտքի կողմից՝ գրված Վ. Գ. Բելինսկու գաղափարական ազդեցության տակ, այլև նա «այն տարիներին, երբ Հայաստանը նոր էր միայն մտել ոռւսական պետության կազմի մեջ, ոռւս և հայ ժողովուրդների բարեկա-

<sup>1</sup> Տես Ու. Զարյանի «Մուսա-հայ գրական կապերի շուրջը» հոդվածը «Սովետական գրականություն» և արդեստամասպում, Երևան, 1950, № 6, էջ 131—136 և Ու. Հովհաննիսյանի վերեւում հիշած դիրքը, էջ 26.

մությունը ամրապնդող մի օղակ հանդիսացավ<sup>1</sup>:

Ինչ վերաբերում է հայ թատրոնի ստեղծագործական կյանքին, ապա նա XIX դարի 50-ական թվականներին աճեց և զարգացավ ավելի սերտ գործակցության մեջ մտնելով ոռւս առաջավոր թատրոնի հետ, քան այդ տեղի ուներ 30-ական թվականներին։

Եթե 30-ական թվականների սկզբին Մոսկվայի համալսարանի ներսում ծագում է հայ թատերագիտական միտքը և ներկայացումներ են տըրմում հայ ուսանողների մասնակցությամբ, ապա 50-ական թվականները նշանավոր դարձան այդտեղի իսկ հայ կենցաղային գրամատուրգիայի երեան գալով, համալսարանի ուսանողներ Հովհաննես Գուրգենիքյանը, Նիկողայոս Ալավաթյանը, Անանիա Սովթանշահը, Միքայել Պատկանյանը, Նիկողայոս Փուղինյանը և ուրիշները գրում են մի շարք պիեսներ և հենց իրենք էլ խաղում թատերասեր հայ ուսանողների հետ։ Սուս հետ միասին երեան են գալիս նաև ոռւս գրամատուրգիայից փոխադրված պիեսներ։ Այսպես, օրինակ, բժշկական ֆակուլտետի ուսանող Անանիա Սովթանշահը 1859 թվականին վերափոխելով Ս. Ֆեոդորովի պատճենությունը առաջին անգամ ներկայացրել է առաջական գրականություն և արքեստում, 1950, № 6, էջ 138։

<sup>1</sup> Ու. Զարյան, Առաջայ գրական կապերի շուրջը, «Սովետական գրականություն» և արքեստում, 1950, № 6, էջ 138։

դորովի «Գաստիարակներ» ողիեսը, գրում է «Հայոց ազգի լուսավորիչք» կոմեդիան, ուր դիմակազերծ է անում հայ հոգևորականությանը:

Հայ թատրոնի պատմության մեջ, Մոսկվայի Համալսարանի նման, կարևոր գեր խաղաց նաև Մոսկվայի Արեելյան լեզուների Լազարյան ճեմարանը, որի սաները նույնպես պիեսներ էին գրում և ներկայացումներ կազմակերպում։ Հայերեն պիեսների հեղինակների շարքում էր նաև Ճեմարանի ուսանող Սմբատ Շահազիզը, որ հետագայում դարձավ հայ աշքի ընկնող դեմոկրատ-բանասեղծ։

Լազարյան ճեմարանում հայերեն ներկայացումներ կազմակերպելու համար լուրջ նշանակություն ունեցավ Մոսկվայի Համալսարանի հայ ուսանողների օրինակը։ Հայկական թատեռական սիրողական խմբերի ներկայացումները թե՛ համալսարանում և թե՛ ճեմարանում սկզբնական շրջանում փակ բնույթ էին կրում, սակայն հետագայում այդ խմբերը միացան և այնուհետև նրանք ելույթներ էին ունենում քաղաքի թատրոններում, որոնցից մեկն էր Սեկրետարյունի մասնավոր թատրոնը<sup>1</sup>, թեմադրություններին մասնակցում էին

<sup>1</sup> Տես Ա. Արքարունի, Մոսկվայի Համալսարանի հայ ուսանողները XIX դարի 50—60-ական թվականներին, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», Երևան, 1954, № 9, էջ 66,

ուսանողները, որոնցից շատերը հետագայում աշխատ ընկնող գեր խաղացին 60-ական թվականների հայ պրոֆեսիոնալ թատրոնում (Ս. Մանդինյան, Ն. Ալաղաթյան, Վ. Շահիսահպենյան, Ն. Փուղինյան, Մ. Պատկանյան և ուրիշներ):

Կարևոր է հիշատակել, որ նշված հայ սիրողական խմբերը ներկայացումներ էին տալիս նաև ուսանողներին լեզվով, իսկ հայկական ներկայացումներին հաճախ մասնակցում էին ուսանող և վրացիներ։

Մոսկվայի Հայկական թատրոնի գործունեության համար այդ տարիներին բարերար էր հենց Մոսկվայի թատերական կյանքի մթնոլորտը, ուսանողների, առաջին հերթին Փոքր թատրոնի՝ ոեալիստական արվեստի բարձր օրինակը։ Դրամատուրգ Հովհաննես Գուրգենիկյանը հիշում է. «Ուսանող ժամանակս Մոսկվայում բնակվում էի Փոքր թատրոնի կառավարչի մոտ, հենց թատրոնում և նրա ընտանիքի հետ ներկայացումներին անընդհատ հաճախում։ Ահա այդ ներկայացումների տպավորության տակ փորձեցի պիեսներ գրել»<sup>1</sup>։

Փոքր թատրոնի հոչակավոր դերասան Պրով Սադովսկին, Հավանորեն և ուրիշները, անկասկած հաճախում էին լազարյան ճեմարանի սանե-

<sup>1</sup> «Հուշարձան», Թիֆլիս, 1908, № 15—16, էջ 244.

րի կազմակերպած ներկայացումներին<sup>1</sup> և պետք է հնթագրել, որ նրանք իրենց խորհուրդներով օգնում էին երիտասարդ սիրող-դերասաններին:

Պրոֆ. Ա. Արշարունին իրավացիորեն նշում է, որ «Հայ դրամատուրգիայի մոսկովյան դպրոցը» զարգանում էր ոռա ռեալիստական դրամատուրգիայի ոգով և հակայական դեր խաղաց 60-ական թվականներին Գաբրիել Սուլդովյանի դրամատուրգիայի երևան գալու գործում<sup>2</sup>: Մենք դրան կավելացնենք, որ նշված տարիներին հայկական ներկայացումները Մոսկվայում միևնույն ժամանակ նաև դերասանական արվեստի ռեալիստական դպրոց էին, որտեղ դերասաններ էին դաստիրակվում Մ. Ս. Շեպիկինի և Պ. Ա. Մոշալովի տրադիցիաներով և կազմակորվում էր 60-ական թվականների հայ երեկի դերասանների՝ Գևորգ Զմշկյանի, Միհրդատ Ամրիկյանի, Սեդրակ Մանդինյանի և այլոց փայլուն ստեղծագործությունը:

Մոսկվայում կայացած այդ ներկայացումները անպայման նշանակություն ունեին հենց բուն Անդրբկովկասում ևս հայկական սիրողական խմբեր կազմակերպելու գործում, ընդ որում այստեղ ևս

<sup>1</sup> ՏԵ՛Ռ ՀՀուշաբարք, Թիֆլիս, 1913, № 4:

<sup>2</sup> ՏԵ՛Ռ Ա. Արշարունինի, Մոսկվայի համալսարանի հայ ուսանողները XIX դարի 50—60-ական թվականներին, հայկական ՍՍՌ ԳԱ, «Տեղեկադիր», 1954, № 9, էջ 87:

խոշոր դեր խաղաց 1845 թվականից գոյություն ունեցող՝ Թիֆլիսի ոռուսական դրամատիկ թատրոնը:

Տասնիններորդ դարի առաջին կեսում սուսական թատրոնում, ինչպես հայտնի է, կատաղի պայքար էր գնում ռեալիզմի-պահպանողական և պրոգրեսիվ-դեմոկրատական հոսանքների միջև։ Թատրոնի առաջավոր գործիչները՝ Վ. Գ. Բելինսկու գաղափարական դեկավարության ներքո հրապարակ էին գալիս Ն. Պոլեվոյի, Ն. Կովոլնիկի և ալլոց ուշ-գեղարվեստական, կեղծ-հայրենասիրական դրամատուրգիայի դեմ և պայքարում էին բեմի վրա Ն. Վ. Գոգոլի և Ա. Ս. Գրիբոեդովի՝ սոցիալական կյանքի արատները դիմակագերծ անող ռեալիստական դրամատուրգիան հաստատելու համար։

Ոռա թատրոնում ծավալվող ահա այդ սկզբանքին պայքարն իր արտահայտությունը գտավ նաև այդ ժամանակ հիմնված հայկական թատրոնում։ Այդ պայքարը մղվում էր հայ ռեալիստական արվեստի համար ժարտնչողների և այդ արվեստի հակառակորդների միջև։ Տասնիններորդ դարի առաջին կեսին հայ թատրոնում ծայր առած այդ պայքարը ուժեղանում է հետեւյալ տասնամյակներում և XX դարի սկզբում։ Այդ

ամբողջ ժամանակաընթացքում հայ բեմի պրոգրեսիվ գործիչները մասնակցում են այդ պայքարին՝ քննադատական ռեալիզմի արվեստի դրոշի տակ:

Պետք է ասել, որ այդ պայքարը ծավալվում էր հայ թատրոնի ռեպերտուարի ուղղության համար: Բանն այն է, որ չնայած հայ թատրոնում բեմադրվում էին կլասիցիզմի ոգով գրված հայերեն կեղծ-պատմական ողբերգություններ, այնուամենայնիվ հենց այդտեղ էլ միաժամանակ խաղացվում էին և դեմոկրատական, կենցաղային բնույթի պիեսներ:

Այս տեսակետից առավել բնորոշ օրինակ կարող է լինել Հակոբ Կարենյանի (1809—1872) և Միքայել Պատկանյանի (1808—1896) սիրողական թատրոնների միջև թիֆլիսում՝ 50-ական թվականների վերջում մղվող պայքարը, որը կրում էր սուր բնույթ, բանավեճը ծավալվում էր «Մեղու Հայաստանի» թերթի էջերում:

Հակոբ Կարենյանի ռեակցիոն թատրոնը ձրգում էր բեմադրել գրաքարով գրված, հայկական կեղծ — պատմական կլասիցիստական ողբերգություններ՝ հայտարարելով, որ հայկական իրականության թերությունները բաց անող ժամանակակից թեմաներով կենցաղային պիեսները միայն «միրավորում» են հայերին: Մինչդեռ Միքայել

Պատկանյանը, որն իր կրթությունը ստացել էր Մոսկվայի համալսարանում, իր թատրոնում աշխատում էր բեմադրել գլխավորապես ինչպես իր, այնպես և ուրիշ դրամատուրգների աշխարհաբար լեզվով գրած ժամանակակից կենցաղային կոմեդիաները:

Այս, իհա՛րկե, չի նշանակում թե Միքայել Պատկանյանը պատմական պիեսներին հակառակ էր: Այս նշանակում է միայն, որ նրա կարծիքով դրանք ես իրենց բովանդակությամբ ինչ-որ ձևով պետք է արձագանքեն արդիական կյանքի հրատապ հարցերին:

Բանավեճի մեջ մտնելով Հակոբ Կարենյանի հետ՝ ժողովրդի կյանքում թատրոնի ուղղության, դերի և նշանակության հարցի շուրջը, Միքայել Պատկանյանը հենվում էր այդ հարցերի մասին Վ. Գ. Բելինսկու «Գրական երազանքներ», «Եվ իմ կարծիքը Պ. Կարատիգինի խաղի մասին» ու այլ հոդվածներում արտահայտված մտքերի վրա, և առաջին անգամ հայկական թատերական քննադատության մեջ հիշատակում էր զրանք: Վ. Գ. Բելինսկու պրոգրեսիվ-դեմոկրատական հայացքները լուրջ օգնություն են ցուց տալիս և ամուր հենարան են հանդիսանում սկզբունքային այն կարևոր պայքարում, որ մղում էր Միքայել Պատկանյանը Հակոբ Կարենյանի դեմ՝ ի պաշտպանություն նոր,

կենցաղային, ժամանակակից թատերգության, ի պաշտպանություն հայկական ժամանակակից իրականության բացասական կողմերը քննադատող կոմեդիայի: Վ. Գ. Բելինսկու քննադատական գործունեությունը օգնում էր Միքայել Պատկանյանին այն հիմնական աշխատանքում, որ նա կատարում էր իր թատրոնի բեմում ռեալիզմը հաստատելու ուղղությամբ<sup>1</sup>:

Սոցիալական կյանքի արատները ծաղրող ժամանակակից կենցաղային կոմեդիայի համար մղած իր պայքարում Միքայել Պատկանյանը հենվում է ուստի ռեալիստական, սատիրական դրամատորգիայի հարուստ փորձի վրա: Պաշտպանվելով Հակոբ Կարենյանի մեղադրանքներից այն մասին, թե նրա՝ Պատկանյանի «Մոցիքուլ» կոմեդիան վիրավորական է հայ ազգի համար և որ, իբր, այդ կոմեդիայի հեղինակը «չի սիրում իր ժողովրդին»՝ Միքայել Պատկանյանը իրավացիորեն նկատում է, որ Ա. Ս. Գրիբոեդովը, որ անխնադիմակաղերծ էր անում բարձր դասի բարքերը, այնուամենայնիվ, նվիրված ու շերմորեն սիրում էր իր հայրենիքը:

<sup>1</sup> Վ. Գ. Բելինսկու դերը հայ թատրոնի գարդացման մեջ՝ մանրամասն քննադատում է Բ. Հովհաննեսի հոդվածում, հայկական ՍՍՌ Գեղարվագի 1954, № 2, էջ 51—63:

Ուսակցիոն ուղղությունների դեմ մղած հայ թատրոնի պրոգրեսիվ գործիչների ակադիվ պայքարը, այդպիսով, երկան էր հանում նաև թատրոնի գերի և նշանակության մասին հայ հասարակական մտքի հակամարտ հոսանքների տարրեր ըմբռումները:

Այսպիսով, այն ժամանակաշրջանում, որը Հայաստանում նշանավորվեց լուսավորիչների շարժումով և ըստ ժամանակի զուգադիպեց Ռուսաստանի ազատագրական շարժման ազնվականական շրջանին՝ առաջ են գալիս հայ-ռուսական թատերական կապերը, որոնք առավել ևս ամրապնդեցին և ծավալվեցին ուստի ազատագրական շարժման զարգացման հետագա ժամանակաշրջաններում:

Ուստի առաջավոր թատրոնի ազգեցության տակ մեր նշած տարիներին ձևավորվում է հայկական սիրողական նոր թատրոնը, ստեղծվում է հայ կենցաղային ռեալիստական դրամատորգիան, երեան են գալիս հայ թատերագիտական առաջին աշխատանքները, որոնցում հիմնականում ճիշտ գնահատական է տրվում ուստի գրականությանը, գրամատորդիային և թատերական քննադատությանը: Հայ ռեալիստական թատրոնի համար այդ տարիներին ծավալված պայքարը ստեղծում է մի ռե-

պերտուար, որ ճշմարտացիորեն արտացոլում էր ժամանակակից հայ կյանքը և նախապատրաստում 60—70-ական թվականներին ծնունդ առած քննադատական ոհալիզմի հայ գրամատուրգիան:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

(1861—1895)

### 1

Վաթունական թվականների սկիզբը չափազանց կարեռ՝ բեկման մոմենտ էր Ծուսաստանի պատմական գարգացման մեջ: 1861 թվականը Ճորտատիրական իրավունքի վերացման տարի էր: Այդ գյուղացիական պոչատ «բարեփոխությունը», որը Ն. Գ. Զերնիշևսկին անվանել է «նողկալի», այդ տիրահռչակ «ազատագրումը», որը «...գյուղացիների ամենաանխիղճ թալանումն էր, բռնությունների շարան և կատարյալ ծաղրանք էր նրանց նկատմամբ»<sup>1</sup>, այնուամենայնիվ, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, որոշ պրոգրեսիվ դեր խաղաց, քանի որ տապալվեց Ծուսաստանում կապիտալիզմի գարգացումը կասեցնող Ճորտատիրական իրավունքը:

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, երկեր, համ., 17, էջ 130:

1861 թվականից հետո Հայաստանում ևս սկսվում է կապիտալիստական հարաբերությունների աստիճանական զարգացումը: Ակտիվանում է հայ գյուղի շերտավորման պրոցեսը: Եկեղեցու հովանավորությամբ գյուղական բուրժուազիան է՛լ ավելի է ուժեղացնում՝ գյուղացիության դաժան կեղեցումը: Բացի այդ, հայ ժողովուրդը, Ռուսաստանի կայսրության այլ ժողովորդների հետ միասին, ապրում է ազգային ճնշման ամբողջ ծանրությունը և, ինչպես ցարական Ռուսաստանի նյութականացման ազգային առաջնային գործադրությունը և առաջնային առաջնությունը:

Վաթումնական թվականներին ուժեղանում է հայկական կուլտուրայի գործիչների հետաքրքրությունը դեպի ռուսական գրականությունը և արվեստը. հայ մամուլը պարբերաբար պրոպագանդում և տարածում է ռուսական արվեստի ստեղծագործությունները: Սակայն այդ աշխատանքը տարվում է երկու ուղղությամբ՝ երկու տարրեր, հակոտնյա դիրքերից:

Եթե «Հյուսիսափայլ» ամսագրում հրապարակ էին գալիս առավելապես ռուսական առաջավոր գրականության պրոպագանդիստները, ապա պահպանողական «Մեղու Հայաստանի», «Կոռուկ Հայոց Աշխարհի», «Հայկական Աշխարհ» և մի քանի

այլ պարբերականներում ավելի հաճախ էին տպագրվում ռուսական ռոմանտիկական, միստիկական պոեզիայի նմուշները՝ դրանց հայ կողմանակիցների թարգմանությամբ:

Ռուսաստանում այդ տարիներին գաղափարաքաղաքական սուր պայքար էր գնում մի կողմից՝ Ռուսաստանը կացնի կոչող Ն. Գ. Զերնիշեսկու գլխավորությամբ ռեռլյուցիոններ-դեմոկրատների և մյուս կողմից՝ լիբերալների ու կատաղի ռեակցիոններների միջև: Արտասահմանում իրենց ռեռլյուցիոն ակտիվ գործունեություն են ծավալում Ա. Ի. Գերցենը և Ն. Պ. Օգարյովը:

Ռուս գրականության և արվեստի մեջ աննախընթաց ուժով երևան եկած այդ անհաշտ քաղաքական պայքարն իր արտացոլումը գտավ նաև հայ ժողովորդի կովտորայի, գրականության և արվեստի մեջ: Ռուս ռեռլյուցիոն-դեմոկրատներ Վ. Գ. Բելինսկու, Ա. Ի. Գերցենի, Ն. Գ. Զերնիշեսկու և Ն. Ա. Դոբրոլյուսի գաղափարական աղդեցության տակ զարգանում և ամրապնդվում է հասարակական առաջավոր միտքը: Այսպիս, օրինակ, հայտնի է, որ հայ մեծագույն ռեռլյուցիոններ-դեմոկրատ Միքայել Նալբանդյանի (1829—1866) հասարակական-քաղաքական հայացքների ձեւագործման վրա վճռական աղդեցություն է ունեցել

ուս ուռուցիոն-դեմոկրատների մատերիալիստական փիլիսոփայությունը և էսթետիկան։ Միքայել Նալբանդյանը Ն. Գ. Զերնիշևսկու և Ն. Ա. Դոբրոլյուբովի հետևորդն էր և զինակիցը դեռև Մոսկվայի համալսարանում ուսանելու տարիներին (1855—1859)։ Միքայել Նալբանդյանի գործունեությունը հայ ուռուցիոն-դեմոկրատական միտքն անքակտելի կերպով կապեց ուս ուռուցիոն-դեմոկրատիայի գաղափարների հետ։

Որպես թատերական քննադատ՝ Միքայել Նալբանդյանը գտնվում էր Վ. Գ. Բելինսկու գաղափարական անմիջական ազդեցության տակ, չնայած նրան, որ Միքայել Նալբանդյանի աշխատություններում ոչ մի տեղ չի հիշատակվում Վ. Գ. Բելինսկու անուանը։ Հայ ուռուցիոներ-դեմոկրատի մտքերը հասարակության զարգացման գործում թատրոնի ունեցած նշանակության, ունակութիւնի և ժողովրդային գրականության, ազգային դրամատորդիթայի, թարգմանական և կեղծ, կլասիցիստական դրամատորդիթայի մասին՝ շատ բաններով համընկնում են ուս մեծ քննադատի մտքերի հետ, որոնք արտահայտված են նրա «Թրական երազանքներ», «Ալեքսանդրինյան թատրոնը», «Թետրովյան թատրոնը», «Եվլիմ կարծիքը» Պ. Կարատիկինի մասին և այլ աշխատություննե-

րում։ Իր քննադատական գործունեության ընթացքում Միքայել Նալբանդյանը եղել է թատրոնի մասին Վ. Գ. Բելինսկու հայացքների իսկական խանդավառ պրոպագանդիստը՝ հայ իրականության մեջ<sup>2</sup>։

Հայ թատրոնին նվիրված Միքայել Նալբանդյանի հոդվածները տպագրվել են Մոսկվայում, «Հյուսիսափայլ» ամսագրում (1859) և Պոլսում՝ «Մելուա թերթում» (1861)։ Նալբանդյանի ելույթները հսկայական նշանակություն ունեցան հայ ունակության գրամատորդիթայի հետագա զարգացման և նոր ժամանակի պրոֆեսիոնալ հայ թատրոն հիմնելու համար։ Միքայել Նալբանդյանը առաջին հայ թատերական քննադատն էր այդ բարուի այժմեական հասկացությամբ։ Նա, ինչպես Վ. Գ. Բելինսկին ուսական իրականության մեջ, հրապարակ եկավ ուռուցիոն-դեմոկրատական հրապարակից հայկական կլասիցիզմի կեղծ-պատմադիրքերից հայկական կլասիցիզմի կեղծ-պատմական թույլ դրամաների գեմ, որոնց մեջ հեղինակները «...ամենայն բոպե, զանազան ազգասիրական խոսքերով» աշխատում են «վարագուրել դրամա-

<sup>1</sup> Այդ մասին մանրամասն տես Բ. Հովակիմյանի «Վ. Գ. Բելինսկին և հայ թատերական քննադատությունը», Հոդվածում, Հայկական ՍՍԾ ԳԱ «Տեղեկագիր», 1954, № 2, էջ 51—63։

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 56։

տիկական գործողության պակասությունը և չքավորությունը<sup>1</sup>, դերասանական արվեստի և դրամատուրգիայի մեջ էպիգոն ոռմանտիզմի և մելոդրամատիզմի դեմ, բոլոր նրանց դեմ, ով թատրոնը դիտում էր իրեն սոսկ զվարճության վայր<sup>2</sup>: Միքայել Նալբանդյանը ցուց տվեց թատրոնի հսկայական ուժը՝ հայ իրականության բացասական կողմերը զորավոր սատիրայի միջոցով դիմակալերծ անելու և հայ ժողովրդի հասարակական հնքնագիտակցությունը դաստիարակելու գործում:

Թատրոնի հասարակական նշանակության մասին Միքայել Նալբանդյանի մտքերն ու ասույթները համընկնում են Ա. Ի. Գիրցենի, Վ. Գ. Բելինսկու հայացքների հետ, որոնք իրենց հերթին անմիջականորեն ձայնակցում են ուսւ մեծ գրող Ն. Վ. Գոգոլի հայտնի խոսքերին, թե թատրոնը «դա այնպիսի մի ամբիոն է, որտեղից միանդամից մի ամբողջ հասարակության կենդանի դաս է կարդացվում...», ուր «...ցուց է տրվում ծանոթ, թաքնվող արատը» և «...երևան է հանվում ծանոթ, երկշուտությամբ թաքնվող բարձր զգացումը...»<sup>3</sup>:

<sup>1</sup> Միքայել Նալբանդյան, Երկերի լիակածքներ, 1945, հատ. 1, էջ 391:

<sup>2</sup> Նույն տեղում, հատ. 2, 1947, էջ 307:

<sup>3</sup> Н. В. Гоголь, Собрание сочинений, ГИХЛ, М., 1950, том VI, стр. 117.

«Թատրոնական բեմը, — գրում էր Միքայել Նալբանդյանը իր՝ «Ազգային թատրոնը Պոլսի մեջ» հոդվածում, — ստոր չէ ուսումնական ամբիոնից. թատրոնի բեմն է այն աթոռը, ուր նստում է փիլիսոփայությունը... թատրոնի բեմն է այն բարոյական ահեղ դատաստանը, ուր արդարությունը և հանցանքը առանց աշառության ստանում են յուրյանց արժանի հատուցումը»<sup>1</sup>:

Միքայել Նալբանդյանը հսկայական նշանակություն էր տալիս հայ թատրոնի ոեպերտուարին: Նա, ինչպես և Վ. Գ. Բելինսկին, պահանջում էր, որ թատրոնը վճռականապես հրաժարվի ուշ-գեղարվեստական, մելոդրամատիկ թարգմանական դրամատիկան բեմադրություններից և ստեղծի հասարակական առաջավոր իդեալները արտահայտող իր սեփական ինքնատիպ ոեալիստական գրամատուր-սեփական կամաց թատերգ, որ կարող է երկիր գիտական քաղաքներում, հարմար է որեիցն ելքոպական քաղաքներում, հարմար է հայկական բեմին»<sup>2</sup>, — գրում էր Միքայել Նալբանդյանը՝ նկատի ունենալով ելքոպական մելոդրամատիկան և ընտանեկան էժանագին դրաման:

Պայքարելով ոեալիզմի համար թատրոնում և

<sup>1</sup> Միքայել Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 2, էջ 308:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 310:

գրականության մեջ, Միքայել Նալբանդյանը  
հրապարակ էր գալիս որպես դրամատուրգիայի  
մեջ ժամանակակից ակտուալ թեմատիկայի կողմ-  
նակից: Ներսասանական արվեստի մեջ նա պահան-  
ջում էր ակտիվ մարտական ռեալիզմի զարգացում  
և ամրապնդում, պայօքարում էր բուրժուական  
արևելուարի պողոսությանը:

Միքայել Նալբանդյանի էսթետիկական հացագրները վճռական դեր են խաղացել հայ գրականության և արվեստի մեջ ուսալիղմբ հաստատելու գործում։ Հայկական սիրողական թատրոնը և դրամատուրգիան Մոսկվայի համալսարանում և Լազարյան ճեմարանում, շարունակում էին զարդարանալ 60-ական թվականներին ևս, երեսն են գալիս նոր դրամատուրգիներ՝ Գ. Երիցիովյան, Ա. Քիչմիջյան և ուրիշներ։ Այս զարգացող թատրոնն, ահա, իր ակտիվ ուսալիստական ուղղությամբ և արդիական ուսպերտուարով մեծապես պարտական է Միքայել Նալբանդյանի մարտական քննադատական գործունեությանը «Հյուսիսափայլ» էջերում, իսկ Պոլսում արևմտահայ թատրոնի հետագա անկումը ապացուց է Միքայել Նալբան-

<sup>1</sup> Տես Ա., Ար 2 աբունի, Սոսկվայի համալսարանի էայ ուսանողները XIX դարի 50—60-ական թվականներուն, չայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1954, № 9, էջ 64:

դպանի ասածների ջշմարտության և խորաթափան-  
ցովիլյան, որը «Մեղուա թերթի էջերից այդ թատրոնի  
գործիչներին նախազգուշացնում էր չհրապուրվել  
արևմտյան թատրոնի ցածրորակ ռեպերտուարով»:  
Մոսկվայի համալսարանի ուսանող Անանիա Սովո-  
թանշահը Միքայել Նալբանդյանի գաղափարա-  
կան անմիջական ազդեցության տակ և նրա օգնու-  
թյամբ է գրել «Հայոց ազգի լուսավորիչը» կոմե-  
դիան: Այդ պիեսը, ինչպես մենք արդեն հիշատա-  
կեցինք, մի հաջող վերափոխում էր Ս. Ֆեոդորովի  
«Պաստիարակներ» պիեսի, որը տպագրված էր  
Ն. Զերնիշեսկու գլխավորած՝ «Սովորեմեննիկում»  
(1858, № 9):

Միքայել Նալբանդյանը շատ բան է արել հայության մեջ գոգովան ուղղովիյունը հաստատելու համար: Նրա քննադատական գործունեությունը և անձնական օպնությունը Հեղինակներին նպաստում էին «Հյուսիսաֆայլի» էջերում այնպիսի երկերի երևան գալուն, ինչպիսին է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետի 23-ամյա ուսանող Գաբրիել Տեր-Հովհաննիսյանի (1837—1920) սատիրական «Տեր-Սարգիս» պատմվածքը:

<sup>1</sup> Збір. № 2 архівній, Університетські архіви  
засновані у кінці XIX століття 50—60-х роках, філія відкрита в 1954, № 9, б. 82.

գրված Ն. Վ. Գոգոլի «Մեռյալ հոդիների» անմիջական ազդեցության տակ:

Անհրաժեշտ է նաև հատկապես ընդգծել, որ Միքայել Նալբանդյանը բազմիցս մատնանշել է թատրոնի կարևոր դերը հայերեն գրական նոր լեզվի՝ աշխարհաբարի մշակման մեջ:

## 2

Կաթոնական թվականներին հայ թատրոնում քննադատական ռեալիզմի պայքարը գլխավորում էին հայ ռեալիստական դրամատորգիայի և թատրոնի հիմնադիրներ Գաբրիել Սունդուկյանը (1825—1912) և նշանավոր դերասան ու թատերական գործիչ Գևորգ Զմշշկյանը (1837—1915), որոնք իրենց արվեստի միջոցով շարունակում էին կենսագործել Միքայել Նալբանդյանի մեծ պատգամները: Հայ թատրոնի մյուս առաջավոր գործիչների հետ միասին՝ նրանք դարձան հայ պրոֆեսիոնալ նոր թատրոնի կազմակերպիչներն ու գաղափարական ղեկավարները (1863): Հայկական բեմական արվեստի այդ երկու կորիֆիկյների անձնական և զաղափարական բարեկամությունը նույն խոշոր նշանակությունը ունեցավ նոր ժամանակի հայ

<sup>1</sup> Տես Միքայել Նալբանդյան, Երկրորդ համար, 3, 1940, էջ 120,

ռեալիստական թատրոնի ստեղծման ու զարգացման համար, ինչ որ ոռու թատրոնի համար ուներ Ն. Վ. Գոգոլի և Մ. Ս. Շչեպինի, Ա. Ն. Օստրովսկու և Պ. Մ. Սադովսկու ստեղծագործական համագործակցությունը:

Հայկական թատրոնում Գաբրիել Սունդուկյանի «Խաթաբալայի», «Էլի մեկ զոհի», «Փեպոյի» և այլ պիեսների բեմադրությունը նշանավորեց թատրոնի և դրամատորգիայի զարգացման նոր ժամանակաշրջանի սկիզբը: Այդ երկերում հեղինակը ռեալիստորեն բաց է արել հայ իրականության մեջ գոյություն ունեցած ամենասուր հակասությունները և իր անողոք դատավճիռն է կարգացել շահագործող դասակարգերի նկատմամբ:

Հայ մեծ դրամատորգի ստեղծագործությունը հագեցված էր կինսական ջշմարտացիությամբ, իր ժամանակի հայ հասարակության կյանքի բոլոր կողմերի խոր ձանաշողությամբ: Իր վարպետությամբ և գաղափարական ուղղությամբ նա տությամբ և գաղափարական ուղղությամբ նա շատ բանով կապված էր ոռու առաջավոր հասարակական մտքի, ոռու ռեալիստական դրամատուրգիայի և թատրոնի հետ:

Ինչպես արխիվային նոր և հետաքրքրական տվյալների հիման վրա դրամատորգի ստեղծագործության մասին գրված իր ծավալուն մոնոգրաֆիայում համոզի կերպով ապացուցել է պրոֆե-

սոր Գևորգ Աբովը՝ «Սումդուկյանի գրական, հասարակական ըմբռնումները ձևավորվել են Գեղցինի, Բելինսկու, Գրիբոեդովի, Պուշկինի, Գոգոլի ստեղծած մեծ տրադիցիաների ազդեցությամբ»<sup>1</sup> տակավին Պետերբուրգի համալսարանում նրա ուսանած տարիներին (1846—1850):

Իր իսկ Գաբրիել Սունդուկյանի խոստովանությամբ՝ նա շատ բանով պարտական է եղել ուս ռեալիստական թատերական արվեստին և նրա մեծ ներկայացուցիչներ՝ Ա. Ս. Գրիբոեդովին, Ն. Վ. Գոգոլին և Մ. Ս. Շչեպկինին:

1898 թվականի սեպտեմբերի 30-ին Ցուրի Վեսելովսկոն գրած իր նամակում հայ մեծ գրամատուրը հիշում է, որ Ալեքսանդրինյան թատրոնում նրան Ա. Յ. Մարտինովի և ուրիշների հետ միասին՝ իր խաղով «ապշեցրել» էր «Մոսկվայից եկած» Մ. Ս. Շչեպկինը: «Շչեպկին-Ֆամուտովը, — շարունակում է նա, — այժմ էլ աշքերիս առջևն է, և ինձ թվում է, որ ես այժմ լսում եմ նրա ձայնը, թեև դրանից հետո անցել է ավելի քան հիսուն տարի»<sup>2</sup>:

<sup>1</sup> Գ. Ա. Պովլ. Գաբրիել Սունդուկյան, Հայոցի հրատ, Երևան, 1953, էջ 45.

<sup>2</sup> Տիգրի Գևորգովովու. «Կ հարաբերական առաջարկած կուլտурного воздействия русской словесности» Հոդվածը, «Русские ведомости», М., 1904, № 313.

1909 թվականին Մոսկվայում Ն. Վ. Գոգոլի հուշարձանի բացման կապակցությամբ հոբելյանական հանձնաժողովը հրավիրում է նաև Գաբրիել Սունդուկյանին: Մերացած դրամատուրգը, չկարողանալով մեկնել Մոսկվա՝ տոնակատարությանը մասնակցելու, պատասխանում է. «Այժմ ութուններեք տարեկան եմ: Մտքով գնում եմ այն հեռավոր ժամանակը, երբ ուսանող էի Պետերբուրգուրգում և Քաղաքապետի դերում տեսա հանդուցյալ Շշեպկինին: Այդ ժամանակ խորացավ և ամրապնդեց իմ անսահման սերը դեպի թատրոնը, որին ես նվիրեցի իմ լավագույն տարիները, որին տվեցի իմ երկերը, իմ հոգու մասնիկները, իմ մտքերը և զգացումները: Գոգոլի անվան հետ են կապված իմ լավագույն հիշողությունները. այդ անվանը ես քիչ չեմ պարտական իմ սիրով դեպի թատրոնը: Ահա ինչու ամենախորին հարգանքի զգացումով խոնարհվում եմ «Մեյյալ Հոգանքի զգացումով» հեղինակի հուշարձանի առջև և հեռավոր Կովկասից սրտագին ողջույն եմ հղում տոնակատարություն, կազմակերպիչներին, տոնակատարություն, որ հավասարապես թանկ է Ռուսաստանի բոլոր քաղաքացիների համար, առանց ազգի բոլոր քաղաքացիների համար, առանց ազգի խորության»<sup>1</sup>:

<sup>1</sup> „Զակավազье“, Տիֆլիս, 1909, № 461. Այս և նախկին նամակը մեջբերվում է՝ Գաբրիել Սունդուկյան,

Գաբրիել Սունդուկյանը համալսարանում սովորել է Ն. Գ. Զերնիշևսկու հետ, որը Վ. Գ. Բելինսկուց հետո Ն. Վ. Գոգոլի և Ա. Ս. Գրիբուեզովի ու ամալիստական դրամատուրգիայի կրթութ պրոպագանդողն էր, և «Եթե հարյուրավոր ներկայացումների մեջ հենց «Ռեկիզորն» ու «Խելքից պատուհանն» են գրավել Սունդուկյանի ուշադրությունը, ապա այդ բանում քիչ դեռ չի խալացել առաջին հերթին Բելինսկու քննադատությունը, որը հարյուրավոր պիեսներին հակադրում և բարձր նշանակություն էր տալիս հենց «Խելքից պատուհանն» և «Ռեկիզորին»<sup>1</sup>:

Կասկած չկա, որ հայ ուեալիստական թատրոնի զարգացման, Գաբրիել Սունդուկյանի դրամատուրգիայի զարգացման համար, Ա. Ի. Գերցենի, Վ. Գ. Բելինսկու, Ն. Գ. Զերնիշևսկու, Ն. Ա. Դոբրոլյուսովի ուսւա ունվագիոն-դիմոկրատական մտքի հետ միասին՝ կարևոր նշանակություն ուներ հայ թատրոնի գործիչների ծանոթությունը նաև ուսւա մեծ դրամատուրգներ Ն. Վ. Գոգոլի, Ա. Ս. Գրիբուեզովի, Ա. Ն. Օստրովսկու ստեղծագործությունը, որ բարձր գնահա-

---

Երկրի լիակատար ժողովածու չորս հատորով: Տեքստը ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, 1952, հատ. 3, էջ 402 և 481:

<sup>1</sup> Գ. Աբովյան, Գաբրիել Սունդուկյան, էջ 48:

տական էր ստացել ունվագիոն-դիմոկրատների կողմից:

Դրանցից Ա. Ն. Օստրովսկու երկերը իրենց բովանդակությամբ և կյանքի պատկերման բնույթով շափազանց ներդաշնակ էին Գաբրիել Սունդուկյանի ստեղծագործությանը: Գաբրիել Սունդուկյանի ստեղծագործական մոտիկությունը Ա. Ն. Օստրովսկու հետ երևան է գալիս, այնուամենայնիվ, ոչ այնքան սյուժեների, իրադրությունների և բնավորությունների նմանողությամբ, որքան այդ գրողների հայացքների ընդհանրությամբ, սոցիալ-քաղաքական այն միջավայրի ընդհանրությամբ, որի մեջ նրանք ստեղծել են իրենց երկերը ու որի մասին նշել է և նրանց ժամանակակից հայ քննադատությունը<sup>1</sup>:

Երկու դրամատուրգների ստեղծագործությունը, որպես նբանց կողմից իրենց ժողովրդի խորաթափանց ուսումնասիրության գեղարվեստական արդյունք, խորապես ինքնատիպ և ազգային է՝ այդ բարոի ճշմարիտ իմաստով: Ա. Ն. Օստրովսկին և Գաբրիել Սունդուկյանը միաժամանակ են կիրառել կյանքում Վ. Գ. Բելինսկու, Ն. Գ. Զերնիշևսկու, Ն. Ա. Դոբրոլյուսովի և Միքայել Նալբանդյանի էսթետիկական հայացքները՝ հասարակական

1 Տես «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1864, № 34:

Կյանքում ոեալիստական թատրոնի էության, դերի և նշանակության մասին։ Միաժամանակ պետք է նշել այն անվիճելի փաստը, որ Ա. Ն. Օստրովսկին տիպեր ստեղծելու իր մեծ վարպետությամբ, դրամատորգիական երկեր կառուցելու, կերպարների սոցիալական էությունը ոեալիստորեն բացահայտելու իր սկզբունքներով մեծապես նպաստեց նորաստեղծ հայ ոեալիստական թատրոնի և դրամատորգիայի զարգացմանը<sup>1</sup>։ Գ. Սունդովյանը ևս գեղարվեստական նույն ուժով, ինչպես և Ա. Ն. Օստրովսկին, դիմակազերծ էր անում հայ բուրժուազիա և շինովնիկների աշխարհը։ Ահա թե ինչու Գաբրիել Սունդովյանը հարգանքի խոր զգացում էր տածում դեպի Ա. Ն. Օստրովսկին, որի հետ ծանոթ էր անձամբ։

Ա. Ն. Օստրովսկին իր հերթին՝ բարձր էր գնահատում Գաբրիել Սունդովյանի ստեղծագործությունը. Թիֆլիսում լինելով նա հայ դրամատորգից վեցնում է նրա «Պեպո» պիեսը, որպեսզի այն բեմադրի Փոքր թատրոնում։ Դժբախտաբար մահն արգելում է Ա. Ն. Օստրովսկուն՝ իրականացնելու իր այդ մտադրությունը։

Գաբրիել Սունդովյանի և Ա. Ն. Օստրովսկու

<sup>1</sup> Տե՛ս Գ. Ա. Բ. Գ. Գաբրիել Սունդովյան, էջ 420.

դրամատորգիայի երևան գալը հայ բեմի վրա՝ զգալապես փոխում է հայ թատրոնի ստեղծագործական դեմքը, թատրոնը դառնում է համարակականորեն ակտիվ, խրվում ժամանակակից կյանքի ամենախորքերը, պայքարում նրա վերակառուցման համար։ Դերասանական արվեստում այդ ձգտումների արտահայտիչը հանդիսացավ գերասան-ուն-ոեալիստների նոր սերունդը՝ Գևորգ Զմշկյանի գլխավորությամբ։

Գաբրիել Սունդովյանի ստեղծագործական վիճակիցը՝ հայ բեմի հայտնի գերասան և խոշորագույն գործիչ Գևորգ Զմշկյանի 60-ական թվականների նշանավոր գերասաններ Միհրգատ Ամբիկյանի, Սեդրակ Մանդինյանի, Արտաշես Սուքիայանի և այլոց գաղափարական և ստեղծագործական դեկավարն էր, — գերասանների, որոնք թատրոն եկան պրոգրեսիվ դեմոկրատական նոր հայացքներով և աննկուն պայքար մղեցին ոեալիզմի համար։ Եվ պետք է ասել, որ այս պայքարում բացառիկ գեր խաղաց նրանց բոլորին ոգեսրող ոռու թատերական ոեալիստական արվեստը։

Դեռևս երիտասարդ տարիներից հրապուրված Վ. Գ. Բելինսկու հայացքներով և ոգեսրված Փոքր թատրոնի ու հատկապես նրա հանձարեղ գերասան Պ. Ա. Մոշալովի արվեստով՝ Գևորգ Զմշկյանը դեմոկրատ-լուսավորչի գիրքերից, իր ողջ կրօնու-

թյամբ, հարձակվում էր Հայաստանի անցյալը իդեալականացնող կեղծ-պատմական կլասիցիստական պիեսների վրա, հեգնանքով նկատելով, որ մեր թատրոնը դարձել է առողջադրիա, ուր դասախոսություններ են կարդում Հայոց պատմությունից<sup>1</sup>: Գեորգ Զմշկյանը հայ թատրոնի համար կենսականորեն անհրաժեշտ էր համարում այնտեղ ժամանակից թեմատիկա հաստատելը: Նրա համար պարզ էր, որ ուսալիստական դերասանական արվեստի հաղթանակի, հայ ինքնատիպ դրամատուրգիայի զարգացման, հայ թատրոնի ուսպերտուրից ոչ-գեղարվեստական մելոդրամատիկ պիեսները վտարելու և կյանքից հեռու կլասիցիստական տրադիցիաների դեմ պայքարելու համար անհրաժեշտ է հայ թատրոնի ուսպերտուրում, Գաբրիել Սունդովյանի պիեսների հետ միասին, մտցնել նաև ուս և արևմտահվոռպական կլասիկ դրամատուրգիայի երկերը:

Գեորգ Զմշկյանը անխոնջ աշխատանք էր կատարում հայ ուսալիստական թատրոնի համար դերասանական կադրեր աճեցնելու և դաստիարակելու գործում, անողոք կերպով վերացնելով արևմտահվոռպական մելոդրամատիկ և կլասիցիստական թատրոնի խաղի արհեստականությունը և

<sup>1</sup>ՏԵՌ «Մեղու Հայաստանի», 1865, № 4, էջ 28:

չանում էր հայ բեմում պատվաստել շշեպկինյան շկոլայի ուսալիստական խաղի տրադիցիաները:

Հայ նոր ժամանակի թատրոնի պատմության մեջ կարենը երևույթ էր XIX դարի 60-ական թվականներին ուս մեծ դրամատուրգ-ուսալիստ Ա. Ն. Օստրովսկու պիեսների երևալը հայ բեմում — մի բան, որ խոշոր չափով նպաստեց հայ-ուսական թատերական կապերի հետագա ամրապնդման:

Ա. Ն. Օստրովսկու պիեսների բեմադրությունները ընթանում էին հայ հասարակական մտքի պրոցեսիվ և ուսակցիոն ուժերի սուր պայքարի մթնոլորտում: Ուսակցիոն ուղղության կողմնակիցները կանգնած էին ազգայնական այն տեսակետի վրա, թե ուս դրամատուրգիան հայերին պետք չէ և թե, իբր, Ա. Ն. Օստրովսկու խորը-կենցաղային դրամատուրգիան հետաքրքրություն կարող է ներկայացնել լոկ ուսաների համար և ուրեմն ոչ մի նշանակություն չի կարող ունենալ հայ հանդիսականի համար: Խոկ ազգային թատրոնի պրոգրեսիվ գործիչները՝ Գեորգ Զմշկյանը, Սեդրակ Մանդինյանը, Միհրդատ Ամբիկյանը, Միքայել Պատկանյանը և ուրիշները — իրավացիորեն գտնում էին, որ Ա. Ն. Օստրովսկու ստեղծագործությունը, որն արտացոլում է ժամանակակից Խուսաստանի կյանքը՝ շատ մոտ է հայ իրականությանը: Այսպիս, Սեդրակ Մանդինյանը դրում էր, «Նայի-

ցեք ինչ զարմանալի նմանություն կա մեր և ոռւսաց վաճառականների և ստորին ժողովրդի կենաց մեջ: Օստրովսկու հեղինակությանց մեջ, եթի անոնները փոխվեն, շատերը կարող են խարվել և այդ հեղինակությունները մերայինքը կընդունեն իրեւ մեր ազգային հեղինակություններ»<sup>1</sup>: Եվ, իրոք, բոլորու կան հարաբերությունների զարգացումը Ռուսաստանում և Հայաստանում առաջարել էր սոցիալական նույն ընդհանուր հարցերը, և հենց այդ պատճառով էլ տվյալ դարաշրջանի կյանքն արտացոլող Ա. Ն. Օստրովսկու երկերը հավասարապես հասկանալի էին նաև Հայ հանդիսատեսին:

Ա. Ն. Օստրովսկու ստեղծագործության գնահատման շուրջը ծավալվող այդ պայքարը, ինչպես նշում է Ռուբեն Զարյանը, շատ ճեռու էր գնում մի դրամատորդի ստեղծագործության գնահատականը տալու հարցի սահմաններից: Դա արգեն դառնում էր Հայ թատրոնում ռեալիզմ մտցնելու, հասարականորեն-դիմակագերծող ուղղություն հաստատելու, ռեալիստական դրամատորդիայի, ազգային թատրոնի ձակատագրի հարցերի շուրջը ծավալվող պայքար: Այդպիսով, պայքարը Ա. Ն. Օստրովսկու

<sup>1</sup> «Մեղու Հայաստանի», 1864, № 34:

համար «պայքար էր ընդհանրապես ռուս կլասիկ դրամատորդիայի համար»<sup>2</sup>:

Հայ բեմում Ա. Ն. Օստրովսկու առաջին պիեսը — «Ուրիշի սահմանին մի նստիր» — բեմադրվեց 1864 թվականի գեկտեմբերի 7-ին, Թիֆլիսում Գևորգ Զմշկյանի կողմից (Գևորգ Տեր-Աղեքանդրյանի թարգմանությունը): Այդ ներկայացումը, որ սկիզբ գրեց հայ բեմի վրա ռուս կլասիկ դրամատորդիայի հետագա հաստատման, մեծ հաջողություն ունեցավ: Առանձնապես աշքի էր ընկնում Գևորգ Զմշկյանի խաղը՝ Վիխորեի գերօմ: Ներկայացմանը մասնակցում էին նաև Մ. Ամրիկյանը (Մալոմայլսկի), Ա. Մանդինյանը (Բորոդիկին), Ա. Սուբիհասյանը (Ռուսակով), Ք. Արամյանը (Արինա), Գայանեն (Ավդոյան Մաքսիմովնա), Ա. Դավթյանը (Աննա) և ուրիշներ<sup>2</sup>: Այդ բեմադրությունից է սկսվում Հայ բեմում Ա. Ն. Օստրովսկու դրամատորդիայի բեմական պատմությունը և հիմք է գրվում Հայ թատրոնում Ա. Ն. Օստրովսկու որադիցիաներին, որոնք իրենց առաջին պայծառ

<sup>1</sup> Տես «Սովետական դրականություն և արվեստ», 1953, № 5, էջ 147:

<sup>2</sup> Տես Գևորգ Զմշկյան, Իմ հիշատակաբանը, Տեքստը պատրաստեց և ծանոթագրեց Ս. Ա. Մելիքսեթյանը, Հայկական ԱՌԾ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1953, էջ 183:

արտահայտությունն ստացան Գաբրիել Սունդուկյանի և Գևորգ Զմշկյանի ստեղծագործության մեջ:

«Ուրիշի սահմակին մի նստիր» կոմեդիայի բեմադրությունից հետո Գևորգ Զմշկյանը 1865 թվականի գարնանը բեմադրեց Ա. Վ. Սովորովու-Կոբիլինի «Կրեշինսկու հարսանիքը» Սեղրակ Մանդինյանի թարգմանությամբ: Խասպլյուսի գերում, փալլուն հաջողությամբ հանդես է եկել Սեղրակ Մանդինյանը: «Շատերը հանդիսականներից, նաև վելի գերասան Սաղովսկուն, Թիֆլիսում ապրող որ Մանդինյանը աննման Խասպլյուս է»<sup>1</sup>: Կրետսկ կիոռչեալինը՝ Սաթենիկ Զմշկյանը:

Վաթունական թվականներին հայ թատրոնում Գաբրիել Սոնդուկյանի և ոռուական դրամատուրգ-ների երկերի բեմադրության հետևանքով աճեց գերասան-ռեալիստների մի սքանչելի պեհադա, որը խոշոր գեր խաղաց հայ թատերական ռեալիստական արվեստի զարգացման մեջ: Այդ գերա-

<sup>1</sup> Տես Գևորգ Զմշկյան, իմ հիշատակարանը, յանը, Հայկական ՍՍԾ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1953, էջ 35—36.

սանների մեջ հատկապես պետք է նշել Սեղրակ Մանդինյանին, Միհրդատ Ամբիկյանին, Արտաշես Սուքիայանին և այլոց:

Սեղրակ Մանդինյանը (1844—1915) դեռևս ուսանողական տարիներին Մոսկվայում (1857—1862) յուրացրեց ոռու առաջավոր հասարակական մտքի գաղափարները և ոռու ռեալիստական թատրոնի տրադիցիաները: Այդ մասին շատ հետաքրքր քիր տեղեկություններ են պարունակում Սեղրակ Մանդինյանի ազգական՝ դերասան Ամիրան Մանդինյանի հիշողությունները: Նա գրում է, «Սեղրակ Մանդինյանը հայտնի էր իբրև ընդունակ դերասան Մոսկվայի Լազարյան հեմարանի հինգերորդ դասարանի աշակերտ ժամանակից: Բավկական է հիշել միայն, որ Սաղովսկու պես հայտնի և անվանի գերասանը, տեսնելով Սեղրակի խաղը անմահ Գոդերասանը»-ի մեջ, առաջարկեց նրան հենց գոլի «Մեկիոր»-ի մեջ, որուագրկեց նրան նույն ներկայացման երեկոյին թողնել ամեն բան և նվիրվել գերասանության, իր վրա վերցնելով թե կարոր ծախսերը և թե՛ պատասխանատվությունը, որ ընդունված կլինի իբրև գերասան՝ Փոքր թատրոնում»<sup>1</sup>: Այս փաստը խոսում է այն մասին, որ Սեղրակ Մանդինյանի արվեստը բավարարում էր

<sup>1</sup> «Հուշաբար», 1913, № 4, էջ 25:

Նույնիսկ այնպիսի մեծ վարպետ-ռեալիստի պահանջներին, ինչպիսին էր Պրոլ Սաղովակին:

Եվաճա 1863 թվականին, երիտասարդ և գործունելիքան ծարավ Սեդրակ Մանդինյանը Մուկացից վերադառնում է Հին Թիֆլիս: Նա ուսումները բերում է հայ բեմ: Հետագայում Սեդրակ Մանդինյանը դարձավ ոչ միայն հայ իրականության մեջ Վ. Գ. Բելինսկու գեղարվեստական-թատրական հայացքների լավագույն պրոպագանդիստներից մեկը և Ն. Վ. Գոգոլի ու Ա. Ն. Օստրովսկու գրամատուրգիայի շերմ կողմնակիցը հայ բեմում, այլև ինքը ստեղծեց Ռասպլումի, Յուսովի, Քորչինսկու բեմական հոյակապ կերպարները, հայ դերասանի կողմից ոռուսական պիեսների ստրիրական պերսոնաժների ռեալիստական մարմնավորման այդ սքանչելի նմուշները:

Նույնը կարելի է ասել նաև Միհրատ Ամրիկյանի՝ (1843—1879) Գաբրիել Սունդուկյանի պիեսներում բացասական կերպարների լավագույն մարմնավորողի մասին: Պայքարելով ժամանակակից ռեալիստական դրամատուրգիայի համար՝ նա օգտագործում է Վ. Գ. Բելինսկու այն միտքը, թե որքան էլ տաղանդավոր լինի դերասանը, նա երբեք չի կարողանա բեմական լիարժեք կերպար ստեղծել դրամատուրգիական թույլ նյութի վրա:

Այդ հարցի կապակցությամբ մամուկի էշերում նրա ելույթները տոգորված են Վ. Գ. Բելինսկու գաղափարներով, իսկ տեղատեղ էլ պարզապես ազատ փոխադրումն են ուստի հանձարեղ քննադատի հոգվածների առանձին մասերի: Օրինակ, Վ. Գ. Բելինսկու հոչակավոր «Համլետ», Եկբալիրի դրաման, Մոշալովը Համլետի դերում» հոդվածից Միհրատ Ամրիկյանը օգտագործել է մի քանի հատվածներ<sup>1</sup>:

Միհրատ Ամրիկյանի տեսական հայացքները, որ զարգացել էին ուստի գեմոկրատական մտքի բարերար ներգործության և, առաջին հերթին, Վ. Գ. Բելինսկու գաղափարների աղդեցության տակ, հայ թատրոնի առաջավոր գործիչների մղած պայքարի անբաժան մասն են կազմում՝ ռեալիստական աղային թատրոնի համար, ժամանակակից ճշմարտացի դրամարդիկի համար, — պայքար, որ մղվում էր կեղծ-պատմական պիեսների դեմ: Դա խոսում է հայ դեմոկրատական էսթետիկայի և մասնավորապես 19-րդ դարի 60-ական թվականների թատրոնական քննադատության բարձր մակարդակի մասին<sup>2</sup>:

<sup>1</sup> ՏԵ՛. Վ. Գ. Բելինսկի, Собрание сочинений в трех томах. ОГИЗ, М., 1948, հատ. 1, էջ 352—353, և Ամրիկյանի հոդվածը «Մեղու Հայաստանի» ամսագրում, 1866, № 10:

<sup>2</sup> Մ. Ամրիկյանի էսթետիկական հայացքների մասին տես Ո. Զարյանի «Մի էջ հայ դեմոկրատական էսթետի-

Այսպիսով, քննադատական ռեալիզմի համար մեր թատրոնի առաջավոր գործիչների մղած պայքարը 60-ական թվականներին պսակվում է մի նոր հաղթանակով, ինչպես ժամանակակից հայ ռեալիստական դրամատուրգիայի ասպարեզում, նույնպես և գերասանական խաղի, որը զարգանում էր ոռու թատրոնի, դրամատուրգիայի և ոռու առաջավոր թատերագիտական մտքի հետ անվիճակի ստեղծագործական համագործակցության մեջ:

## 3

Յոթանասունական թվականների վերջին և 80-ական թվականների սկզբին հայ թատրոնի ռեալիստական տրադիցիաները իրենց հետագա զարգացումն են ստանում կլասիկ երկերի բեմադրությունների միջոցով: Սակայն դրա հետ միասին այն ժամանակվա հայ բեմը ողողում է նաև մելոդրամատիկ, բուրժուական էժանագին դրամատուրգիան, որը գերասանի արվեստի մեջ ևս զարգանում է թե՛ վատ ճաշակ և թե՛ խաղի կեղծ, դեկլամացիոն ոճ:

Կայի պատմությունից՝ հոդվածը, «Սովետական դրականություն և արվեստ», 1955, № 2, էջ 144—151:

Հայ թատերական քննադատության պրոգրեսիվ և պահպանողական բանակների միջև տեղի ունեցած պայքարը, որ փոխադրվել էր արդեն և՛ մամուկի էջերը՝ արտացոլվում է նաև հայ թատրոնի ռեալիստուրգում, որն, ինչպես ասացինք, գեղարվեստական և գաղափարական տեսակետից միատեսակ չէր: Ավելի ու ավելի քիչ էին բեմադրվում հայ, ոռու և արևմտահվորպական դրամատուրգիայի լավագույն երկերը, և ընդհակառակը ավելի հաճախ էին խաղացվում կեղծ-պատմական հայկական պիեսներ; Փրանսիական և իտալական մելոդրամաներ, ոռու դրամաթուի Վ. Դյաշենկոյի, Ա. Սոլոգուիի և այլոց նվազ-գեղարվեստական պիեսները, որոնք հայ հանդիսատեսին հեռացնում էին սոցիալական այրող պրոբլեմներից: Հենց այդ թույլ ռեալիստուրգիան է, որ սուր քննադատության էր ենթարկվում հայ պրոգրեսիվ քննադատների կողմից «Մշակ» լրագրի էջերում<sup>1</sup>:

Գաբրիել Սունդովլյանը և Գևորգ Զմշկյանը, բնական է, որ չէին կարող հաշտվել իրենց հարազատ թատրոնի այդ տիսուր գրության հետ: Նրանք նորից գլխավորում էին 60-ական թվականների հայ բեմի ռեալիստական տրադիցիաների պահպանման և զարգացման համար մղվող պայքարը:

<sup>1</sup>Տես «Մշակ», 1879, № 187:

Նրանց շուրջն է համախմբվում հայ ոեալիստ-դի-  
ռասանների նոր սերումզը — Գևորգ Տեր-Դավթյան,  
Ամիրան Մանդինյան, Վարդուհի և ուրիշներ:

Պայքար է գնում ոեալիզմի, Գաբրիել Սուն-  
դուկյանի դրամատուրգիայի, ոռուսական և արև-  
մբատանվորպական կլասիկայի համար, — մի պայ-  
քար, որն ի վերջո պսակվեց առաջավոր ուժերի  
Հաղթանակով:

Տասնիններորդ դարի 80-ական թվականներին  
և 90-ական թվականների սկզբին Գաբրիել Սուն-  
դուկյանի, Շեքսպիրի, Մոլիերի, Շիլերի դրամա-  
տուրգիայի հետ միաժամանակ, վճռական դեր խա-  
ղաց հայ բեմում ուստի կլասիկ դրամատուրգիայի  
լայն տարածումը: Տասնիններորդ դարի ուստի դրա-  
մատուրգիայի կլասիկների՝ Ա. Ն. Օստրովսկու,  
Ն. Վ. Գոգոլի, Ա. Ս. Գրիբուդովի, Մ. Յու. Լեռ-  
բեմադրվում էին հայ թատրոնում անցյալ դարի  
80-ական թվականներին: Այսպես, օրինակ,  
«Ծկամտավոր պաշտոն»-ը — 1880 թ., «Զքավորու-  
թյունն արատ չէ» — 1882 թ., «Բելուգինի ամուս-  
նություն» — 1887 թ., «Ռելուգինի ամուս-  
նություն» — 1882 թ., «Ռելքից պատու-  
1889 թվականին բեմադրվում է Ա. Պ. Զելյովի  
«Առաջարկություն» վորմիլը և այլն:

Ուսւ ոեալիստական թատրոնի և դրամատուր-  
գիայի գրական ազդեցությունը հայ թատրոնի,  
մասնավորապես հայ գերասանների արվեստի վրա  
առանձին ուժով երևան եկավ 80-ական թվական-  
ներին: Հայ գերասաններից մի քանիսը իրենց  
կրթությունը ստացան Ռուսաստանում, սերտ կեր-  
պով շփվեցին ուստի թատրոնի գործիչների հետ,  
մյուսները Անդրկովկասից դուրս չգալով՝ դաստիա-  
րակվեցին Վ. Գ. Բելինսկու քննադատական աշխա-  
տությունների, Ն. Վ. Գոգոլի, Ա. Ս. Գրիբուդովի,  
Ա. Ն. Օստրովսկու և այլոց դրամատուրգիայի վրա:  
Ուսւ թատրոնական արվեստի ազդեցությունը քըն-  
նադատական ոեալիզմի զարգացման վրա 80-ա-  
կան թվականների հայ բեմական արվեստում կա-  
րելի է պարզել թեկուզ հենց հայ հանճարեղ ողբեր-  
գակ Պետրոս Աղամյանի փայլուն ստեղծագործու-  
թյան ուսումնասիրությամբ:

Իսկապես, Պետրոս Աղամյանի ստեղծագոր-  
ծական կյանքի պատմությունը ուստի ոեալիստական  
արվեստի բարերար ազդեցությամբ հայ թատրո-  
նությունը բեմական ոեալիզմի առաջացման մի հոյա-  
կապ նմուշ է: Եվ այդ պրոցեսը տիպիկ ու բնորոշ  
է ընդհանրապես 80-ական թվականների դրեթի  
բոլոր գերասանների համար:

Պետրոս Աղամյանը (1849—1891) առաջին  
անգամ բեմ բարձրացավ Պոլսում՝ 1867 թվակա-

նին: Այն ժամանակվա հայ թատրոնի ռեպերտուա-  
րը լի էր նվազ-գեղարվեստական ֆրանսիական և  
իտալական թարգմանական մելոդրամներով և հայ-  
կական կեղծ-պատմական պիեսներով: Դերասան-  
ների խաղը աշքի էր ընկնում սենտիմենտալու-  
թյամբ և երգային գեղամացիայով: Պետրոս  
Աղամյանի բացարիկ տաղանդը նույնիսկ այս թույլ  
պիեսներում նշանակալից հաջողություն էր ապա-  
հովում նրա համար, չնայած խաղի այն պակասու-  
թյուններին, որ հատուկ էին Պոլսի հայ բեմի բո-  
լոր գերասաններին:

1879 թվականին Պետրոս Աղամյանը փոխա-  
ղովեց Թիֆլիս, որն այն ժամանակ Անդրկովկասի  
հայերի հոգեոր կուլտուրայի կենտրոնն էր: Թիֆլի-  
սի հայ բեմում աշխատելու տարիները վճռա-  
կան նշանակություն ունեցան Պետրոս Աղամ-  
յանի բեմական կենսագրության համար: Հենց այդ  
ժամանակ (1879—1882) նա տիրապետում է գե-  
րասանական արվեստի ռեալիստական ոճին:

Թիֆլիսում առաջին տարին Պետրոս Աղամյանը  
հրապարակ է գալիս իր սովորական ռեպերտուա-  
րով, որ կազմված էր հայկական կեղծ-պատմական  
պիեսներից և արևմտաեվրոպական թարգմանա-  
կան մելոդրամներից: Չնայած դերասանի ունեցած  
հաջողությանը հանդիսատեսների որոշ մասի մեջ,

արդեն իսկ այն ժամանակ էլ առաջավոր հասարա-  
կայնությունը քննադատաբար արտահայտվեց  
ռեալիզմին խորի խաղառնի մասին:

Գևորգ Զմշկյանի և Թիֆլիսի հայ բեմի առա-  
ջատար դերասանների ռեալիստական ստիլծա-  
գործությունը վճռական գեր խաղաց Պետրոս  
Աղամյանի վարպետության ձեւավորման մեջ:  
Նրանց արվեստի, ինչպես և անմիջականո-  
րեն Թիֆլիսի սովական թատրոնի և նրա գոր-  
ծիչների միջոցով, Պետրոս Աղամյանը ծանոթա-  
ցավ ուսւաթառությունի ռեալիստական տրադիցիանե-  
րի հետ: Պետրոս Աղամյանի համար խիստ բա-  
րերար եղավ այն հանգամանքը, որ 80-ական  
թվականներին ձգտումը դեպի ուսւաթառությունը և արվեստը, նրանց գնահատությունը և տա-  
րածումը հայ իրականության մեջ արդեն լայն  
թափ էր ստացել: Այդ տարիներին, երբ «ուսւա-  
թականության հետ ծանոթ լինելու աստիճանը  
յուրաքանչյուր մարդու կուլտուրականության շա-  
փանիշն էր»<sup>1</sup>, Աղամյանի ակտիվ բնավորությունը  
չէր կարող անտարբեր մնալ այդ երեսութի հան-  
գեպ: Ուսւաթականության և հատկապես գրամա-  
գեպ:

<sup>1</sup> Русет Оганиսян, Из истории оценки русской литературы армянской общественной мыслью. стр. 52.

տուրգիայի հետ հետագա ծանոթությունը այնքան գրավեց նրան, որ ուսա դրամատուրգիայի կերպարների մարմնավորումը՝ Պետրոս Աղամյանի նվիրական ցանկություններից մեկը դարձավ:

1880 թվականի փետրվարի 21-ին Պետրոս Աղամյանը հանդես եկավ Ա. Վ. Սուխովո-Կորիլինի «Երեխնակու հարսանիքը» պիեսում՝ Կրեշինսկու դերով, իսկ նույն տարվա դեկտեմբերի 22-ին մեծ հաջողությամբ խաղաց Ժադովի դերը՝ Ա. Ե. Օստրովսկու «Եկամտավոր պաշտոն»-ում։ Արտիստական կրակոտ տեմպերամենտը, դերասանական բարձր վարպետությունը, սքանչելի ձայնը և արտահայտիչ առողջապահությունը ստեղծեցին հմայիչ և անմոռաց մի կերպար։ «Պիեսի ուժեղ և ազնիվ ուղղությունը»<sup>1</sup> իր ճշմարտացի և բեմական մարմարումը գտավ Ժադով-Աղամյանի կերպարում։

Պետրոս Աղամյանի անվան հետ է կապված նաև հայ հասարակության առաջին ծանոթությունը՝ Ն. Վ. Գոգոլի երկերի բեմադրության հետ։

Ճիշտ է, հայ հասարակայնությունը Ն. Վ. Գոգոլին գիտեր դեռևս նրա կենդանության օրոք՝ նրա «Մեկորը» հայ սիրող-դերասանները ուսւերեն կանոներին՝ Մուկվայի Լաղարյան ճեմարանում,

իսկ 1865 թվականին այն խաղացվել էր Ալեքսանդրովում՝ (այժմ կենտրոնական)։ Սակայն հայ պրոֆեսիոնալ բեմում Ն. Վ. Գոգոլի դրամատուրգիան երկան եկավ մեծ կոմեդիադրի մահվան 30-ամյակի ժամանակ միայն՝ 1882 թվականին։ Այդ տարվա հունվարի 14-ին բեմադրվեց «Ամուսնությունը», ապրիլի 12-ին «Մեկորը», որտեղ Խլեստակովի դերը կատարում էր Պետրոս Աղամյանը։

Այստեղ հարկ է նշել, որ պրոֆեսոր Վ. Վարդանյանի կարծիքով՝ Ն. Վ. Գոգոլի պիեսները հայ բեմում, ճիշտ է, առաջին անգամ հանդես են եկիլ 1882 թվականին, բայց երկու տարի առաջ բեմադրվել է նրա «Խելագարի հուշերը» պատմվածքը<sup>2</sup>։ Մյուս ուսումնասիրող Գ. Հովհաննը ենթադրում է, որ «Խելագարի հուշերի» առաջին բեմական ընթերցումը տեղի է ունեցել 1886 թվականին<sup>3</sup>։ Երկուսի կարծիքով էլ ընթերցել է Պետրոս Աղամյանը։

Մեզ հավանական է թվում պրոֆեսոր Վ. Վ. Վարդանյանի փաստարկումը՝ հետեւյալ նկատառումներանց մի փաստական գրականություն և արվեստ, 1952, № 3, էջ 122։

<sup>1</sup> Տես Վ. Վարդանյան, Գոգոլի դրամատուրգիան՝ հայ բեմում, Մովեսական գրականություն և արվեստ, 1952, № 3, էջ 122։  
<sup>2</sup> Տես Գուրգեն Հովհանն, Ն. Վ. Գոգոլը և հայ գրականությունը, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն, Երևան, 1952, էջ 107։

<sup>1</sup> Ն. Վ. Գոգոլի շնորհական բառարկը։

նի կողմից կատարած թարգմանությունը, ինչպես  
մենք ենք ենթադրում, կատարվել է հենց  
Պետրոս Ադամյանի համար, և ոչ լրիվ, այլ, Հա-  
քը պետք էր դերասանին՝ ընթերցելու համար: Այս  
պատճառով, որ Հ. Տեր-Գրիգորյանի թարգմանու-  
թյան մասին եղած տեղեկության և առաջիկա ներ-  
կայացման հայտարարության միջև անցել է լոկ  
մի քան օր.—տեղեկությունը տպված է «Մշակում  
մայիսի 14-ի № 79-ում, իսկ հայտարարությունը՝  
նույն 1880 թ. մայիսի 17-ին, № 82-ում:

Եվ ապա՝ թե՛ երկու ուսումնասիրողները, և  
թե՛ իր ժամանակի մամուկը հաստատում են, որ  
Պետրոս Ադամյանը ծանոթ է եղել ուսա հայտնի  
մանակ, երբ Վ. Ն. Անդրեև-Բուլակի հետ: Այն ժա-  
յին ելույթներ է ունեցել Թիֆլիսում, բեմի երկու  
ստեփ բարձր են գնահատել միմյանց խաղը:

Վ. Ն. Անդրեև-Բուլակի հանդես գալը Թիֆ-  
լիսում «Խելագարի հուշերի» բեմադրության մեջ՝  
Պոպրիշչնի դերում, վերոհիշյալ ուսումնասիրող-  
Պետրոս Ադամյանին, որ ինքն էլ որոշել է հան-

դես գալ այդ դերով: Իսկ Անդրեև-Բուլակի գաստ-  
ովները, ինչպես պետք է ենթադրել, տեղի են  
ունեցել հենց 1880 թվականին: Մենք կարծում  
ենք, որ Անդրեև-Բուլակի օրինակով, իր և պետ-  
րուարում 1880 թվականին այդ հոգեբանական  
էտյուդը մտցնելով՝ Պետրոս Ադամյանը երկար  
ժամանակ կատարել է այն Հ. Տեր-Գրիգորյանի  
թարգմանությամբ, իսկ 1886 թվականին Ալեք-  
սանդր Շիրվանզադեն նրա համար նորից է թարգ-  
մանել Ն. Վ. Գոգոլի պատմվածքի վերջին այն  
մասը, որը միշտ խաղում էր Վ. Ն. Անդրեև-Բուլ-  
լակը, ինչպես և Պետրոս Ադամյանը՝ դեռևս մինչև  
1886 թվականը:

Այսպես թե այսպես, Ն. Վ. Գոգոլի պատմված-  
քի առաջին ներկայացման ժամանակ, անկախ  
նրանից, թե այն տեղի է ունեցել 1880 թվականի  
մայիսի 18-ին, թե 1886 թվականի նոյեմբերի  
28-ին՝ Պետրոս Ադամյանը խաղացել է Պոպրիշչ-  
նի դերը և, ինչպես վկայում է մամուկը, խաղա-  
ցել է լավ, իր սեփական մեկնաբանությամբ:

Համակեցության նորմաների անարդարությու-  
նից շախաջախված և իր բանականությունը կորցրած  
թշվառ շինովնիկ Պոպրիշչնիկ՝ Պետրոս Ադամյանի  
կատարմամբ՝ իր գրության ողջ ողբերգականու-  
թյամբ ցնցող տպագորություն էր գործում: Դերա-  
սանի ոգևորված խաղը արտահայտում էր սոցիա-

ւական խորը բողոք մարդկային անձնավորության անարգանքի և ստորացման դեմ: Պետրոս Ադամյանի խաղի ողբերգական ուժը նշում էր և մամուլը. «Պ. Ադամյանը խելագարի տիպը ներկայացրեց ինքնուրույնաբար, այսինքն՝ նա Պոպրիշչինին դուրս բերեց բոլորովին այլ կերպով, քան թե, օրինակ, Անդրեև-Բուլզակը: Վերջինը պատկերացնում է Գոգոլի խելագարին կոմիկ ձևով, այնինչպէ. Ադամյանը ավելի դրամատիկ ձևով ներկայացրեց»<sup>1</sup>: Նրա խաղը շատ ուժեղ տպավորություն թողեց հանդիսատեսի վրա<sup>2</sup>:

Հետաքրքիր է ընդգծել, որ ինչպես և ոռու կլասիկ մյուս պիեսները, Ն. Վ. Գոգոլի կոմեդիան և հայ բեմի վրա երևան եկավ ոչ դյուրին պայքարից հետո: Ինչպես Ա. Ն. Օստրովսկին 60-ական թվականներին, նույնպես և Ն. Վ. Գոգոլը 80-ական թվականներին պահպանողական քննադատների կողմից մերադրվում էին տեղային սահմանափակվածության մեջ, նրանում, որ նրանց երկերը հասկանալի են ոռու ժողովրդին և այն էլ սոսկ նրա մատչելի են, որ այլ լեզուների թարգմանվելով

<sup>1</sup> «Արձագանք», Թիֆլիս, 1886, № 44;

<sup>2</sup> Նույն տեղում:

էր հայ՝ գաղափարապես սահմանափակ քննադատության այդ ներկայացուցիչների սիրած «փաստարկումը»: Այնուամենայնիվ, ինչպես Վ. Ն. Անդրեև-Բուլզակը ոռու թատրոնում, նույնպես և Պետրոս Ադամյանը հայ թատրոնում՝ «Խելագարի հուշերի» բեմադրության մեջ իրենց հիանալի խաղով ոչ միայն հերքեցին այդ սխալ տեսակետը, այլև ստեղծեցին Պոպրիշչինի դերի կատարման տրադիցիա և ունեցան բազմաթիվ հետեւրդներ, որոնցից ոչ ոք, սակայն, չհասավ նրանց բարձրությանը:

Ոռու դրամատուրգիայի կերպարների մարմնավորումը օգնեց Պետրոս Ադամյանին՝ տիրապետելու բեմական ուսալիզմին: Մեծ դերասանի ստեղծագործության մեջ խոշոր նշանակություն ունեցավ նրա աշխատանքը Զացկու կերպարի վրա: Իր սեփական խոստովանությամբ<sup>1</sup> և Վ. Ի. Նեմիրովիչ-Դանչենկոյի վկայությամբ<sup>2</sup>՝ Պետրոս Ադամյանը մտադիր էր նույնիսկ հատուկ հետազոտություն գրել Ա. Ս. Գրիբոեդովի անմահ կոմեդիայի հերոսի մասին: Զացկու, ինչպես և Մ. Յու.

<sup>1</sup> Տես Պետրոս Ադամյան, Շեքսպիրը և յուր չամետ ողբերգության աղբյուրն ու քննադատությունները, Թիֆլիս, 1887, էջ Բ:

<sup>2</sup> Տես Московская иллюстрированная газета, М., 1891, 7 июня,

Լեռմոնտովի «Դիմակահանդես»-ում Արքենինի գերեզ մոտ էին Պետրոս Աղամյանին թե՛ իրենց ոեալիզմով, և թե՛ բարձր ոռմանտիկականությամբ: Այդ դերերից Արքենինը հետագայում իր հաստատուն տեղը գրավեց Պետրոս Աղամյանի ոեալիզմուարում: Մ. Յու. Լեռմոնտովի ստեղծագործությամբ հայ նշանավոր ողբերգակի հափշտակված լինելու մասին վկայում է նաև Պետրոս Աղամյանի՝ Դեմոնի դերում հանդես գալու փաստը ուսւ մեծ պոետի համանուն պոեմի բեմադրության մեջ:

Այդ բեմադրությունների, ինչպես և «Ծեկվորի» ու «Խելքից պատուհասի» թարգմանությունների և բեմադրությունների հարցի շուրջը «Մշակ» լրագրի և պահպանողական «Մեղու Հայաստանի» ամսագրի էջերում 1881 թվականին ծավալվեց սուր պայքար: Եթե «Մշակի» քննադատը գտնում էր, որ Ն. Վ. Գոգոլի և Ա. Ս. Թրիբունովի գրամատուրգիան նպաստում էր հայ հասարակության պրոգրեսին, ապա «Մեղու Հայաստանի» ամսագրի քննադատին, ըստ երեւլյին, ձեռնոտու չէին Զագկու ազատասեր կոչերը և ազնվա-ճորտատիրական կարգի անօղոք խարազանումը: Ինչ վերաբերում է Մ. Յու. Լեռմոնտովի «Դիմակահանդես»-ին, ապա պահպանողական քննադատն այն համարում էր թույլ և արհետական մի հրկ, կամ՝ արհմտյան

գրամատուրգների պիեսների սոսկական մի լնդօրինակումն:

Պետրոս Աղամյանի ուսւ ոեալիստական պիեսներից կազմված ոեալիստուարով դաստիարակվել են ոչ միայն Արևելյան Հայաստանի դերասանները՝ Գևորգ Տեր-Դավթյան<sup>1</sup>, Մկրտիչ Ավալյան, Ամիրան Մանդինյան և ուրիշներ, այլև Արևմտյան Հայաստանի (Թյուրքահայաստանի) 80-ական թվականների դերասանների մի ամբողջ սերունդ, որը, ինչպես և Պետրոս Աղամյանը, եկել էր Պոլսից: Այդ հանգամանքը շատ կարևոր է նշել, քանի որ այն խոսում է ուսւ թատրոնի ոչ միայն ուղղակի, այլև անուղղակի աղդեցության մասին՝ հայ բեմական արվեստի վրա: Այդ աղդեցությունը տարածվում էր Անդրկովկասի հայ դերասանների միջոցով նաև Մերձավոր Արևելքի և Բալկանյան երկրների վրա, որի մասին, սակայն, կխոսվի ներքեւում:

Սուլթանական Թյուրքիայի գարշապարի տակ

<sup>1</sup> Օրբենակ, Գևորգ Տեր-Դավթյանի (1850-1934) ստեղծագործության մեջ, հայ գրամատուրգիայի լավագույն կերպարների հետ միասին, աչքի ընկնող տեղ են գրագում նրա վարպետորեն խաղացած Բելոգուբովի՝ «Եկամբետավոր պաշտոնաւում», Մոլչալինի՝ «Խելքից պատուհասաւում», Շարիխին՝ «Դիմակահանդես»-ում, Ժելակինի՝ «Ամուսնության» մեջ և այլ գերերը:

գտնվող Արևմտյան Հայաստանից 80-ական թվականներին Անդրկովկաս եկած հայ խոշոր գերասանները՝ իրենց արվեստում կարծես երկրորդ ծնունդ են ապրում։ Խաղալով Գաբրիել Սունդուկյանի և ոռւս կլասիկ դրամատուրգիայի ռեալիստական պիեսներում, ինչպես և արևմտակելքոպական դրամատուրգների (Շեքսպիր, Շիլեր, Մոլիեր) լավագույն երկերում, այդ գերասանները ժամանակին հաղթահարում են Պոլսում յուրացրած իրենց կեղծ, ձևական, մելոդեկլամացիոն խաղաոճը։ Այդպես էին այդ գերասաններից շատերը՝ Մարտիրոս Մնակյանը (1837—1920), Ազնիվ Հրաչյան (1853—1919), Գարսագայան քույրերը՝ Երանուհի (1848—1924) և Վերդինե (1856—1933), Մարի-Նվարդը (1853—1885); Անդրկովկասում նրանք շուտով դարձան հայ ռեալիստական թատրոնի հայտնի վարպետները։ Խուս կլասիկ դրամատուրգիայի բեմական մարմնավորման մեջ նրանց ստեղծած կերպարները՝ 80-ական թվականների հայ թատրոնի պատմության լավագույն երեսութներից են։

Նշենք այդ գերերից մի քանիսը. «Դիմակահանդես»-ում նինա և «Խելքից պատուհաս»-ում Սոֆիա — Ազնիվ Հրաչյայի կատարմամբ, Աննա Պավովնա «Եկամտավոր պաշտոն»-ում և բարոնուհի Շտրայլ «Դիմակահանդես»-ում — Ե. Գարա-

դաշտանի, Պոլինա «Եկամտավոր պաշտոն»-ում, Լիզա «Խելքից պատուհաս»-ում, Մարիա Անտոնովնա «Մեկոր»-ում — Վ. Գարագայանի, Ագաֆիա Տիխոնովնա «Ամուսնություն»-ում և Աննա Անդրեևնա «Մեկոր»-ում — Մարի-Նվարդի, Վիշնևսկի «Եկամտավոր պաշտոն»-ում, Պողկոլյոսին «Ամուսնություն»-ում, Քաղաքապետ «Մեկոր»-ում, Զամուսով «Խելքից պատուհաս»-ում — Մ. Մնակյանի կատարմամբ։

Հայ թատրոնի պատմության մեջ հատուկ տեղ է գրավում Մարտիրոս Մնակյանի մարմնավորած ֆամուսովի կերպարը՝ «Խելքից պատուհասի» առաջին հայերեն ներկայացման ժամանակ՝ 1881 թվականի հունվարի 8-ին։ Այդ ներկայացման մեջ գերերը կատարում էին — Պ. Աղամյան (Չացկի), Գ. Զմշկյան (Սկալովուք), Սիրանույշ (Սոփիա), Գ. Տեր-Դավթյան (Մոլլալին), Ա. Մանդինյան (Մեպետիլով), Ա. Սուրբիասյան (Զագորեցկի), Մ. Ավալյան (Պատոն Միխայլովիչ) և ուրիշներ։

Թատերական առաջավոր քննադատությունը բարձր գնահատեց թե՛ պիեսը և թե՛՛ բեմադրությունը, նշելով նրա մի շատ կարևոր առանձնահատկությունը՝ «Երեսում էր, որ գործին մասնակցողներից յուրաքանչյուրը բարեխղձաբար էր վերաբերի իր պարտականությանը և աշխատել էր կարելության չափ աշակցել պիեսայի ամբող-

չովթյանը, որ բավական լավ. էր: Լավ էր պիեսը ուսումնասիրված, բոլոր կետերի նշանակությունը լավ մեկնաբանված<sup>1</sup>: Հայ թատրոնի առաջավոր դերասանների նման վերաբերմունքը դեպի Ա. Ս. Գրիբոեդովի պիեսը անշուշտ պատահական ձեր դա առաջ էր գալիս հարգանքի այն խորը զգացումից, որ նրանք տածում էին դեպի ոռւս մեծ դրամատուրգը: Վրաց թատերական հայտնի գործիչ ոռւս գրականության քաջածանոթ Դավիթ Էրիսթավին, Նշելով, որ այդ ներկայացումը Ա. Ս. Գրիբոեդովի անմահ կոմեդիայի առաջին բեմադրությունն է այլ լեզվի թարգմանած, քանի որ «աշխարհիս ոչ մի բեմում նա դեռևս չի գնացել»<sup>2</sup>, մանրամասն խոսում է Մարտիրոս Մնակյանի խաղի մասին ֆամուսովի դերում: Գ. էրիսթավին գրում է, որ Մ. Մնակյանը փայլուն կերպով հաղթարեց բոլոր դժվարությունները և որ նրա ֆամուսով դերասանական վարպետության մի կատարելություն էր<sup>3</sup>:

Ինքը Մարտիրոս Մնակյանը, վերադառնալով Պոլիս, շեշտում էր այն դերը, որ իր, ինչպես և մի շարք արևմտահայ դերասանների ստեղծագործու-

<sup>1</sup> «Մշակ», 1881, № 4:

<sup>2</sup> «Փորձ», Թիֆլիս, 1881, № 3, էջ 142:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 145:

թյան մեջ խաղացել են Անդրկովկասով եղած տարիները, ուր նա յուրացրել էր ոռւս թատերական ռեալիստական գպրոցի տրադիցիաները: Մարտիրոս Մնակյանը գրում էր, որ Արևմտյան Հայաստանի դերասանները Թյուրքիայից Կովկաս բերին մելոդրամներ, իսկ Կովկասը նրանց արվեստը հարստացրեց ռեալիստական գրամմատուրգիայով, որ «արվեստի խմորը մենք հայթայթեցինք, իսկ արվեստագետներ հոնկի եկան հոս արդեն կաղապարված ու կատարելագործված...»<sup>1</sup>, որ «Կովկասի գրոշմը նվիրագործեց զմեզ արվեստագետի կնիքով»<sup>2</sup>:

Պետրոս Աղամյանի ստեղծագործության համար շատ բարենպաստ եղան Անդրկովկասով ապրած տարիները: Իսկ այնուհետև գաստրոլներով շրջագայելով Ռուսաստանի տարբեր քաղաքները, Պետրոս Աղամյանը ոչ միայն ավելի սերտ և ավելի խոր մերձեցավ ոռւս կովառուրայի յուրացման, ուշագրությամբ ուսումնասիրելով ոռւս արվեստը, այլև իր հերթին ցույց տվեց ոռւս հանդիսատեսին իրեն հարազատ հայ ժողովրդի արվեստը: Այդ տեսակետից հատուկ նշանակություն

<sup>1</sup> Մարգիս Մելիքովյան, Թատերական ակնարկներ, Հայութեատր, Երևան, 1945, էջ 73:

<sup>2</sup> Նույն տեղում:

ունեն նրա ելույթները Մոսկվայում և Պետերբուրգում 1883 թվականին, որոնք և նրան համաշխարհային հռչակ բերին: Ուսւա մամուլը շատ բարձր գնահատեց հայ մեծ ողբերգակի բնմական վարպետությունը, բազմաթիվ հոդվածներ նվիրելով նրան:

Մոսկվայում և Պետերբուրգում Պետրոս Ադամյանը ծանոթանում է ուսւա թատրոնի ականավոր գործիչներ՝ Ա. Ն. Օստրովսկու, Վ. Ի. Նեմիրովիչ-Դանչենկոյի, Պ. Վ. Սամովլովի, Մ. Ն. Երմոլովայի, Մ. Գ. Սավինայի, Ա. Պ. Լենսկու, Վ. Ն. Դավիդովի, Վ. Պ. Դալմատովի, Մ. Ի. Պիսարեի և ուրիշների հետ:

Ա. Ն. Օստրովսկու հետ ունեցած իր հանդիպման մասին Պետրոս Ադամյանը 1883 թվականի փետրվարի 13-ի նամակում գրում է. «...երբ լսեց, որ «Արդյունավոր պաշտոն» պիեսան, որ յուր դրվածն է, թարգմանված է և ես ներկայացրել եմ ժաղովը, սաստիկ ուրախացավ, սասց շատ կցավիմ, որ հիվանդ եմ և չեմ կարող գալ Զեր խաղը տեսնելու, բայց ունիմ բարեկամներ, որոնց խոսքին կհավատամ, և միշտ կկարգամ լրագրերում Զեր մասին դրվածները»<sup>1</sup>: Պետրոս Ադամյանի այդ

<sup>1</sup> ՏԵ՛Ս Պետրոս Ադամյանի նամակները, Հայկական ՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարան, Պետրոս Ադամյանի արխիվ:

նամակը վկայում է Ա. Ն. Օստրովսկու մեծ հետաքրքրության մասին դեպի իր պիեսների բեմադրությունը հայ բեմում և դեպի հայ գերասանների խաղը:

Մոսկվայում Պետրոս Ադամյանը հանդես եկավ մի փոքր առաջ բացված Ա. Ա. Բրենկոյի «Պուշկինյան» թատրոնում, որի կազմակերպման մեջ գործոն մասնակցություն էին ունեցել Վ. Ն. Անդրեև-Բուլգակը և Մ. Ի. Պիսարելը, որը համարվում էր Արքենինի գերի լավագույն կատարողը: Այնուամենայնիվ Պետրոս Ադամյանը որոշում է Մոսկվայում հանդես գալ այդ գերով՝ ֆրանսերեն լեզվով: Հաջողությունը արտակարգ էր: Թատերական գործիչները հիշում են, որ Մ. Ն. Երմոլովին ներկայացումից հետո անձամբ շնորհավորում է Պետրոս Ադամյանին և ասում, որ այսուհետև խորհուրդը չի տալիս Մ. Ի. Պիսարելին՝ հանդես գալ Արքենինի գերով<sup>1</sup>: Մի այլ հիշողության մեջ այդ բառերը վերագրվում են Մ. Գ. Սավինային: Այդ փաստերը վկայում են այն բարձր կարծիքը, որ ունեցել են ուսւա մեծ գերասանուհիները Պետրոս Ադամյանի խաղի մասին: Արքենինի գերը Պետրոս Ադամյանի կատարմամբ անգերազանց էր

<sup>1</sup> ՏԵ՛Ս Գ. Ստեփանյան, Պետրոս Ադամյան, Հայության պետհրատ, Երևան, 1941, էջ 69:

Համարվում նաև ոռւս քննադատության մեջ՝ «Աղամյանը սիրում էր Արքենին խաղալ։ Կատարողներից և ոչ մեկը այդ գերում այնքան շէր մոտենում լերմոնտովյան հերոսին, որքան հայ Աղամյանը»<sup>1</sup>։

Կարելի է համարձակ հայտարարել, որ «Դիմակահանդեսի» բեմական պատմության մեջ հայ ողբերգակը իրականացրեց մեծ Մոշալովի նվիրական երազը, ոռւս բեմի վրա հաստատելով լերմոնտովյան հերոսի խոռվահուզ կերպարը։ Դրա մասին ուղղակի վկայում է ոռւս գրական և գեղարվեստական հայտնի քննադատ Վլ. Չուկովի խոստովանությունը, որ նա արել է հայ հասարակական գործիչ և թարգմանիչ՝ Սենեքերիմ Արծրունու հետ զրոցելիս։ «Երկակահանդեսը» Աղեքսանդրինյան բեմից վրնդված էր իբրև մի անբեմական, ուշադրության անարժան գործ։ Պետք էր, որ դա Պետերուրդ պուրդ պոլսեցի մի հայ դերասան, կատարե Արքենինի դերը և ապացուցե, որ մենք սխալված ենք իդել, և թե լերմոնտովը, բացի այն, որ մեծ բանաստեղծ է, նաև մեծ դրամատուրգ է։ Շնորհիվ Զեր Աղամյանի, «Դիմակահանդեսը» կրկին մտավ Աղեքսանդրինյան բեմի ռեպերուտարի մեջ և ներ-

<sup>1</sup> „Рампа и жизнь“, М., 1916, № 22, стр. 6.

կայումս ներկայացնում են՝ հետևելով ձեր դերասանի տված հոգեբանության»<sup>1</sup>։

Լրագրերը շեշտում էին, որ Արքենինի դերում Պետրոս Աղամյանը ապացուցեց, որ ինքը հանձարել է, ցուցաբերելով իր ստեղծագործական մտքի ամբողջ պայցառությունն ու խորությունը, իր տաղանդի ամբողջ լայնածավալությունը, որ պսակված էր իր ստեղծած կերպարներին քննադատաբար մոտենալու ընդունակությամբ։

Մոսկվայից Պետրոս Աղամյանը մեկնեց Պետերբուրգ, ուր նրա հսկայական հաջողությունը միտք ներշնչեց Ալեքսանդրինյան թատրոնի զեկավարներին՝ առաջարկել նրան երեք տարով պայմանագիր կապել թատրոնի հետ։ Սակայն Պետրոս Աղամյանը մերժեց մայրաքաղաքի կայսերական թատրոնի դերասան դառնալու փայլուն հնարավորությունը, և ոչ նրա համար, որ վախենում էր ոռուսաց լեզվին տիրապետելու դժվարություններից (ի դեպ՝ նա արդեն այնքան գիտեր ոռակերեն, որ բերանացի կարգում էր «Դեմոնը», Զացկու մենախոսությունը և այլն) <sup>2</sup>, այլ նրա համար, որ չէր

<sup>1</sup> Ս. Արծրունի, Աղամյանը Շեքսպիրի դերերում և Աղամյան դերասանի մասին, «Տարագ», Թիֆլիս, 1916, № 4—5,էջ 50,

<sup>2</sup> Տես Վլ. Ի. Նեմիրովիչ-Դանչենկոյի հոդվածը, «Московская иллюстрированная газета» լրադրում, М., 1891, 7 июня.

կամենում լքել հարազատ հայ բեմը, թիկուզ և  
Պետերբուրգում փայլուն կարյերայի հեռանկարի  
համար: Դրանով իսկ հայ մեծ գերասանը հանդես  
բերեց մի հատկություն, որ պատկանում էր ոչ  
միայն նրան, այլև հայ բեմի բոլոր առաջավոր  
գործիչներին, այն է՝ թի ոռու գեղարվեստական  
կուլտուրայի խոր ուսումնասիրությունը, նրա առջն  
խոնարհվելը գեռևս չէր նշանակում մոռանալ  
իրենց հայրենասիրական պարտքը՝ ողջ մարդկու-  
թյան կուլտուրան, այդ թվում, անտարեսակույց, և  
ոռու մեծ ժողովրդից փոխառած կուլտուրան տա-  
նել հասցնել հարազատ հայ գոռովարեն:

Սուկվալից և Պետերբուգից Հետո Աղամյանը մեծ հաղթանակներով դաստիլներ ունեցավ Կիևում, Խարկովում, Պոլտավայում, Ելիզավետովադում, Դոնի Ռոստովում, Նիժնի-Նովգորոդում, Վլադիկավկազում, Տագանրոգում, Կազանում ու Ռոստովաստանի և Ուկրաինական պատմութեան ժամանակակից աշխարհում:

Ըստաբ և Ավրամիսայի այլ քաղաքներում։  
Ծուսաստանում եղած տարիներին մեծ դերա-  
սանի արվեստը հասունացավ, զարձավ կենսակա-  
նորեն ջգմարտացի, բովանդակալից, հագեցած  
ոռմանտիկ ոգևորությամբ, հերոսականությամբ։  
Պետրոս Աղամյանը դարձավ ոռւս ունալիստական  
դպրոցի դերասան, «ապրումների» մեթոդի դերա-  
սան։ Դրանով էլ բացատրվում է նրա բացասական  
վերաբերմունքը դեպի խաղի ֆրանսիական դրա-

բոցը, գեղի Շներկայացնելու մեթոդը, գեղի եվ-  
րոպական գերասանների մելոդրամատիկ, վերամ-  
բարձ խաղը: Ահա թէ ինչու, համեմատելով Մ. Ն.  
Երմոլովայի, Մ. Գ. Սավինայի, Սիրանույշի ու ա-  
լիստական բարձր արվեստը Սառա Բեռնարի ար-  
վեստի հետ՝ Պետրոս Ադամյանը, բնականաբար,  
առաջիններին բարձր էր դասում Փրանսիական  
հոչակագոր գերասանունուց<sup>1</sup>:

Պետրոս Ադամյանը, ի՞նչ էր, չէր բացասում Սա-  
ռա Բեռնարի արվեստի զրական կողմերը՝ ֆրան-  
սիական դպրոցի փայլուն առողջապահությունը, կեց-  
վածքի և շարժումների ուրույն արտահայտչականու-  
թյունը, —սակայն այս ամենը, որ արվում էր էֆեկ-  
տի համար, Պետրոս Ադամյանի համոզմամբ դերա-  
սանություն բերում էր յոկ արտաքին հաջողություն։  
Այնինչ Սիրանուշի, Մ. Ն. Երմոլովայի, Մ. Գ. Սա-  
լինայի խաղում իշխում էր պարզությունը, խորու-  
թյունը, կենսականությունը, կերպարն օրգանա-  
պես զգալու վարպետությունը, ըստ որում նրանք  
մի բոպե անդամ չէին մոռանում իրենց կատարած  
գերի կենցաղային և հոգեբանական նույնիսկ ա-  
մենաաննշան մանրամասնությունների նույն ձեւա-  
գորումը։

Հակայական հաջողություն ունեցավ Պետրոս Ադամյանը Օդեսայում, ուր նա գնաց 1887 թվականին ոռու գերասանների հրավերով և մնաց մեկ ու կես տարի: Օդեսայում Ադամյանին նվիրված շատ հոդվածներ ու քննադատականներ են գրվել, իսկ այն ժամանակվա թատերական հայտնի քննադատներից մեկը՝ Ա. Յարիշկինը գրեց և առանձին գրքույկով հրատարակեց մի շատ մանրամասն հետազոտություն՝ «Ադամյանը Համլետի դերում» վերնագրով:

1888 թվականին Պետրոս Ադամյանը վճրադառնում է Պոլիս: Եվ բնական է, որ յուրացնելով ոռու արվեստի ռեալիստական տրադիցիաները և խանդավառվելով ոռու հասարակական մտքի առաջավոր գաղափարներով, նա այժմ արդեն այլևս անտանելի էր համարում Պոլսի նեխված միջնորդությունը, սակայն ծանր հիվանդությունը՝ կոկորդի թրարակացավը գրկում է նրան այդ հնարավորությունից:

Լսելով Պետրոս Ադամյանի հիվանդության և նյութական ծանր կացության մասին, հայտնի գետու ուրիշ գերասանների Մ. Գ. Սավինան, Կ. Ա. Վալեամովի և ապրիլի 1-ին Պետերբուրգում կազմակերպում է

երեկություն, որի հասույթը ուղարկվում է Պետրոս Ադամյանին, սակայն, դժբախտաբար, արդեն ուշ էր: Մեծատաղանդ արտիստ Պետրոս Ադամյանն այլևս կենդանի չէր:

Պետրոս Ադամյանի ստեղծագործական գործունեությունը ծավալվել է ցարական ռեալիզմից տարիներին, երբ ոռու ռեալիզմիոն մամուլը ամեն կերպ հրահրում էր մեծապետական շովինիզմ, ատելություն և արհամարհանք դեպի Ռուսաստանի այլ ազգությունները, դրանց թվում նաև դեպի հայերը: Նման վիրավորանքներից չի խուսափել և Պետրոս Ադամյանը: Այսպես, օրինակ, «Русский курс» թերթը հայտարարում է, թե Ադամյանը հայերէն չպետք է խաղա, գտնելով, որ այդ լեզուն «կոշտ է, կոպիտ է և անախորժ»<sup>2</sup>:

Իր հերոսական ստեղծագործությամբ՝ Պետրոս Ադամյանը բողոքում էր սոցիալական և ազգային ճնշման գեմ, պայքարում էր հայ ժողովրդի ապագայի և ազատության համար: Ութունական թվականների մոտայլ իրազրության մեջ շարունակելով Գևորգ Զմշկյանի ռեալիստական տրադիցիաները, Պետրոս Ադամյանը բարձրացրեց

<sup>1</sup> ՏԵ՛ս «Մշակ», 1891, № 45, «Новое время», СПБ, 1891, № 5418.

<sup>2</sup> Մեջ է բերվում «Մշակ» լուսաբիթ, 1888, № 39:

դրանք մի նոր աստիճանի, որովհետև Պետրոս Աղամյանի հերոսականությամբ հագեցած ռեալիզմը բացահայտեց այդ ժամանակաշրջանի հայ թատրոնի հիմնական թեման՝ «իրականության և իդեալի հակադրության ոլլերգությունը»<sup>1</sup>, Պետրոս Աղամյանը ցուց էր տալիս «իրականության հետ չհաշտվող, մաքառող հերոսներ, և, այդպիսով, կյանքի էր կոչում ժողովրդի հոգում փայփայակող ազատագրական-հումանիստական ձրգությունները»<sup>2</sup>:

Պետրոս Աղամյանի արվեստը հիացնում էր շատ ուսուցիոներների և ժամանակակից գեղարվեստագետների: Ստեփան Շահումյանը Պետրոս Աղամյանին համարում էր հանճարեղ դերասան: Վ. Ի. Նեմիրովիչ-Դանչենկոն Աղամյանի մահվան կապակցությամբ իր հոդվածներից մեկում հիշում է. «Պատահում էր հանդիպում իի ևս նրան անհատական կյանքում: Այստեղ ևս մի րոպե չէր կարելի մոռանալ նրա մեջ արտիստին և պոետին: Միշտ խոսում էր նա ինչ-որ արտասովոր փափուկ ձայնով, թեև նա բարիտոն էր, և նրա ձայնի երաժշտականությունն ինքնին արդեն հմայի տպա-

<sup>1</sup> Ուրենա Զարյան, Պայքար սետիզմի համար հայ թատրոնում, Հայկական ՍՍՌ ԳԱ Հբատարակչություն, Երևան, 1953. Էջ 1.

<sup>2</sup> Επειδὴ μέτηπομ, 59 15;

վորություն էր թողնում: Ըստ որում՝ նա մի առանձին ձև ուներ — խոսում էր վերացած, պոհետիկ պատկերներով և, թվում էր, երբեմն մոռանում էր գրուցակցին և դիմում իրեն միայն տեսանելի մի տեսիլքի: Եթե դուք պատահաբար ընդհատում էիք նրա խոսքը որևէ բառով, նրա մեջ մի ակնթարթում ապշեցուցիչ փոփոխություն էր կատարվում. Նա նայում էր ձեզ այն հատուկ հայացքով, որով նայում են քնից արթնացածները, հետո ասութանաբար այդ հայացքը զարմացականից դառնում էր քնիքով և հանկարծ ձեր առջև Համլետն էր կամ Չացկին և, պատասխանի փոխարեն՝ մի ամբողջ մենախոսություն: Դուք մոռանում եք, թե ուր եք, Զեր առջև արտիստն է, գեղարվեստական ոգևորության ամենաբարձր պահին<sup>1</sup>: Եվ հետո Վ. Ի. Նեմիրովիչ-Դանչենկոն ասում է Պետրոս Ադամյանի մասին. «Ողբերգակի նրա արտակարգ տաղանդը պատիվ կբերեր ամեն մի ազգի»<sup>2</sup>; Իսկ Կ. Ս. Ստանիսլավսկին Պետրոս Ադամյանին անվանել է «միծողբերգակ»<sup>3</sup>:

## Այսպիսով, մուսաստանում ազատագրական

<sup>1</sup> „Московская иллюстрированная газета“, М., 1891, июня.

## Նույն տեղում:

3 կ. Մ. Մտանիսլավկով նամակը Վ. Տ. Վարդանյանին՝ գրված 1935 թվականի մարտի 10-ին, «Սովետական արքայություն», Երևան, 1938, № 1,էջ 64:

շարժման ռազնուին կամ ռեռլյուցիոն-դեմոկրատական ժամանակաշրջանում ոռւս կլասիկ գրամատուրգիան, կովելով հակառեալիստական ուղղությունների դեմ, տարածվում և հաստատվում է նաև հայ բեմի վրա, հայկական և արևմտահլուպական կլասիկայի հետ օգնելով նրա առաջավոր գործիչներին՝ հայ թատրոնի ռեպերտուրաը մաքրելու կեղծ-պատմական, մելոդրամատիկ պիեսներից ու ճանապարհ բաց անելու ազգային ռեալիստական դրամատուրգիայի և թատրոնի հետագա զարգացման համար։ Սկսած 80-ական թվականներից հայ բեմում գերակշռող տեղ է գրավում խաղի ռեալիստական ոճը։ Այդ ժամանակի հայ թատրոնում դրամատուրգիական կերպարների մեկնաբանումը ավելի ու ավելի էր շեղվում պերսոնաժի կենցաղային պատկերումից՝ դեպի նրա սոցիական մեկնաբանումը։ Դրան ամեն կերպ նպաստում էին ոռւս ռեռլյուցիոն-դեմոկրատների հարցաքնները, որոնք հարազատորեն յուրացրել էին քննադատական ռեալիզմի համար պայքարող հայ բեմական գործիչները։

Այդ ժամանակաշրջանում, սակայն, հայ բեմում տակավին շարունակվում էր և խաղի մելոդիամացիոն, կլասիցիստական ոճը, որի դեմ առաջատար գերասանները ավելի մեծ ուժով պայքարում էին նաև հետագա տարիներին։

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

(1895—1920)

### 1

Տասնիններորդ դարի վերջին և քսաներորդ դարի սկզբին, ազատագրական շարժման պրոլետարական էտապում, Ռուսաստանում տեղի են ունենում սոցիալ-տնտեսական լրջագույն փոփոխություններ։ 1861 թվականից հետո արագ զարգացող ոռւսական կապիտալիզմը XIX դարի վերջին մտնում է իր զարգացման բարձր շրջանը՝ իմպերիալիզմի շրջանը։

Իմպերիալիզմի շրջանում իր հերթին հղորանում է և պրոլետարական շարժումը։ Ռուսաստանում և մասնավորապես Անդրկովկասում լայն տարածում է ստանում պրոլետարիատի ռեռլյուցիոն թեորիան՝ մարքսիզմը։ Ռուս բանվորներին և շարական Ռուսաստանի ճնշված ազգությունների բոլոր բանվորներին զվարարում է Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական պարտիան։

Այդ շրջանում ուժեղանում է և ազդային փոք-  
րամասնությունների ձնշումը ցարիզմի կողմից:  
Յարական Ռուսաստանը դառնում է ժողովուրդնե-  
րի բանտ: «Յարիզմը ձնշում, իսկ երբեմն պար-  
զապիս վերացնում էր տեղական դպրոցը, թատ-  
րոնը, լուսավորական հիմնարկները, որպեսզի  
մասսաներին խավարի մեջ պահի», — գրում է  
ի. Վ. Ստալինը<sup>1</sup>:

Այդ ժամանակաշրջանում Հայ ժողովրդի մղած ու եղացուցիչոն պայքարի համար խոշոր նշանակություն ունեցավ ոռուական մարզսիստական մամուռը: Լենինյան «Խոկրայի» օրինակով, 1902 թվականից հրատարակվում է Հայկական բոլեկիլյան «Պրոլետարիատ» թերթը, իսկ 1903 թվականից նրան միանում է նաև վրացական «Բրձոլա» («Պայքար») թերթը և ստեղծվում է «Պրոլետարիատի կոփվը», որը լույս էր տեսնում երեք լեզվով՝ Հայերեն, վրացերեն և ռուսերեն: Ռուսաստանի կենտրոնում, ինչպես և նրա ծայրամասերում աճում ու ընդարձակվում է բանվորական շարժումը, և ընականաբար երեան է գալիս նաև այդ շարժումն արտացոլող և պատկերող առմենուր:

ինսուլական թվականների երկրորդ կեսից հայ թատրոնում սկսվում է բեմական ռեալիզմի

<sup>1</sup> *b.* *q.* *Y* *m m b u, b p q b p, 5m or, 4, k 9 305,*

զարգացման մի նոր փուլ, որպես անմիջական արդյունք ուղարկան առաջավոր թատրոնի ազգի ցույցը:

Բժիշկիսի ոռաւական դրամատիկական թատրոնը ստեղծվել է 1845 թվականին։ Դա Անդրկովկասով նոր ժամանակի առաջին պրոֆեսիոնալ մշտական թատրոնն էր։ Անդրկովկասով՝ գաղութային քաղաքաբանությունն ամրապնդելու նպատակով ցարական կառավարության կազմակերպած այդ թատրոնը, համենայն դեպս, դրական դեր խաղաց, քանի որ Հենց նրա շնորհիվ հայ ինտելիգենցիան ծանոթացավ ոռաւ կուտուրայի, ոռաւ ռեալիստական դրամատուրգիայի լավագույն նմուշների հետ։ Ճիշտ է, լինելով «արքունական»՝ այդ թատրոնը, իհարկե, չէր կարող խուսափել իր ռեպերտուրի մեջ ոռաւ պաշտոնական դրամա-թուրների էճանագին մելոդրամատիկ պիեսները մտցնելուց և չոր կարող գեթ որոշ շափով վիճել մի թատրոն, որ ձգում է Անդրկովկասի ժողովուրդների ուղագրությունը շեղել սոցիալական հակասություններից՝ իր «գվարժացուցիչ» ներկայացում-սություններից։ Եվ, այնուամենայնիվ, այդ պարտադիր ռեներով։ Եվ, այնուամենայնիվ, այդ պարտադիր ռեներով։ Եվ, որ որշում էր Թիֆլիսի թատրոնի պերտուարը չէր, որ որշում էր Թիֆլիսի թատրոնի հասարակական-ստեղծագործական դեմքը և նշանակությունը։ Երբեք չի կարելի հաշվի շառնել այն կարևոր փաստը, որ ոռաւ կլասիկների բոլոր լա-

վագույն պիեսներն առաջին անգամ Անդրկովկասում երևան եկան հենց այդ թատրոնի բեմում և դրանով իսկ դրդեցին հայ և վրաց թատրոններին՝ ձեռնարկել այդ դրամատիկական երկերի բեմադրությանը: Այդպես բեմադրվեցին Ա. Ն. Օստրովսկու, Ն. Վ. Գոգոլի, Ա. Ս. Գրիբուդովի, Լ. Ն. Տոլստոյի, Ա. Պ. Չեխովի և այլ անվանի հեղինակների շատ պիեսները:

Հայ թատրոնի գործիչները, հաճախելով ոռւական ներկայացումները, սովորում էին նրանցից ուելիզմի բարձր արվեստը, կենսական ձըշմարտությունը, յուրացնում էին ոռւա դերասանների խաղի ոճը:

Թիֆլիսի ոռաական թատրոնի կատարած դեր հայ թատրոնի զարգացման գործում միայն այդ չէ: Բանն այն է, որ Թիֆլիսի բեմի վրա ոչ սակավ գաստրոլային ելույթներ էին տալիս ոռւա դերասանների լավագույն խմբեր, առաջին հերթին Փոքր թատրոնը, այսպես կոչված, «Մոսկվայի երկրորդ համալսարանը», ապա և առանձին նշանավոր դերասաններ: Դժվար չէ հասկանալ այդ գաստրոլների նշանակությունը հայ դերասանների համար: Հատկապես 90-ական թվականներին նըրանք Թիֆլիսում դիտել են ոռւա դերասանների բազմթիվ գաստրոլային ներկայացումներ:

Դեռևս 1883 թվականին, Պետրոս Աղամյանի

օրոք, Թիֆլիս գաստրոլների էին եկել Մ. Ն. Երմոլովան և Գ. Ն. Ֆեդոտովան, Փոքր թատրոնի դերասաններ Օ. Ա. Պրավդինը և Ա. Ի. Յուժին-Սումբատովը:

1884 թվականին այստեղ հանդես եկավ նշանավոր դերասան Մ. Տ. Խվանով-Կողելսկին: 1890 թվականին Թիֆլիս գաստրոլների էր եկել Մ. Գ. Սավինան, իսկ 1891 թվականին՝ երկրորդ անգամ եկել էր Մ. Ն. Երմոլովան: Նույն թվականին Թիֆլիսում խաղում էր Փոքր թատրոնի հիմնական խումբ՝ Ե. Կ. Լեշկովսկայալի, Օ. Ա. Պրավդինի, Ն. Կ. Յակովլիի և այլոց մասնակցությամբ: Նույն այդ ժամանակ նշանավոր ողբերգակ Պ. Ն. Օրլենկը Թիֆլիսում խաղաց հետագայում աղմուկ հանած Ռասկովնիկովի դերը՝ Ֆ. Մ. Դոստովեսկու «Ոճիր և պատիժ» վեպի փոխադրության մեջ:

1892 թվականին Թիֆլիսի թատերական կյանքը նշանավորվում է երկու մեծ դեպքով՝ Պետերբուրգի Ալեքսանդրինյան թատրոնի գաստրոլը և Վ. Դավիդովի, Վ. Ա. Միշուրինա-Սամոյլովյայի, Ռ. Բ. Ապոլոնսկու, Ե. Գ. Մեդվեդեայի, Պ. Գ. Լենսկու ու այլոց մասնակցությամբ և Պ. Ա. Ստրեպետովյայի ելույթով:

1894 թվականին Թիֆլիսում առաջին անգամ հանդես է գալիս Վ. Ֆ. Կոմիսարժենսկայան և նորից գաստրոլների է գալիս Մ. Գ. Սավինան:

1898 թվականին լրիվ կազմով թիֆլիս է գտնիս Մոսկվայի Ֆ. Կորչի թատրոնը:

1900 թվականին թիֆլիսեցիները նորից հիանում են Մ. Ն. Երմոլովայի և Մ. Գ. Սավինայի խաղով, իսկ 1901 թվականին այսուեղ դաստիարակների է գալիս Փոքր թատրոնի մեծ խոմքը՝ Օ. Ա. Պրավդինի, Ն. Օ. Վասիլեի, Ա. Ա. Յաբլովինայի, Ե. Գ. Տուրչանինովայի, Ա. Ֆ. Գրիբունինայի և այլոց մասնակցությամբ, ապա և ելույթ են ունենում նշանավոր ողբերգակներ՝ Ռաֆայիլ և Ռոբերտ Ադելհեմ եղբայրները:

Փոքր և Ալեքսանդրինյան թատրոնները ցուց տվեցին իրենց լավագույն ռեպերտուրը, ուր գերիշխող տեղ էին բռնում Ա. Ն. Օստրովսկու, Ն. Վ. Գոգոլի, Ա. Ա. Գրիբուեզովի, Ի. Ս. Տուրգենևի և այլոց պիեսները: Թիֆլիսեցիները, այդ թվում, իշարկե, և հայ դերասանները տեսան աշքի ընկնող ռուս դերասանուհիներ Մ. Ն. Երմոլովային, Գ. Ն. Ֆեոդորովային, Մ. Գ. Սավինային, Վ. Ֆ. Կոմիսարժևսկային, Պ. Ա. Ստրեպենովային իրենց զուիսավոր դերերում՝ Կատերինան՝ «Ամպրոպ»-ում, Մարիա Ստյուարտը, Ֆեդրան, Ժաննա դ'Արկը, Լիզավետան՝ Ա. Ֆ. Պիսեմսկու «Դառն ճակատագիր»-ում, Մեդեան, Կրուշինինան՝ «Անմեղ մեղավորներ»-ում, Ադենան, Կրուշինինան՝ «Անմեղ մեղավորներ»-ում, Ադրիեննա Լեկուլիները և շատ ուրիշներ:

Թիֆլիսի մամուլը հիացմունքով էր արտահայտվում այդ ներկայացումների մասին: Գրում էին, որ երիտասարդ Վ. Ֆ. Կոմիսարժևսկայան ցնցեց թիֆլիսեցիներին, որ Մ. Ն. Երմոլովան իր բարձր, մարդկային արվեստով անսահման սերէ վայելում, որ թիֆլիսի ոռւսական թատրոնը վաղուց շեր տեսել հասարակության այնպիսի հսկայական հոսանք, ինչպես Մ. Գ. Սավինայի մասնակցությամբ տեղի ունեցած ներկայացումներին:

Նշելով Փոքր և Ալեքսանդրինյան թատրոնների, Կորչի թատրոնի հաջողությունները, թատերական առաջավոր քննադատությունն այն ժամանակ աշք շեր փակում նաև նրանց ռեպերտուրի թերությունների առջև: Ուստի համաշխարհային կլասիկների հետ միասին՝ նրանց ռեպերտուրում փոքր տեղ շեին գրավում նաև թուլ, հակագեղարվեստական, «զվարձացուցիչ» պիեսները, որոնք նկատելի առատությամբ սկսեցին երևալ ռեակցիայի տարիներին՝ 80-ական թվականների վերջին և 90-ական թվականների սկզբին:

Այդպիսի մթնոլորտում հետաքրքրությունը դեպի ուսւական կուլտուրական կյանքը անտարակույս շարունակ աճում և խորանում էր: Այսպես, հայ մամուլում լայնորեն լուսաբանվում էին ոստական կուլտուրայի նշանավոր տարեթվերը՝ 1891 թվականին՝ Մ. Յու. Լերմոնտովի՝ մահվան 50-ամ-

յակը, 1895 թվականին՝ Ա. Ս. Գրիբուեդովի ծննդյան 100-ամյակը, 1899 թվականին՝ Ա. Ս. Պուշկինի ծննդյան 100-ամյակը, 1900 թվականին՝ ոռոսական առաջին պրոֆեսիոնալ թատրոնի հիմնադրման 150-ամյակը:

Ուստի և հայ ուեակցիոն մամուլը ձգտում էր մի կողմից՝ հայ կուտուրան առանձնացնել ուստականից և մյուս կողմից՝ վարկարեկել թե՝ մեկը և թե՝ մյուալ: Այս կապակցությամբ անհետաքրքիր մի լինի հիշատակել երաժշտական կյանքից հետեւյալ փաստը, որ վկայում է այն ազգային-նիշիլստական քաղաքականության մասին, որ այդ տարիներին վարում էր ցարական ուեակցիոն մամուլը: 90-ական թվականներին, շարունակելով Պետրոս Արտամյանի տրադիցիաները այս անգամ արդեն օպերայում, հայ խոշոր երգիչներից շատերը՝ դրամատիկ տենոր Ներսես Շահլամյանը, բարիտոն Բեգլար Ամբիրջանյանը և ուրիշները հանդիս են դալիս Մոսկվայի Մեծ և Պետերբուրգի Մարինսկի թատրոնների բեմերում: Եվ ահա, Թիֆլիսի ուստական պաշտոնական «Կավկազ» թերթը, անվանելով նրան «առաջին մեծության աստղ»՝ դժբոհում էր, որ երգչի ուեպերտուրի մեջ են մացվել ուստիստ-կոմպոզիտորների ստեղծագործություններ և, հատկապես, հայ ժողովրդական երգեր: «Ինչո՞ւ նա մի կամենում, — բացագանչում է թերթը, — իրեն

ցուց տալ իսկական իտալական երաժշտության մեջ, այլ երգում է մեր, այսպես կոչված, ուեալիստնորարաներին: Ինչո՞ւ հասարակությանը հյուրասիրել «երաժշտական թյուրիմացություններով», այն ժամանակ, երբ արտիստը շատ տվյալներ ունի՝ ունկնդիրներին պատճառելու էսթետիկական բարձր հաճույքը<sup>1</sup>: Իսկ հայ երգերի կապակցությամբ թերթը հայտարարում էր, որ նրանք «պարզապես չեն էլ հասնում» ունկնդիրներին:

Եվ այնուամենայնիվ, հակառակ նման նիհիլստական քաղաքականության, ուստի հասարակական և կուտուրական առաջավոր գործիչների հետաքրքրությունը դեպի հայ կուտուրան գնալով ուժեղանում է և խորանում: Ուստեղեն են թարգմանվում հայ գրողների երկերը, ուստի վրա խաղացվում են Գաբրիել Սունդովյանի պիեսները, գրվում են հետազոտական աշխատություններ և հոդվածներ հայ գրականության ու թատրոնի մասին, Ուստաստանի հայ գաղութներում շարունակվում են հայերեն ներկայացումները, սկսվում են հայ պրոֆեսիոնալ խմբերի գաստրոլային ելույթները Ուստաստանի համարյա բոլոր խոշոր քաղաքներում:

Այդ կարևորագույն դեպքերը նպաստեցին այն

<sup>1</sup> «Կավկազ», Տիֆլիս, 1892, № 147.

բանին, որ հայ թատրոնի ստեղծագործական կյանքում 90-ական թվականների երկրորդ կեսից սկսավում է մի նոր վերելք՝ քննադատական ռեալիզմը՝ հակառակ հակաժողովրդական ուղղությունների նկատելի աշխատվության, է՛լ ավելի է հաստատվում հայ թատրոնի բնում:

2

Հայտնի է, որ իմպերիալիզմի դարաշրջանում ավելի ևս սրվում է յուրաքանչյուր ազգային կուտայում երկու տարբեր կուտուրաների բախումը:

Գրականության և արվեստի մեջ համապատասխանորեն ուժեղանում են հակառեալիստական հոսանքները՝ գեկադանսը, իմպրեսիոնիզմը, սիմվոլիզմը, նատուրալիզմը: Այդ երկույթը նկատվում է ինչպես ոռու թատրոնում, նույնպես և Ռուսական կայսրության մի շարք ժողովուրդների, այդ թվում նաև հայ թատրոնում: Այդ ժամանակ հայ բեմ ներթափանցած մի քանի ոռու ռեալիզմոն դրամատուրգների նվազ գեղարվեստական պիեսները, այլ ժողովուրդների հեղինակների նույնանման երկերի հետ միասին, նկատելի շափով քայլքայում են նաև հայ թատրոնը և զրկում հանդիսականին կողմնորոշվելու հնարավորությունից՝ նույն քայլքայիշ ազդեցությունը գործելով նրա վրա ևս:

Սակայն պետք է ասել, որ այդ ժամանակ էլ հայ թատրոնի առաջավոր գործիչները ուսւ թատրոնի օգնությամբ շարունակում էին առաջ գնալ հայ բեմում ռեալիզմ հաստատելու ուղիով:

Իննունական թվականների երկրորդ կեսին հայ բեմում շարունակվում են հաջողությամբ բեմադրվել «Խելքից պատուհասը», «Անմեղ մեղավորները», «Եկամտավոր պաշտոնը», «Աղքատությունը արատ չէ», «Ժլատ ասպետը» և այլն, սակայն հայ բեմական ռեալիզմի զարգացման մեջ առանձին նշանակություն ունի «Միկրորի» ներկայացումը՝ 1898 թվականի նոյեմբերի 3-ին Բաքվում և ապա նոյեմբերի 21-ին Թիֆլիսում, որը հետո վերաբեմադրություններով հասել է մինչև 1902 թվականը:

Այդ բեմադրության մեջ խաղում էին՝ Գևորգ Պետրոսյանը՝ Քաղաքապետ, Պոլոս Արաքյանը՝ կլետակով, Հովհաննես Աբելյանը՝ Օսիպ, Գրիգոր Ավետյանը՝ Բոբչինսկի, Գևորգ Տեր-Գավթյանը՝ Դորչինսկի, Արամ Վրուցը՝ Լյապկին-Տյապկին և ուրիշներ: Ներկայացման ռեժիսորն էր Գևորգ Պետրոսյանը:

Թատերական պրոդեստ քննադատությունը շատ բարձր գնահատական տվեց այդ բեմադրությանը, որպիսին հետևանք էր դերասանների կողմից հերոսների ներաշխարհի խոր ըմբռնման, հարթ, անթերի, բատ ամենայնի մտածված ան-

սամբլի և այն բանի, որ դերասանները ոչ մի տեղ չկորցրին շափի թանկագին զգացումը ու կարողացան ցուց տալ բեմի վրա ոռու կյանքի տիպիկ բնավորությունները՝ մտցնելով իրենց կատարման մեջ ազգային այն ինքնուրուցնությունը, որ հայ դերասանների խաղը տարբերում է այլ ազգության դերասանների խաղից: «Վերաքննիչի» ներկայացումը, — գրում էր «Նոր-Դար» թերթի ոեցենզենտը, — մի անպայման հաջողություն էր մեր դերասանական մարմնին, որ քիչ անգամ այսքան կատարյալ ամբողջությամբ և արտահայտիչ բնորոշությամբ դուր էր եկել, որքան ներկա առթիվ: Կատակախաղի հինգ գործողության միջոցին դիտելի էր յուրաքանչյուր դերասանի քով նույն փութեռությունը, նույն հոգածությունը գերազանցելու յուր խաղի մեջ յուր ընկերներին... Ամենքն էլ կատարյալ մարմնացումն էին իրենց դերերի... Ամեն ինչ մտածված է այս խաղում, բեմական արհեստական պահանջներին հարմարեցված են միմոսական, զվարթ և լուրջ ձևեր, որոնք հետաքրքրական և այնքան հաշող են անում «Վերաքննիչը»<sup>1</sup>:

Մամուկը առանձնապես բարձր գնահատեց երեք դերասաննի խաղը՝ Պետրոսյան-Քաղաքապետի, Արաքսյան-Խլեստակովի և Աբելյան-Օսիպի:

<sup>1</sup> «Նոր-Դար», Թիֆլիս, 1898, № 217:

Քաղաքապետի դերի կատարման և ամբողջ ներկայացման մասին գովասանքով է արտահայտվում գրող Ալեքսանդր Շիրվանզադեն, նշելով Գևորգ Պետրոսյանի խաղի լայն դիապազոնը<sup>1</sup>: «Մշակը» գրում էր, որ Գևորգ Պետրոսյանը իր դերը «այնպես լավ կատարեց, որ հաջող կարող էր համարվել նույնիսկ ոռու բեմի վրա»<sup>2</sup>:

«Մշակ» թերթի կարծիքով՝ առանձնապես լավ էր Քաղաքապետի վերջին մենախոսությունը<sup>3</sup>: Նույն այդ կարծիքին էին և մյուս քննադատները: Այսպես, «Նոր-Դար» թերթը շեշտում էր, որ Փինալում Գևորգ Պետրոսյանը «հետանգուն պերճախոսությամբ, զգայուն, ցավոտ շեշտերով, կատաղի բարկությամբ, խոլական ինքնակրույս ձեռքերով տրորում էր, փրփրում էր, ուսում էր ինքն իրեն, և ամենից հետո ընդհանուր ապշության տեսարանը, իսկական վերաքննիչի գալստյան լուրի վրա՝ զորավոր էֆեկտով փակում է խաղը»<sup>4</sup>:

Արաքսյան-Խլեստակովի մասին գրում էին, որ դերասաննը միծ կարողությամբ պահպանեց

<sup>1</sup> Տե՛ս «Նոր-Դար», 1898, № 221:

<sup>2</sup> Մշակ, 1898, № 218:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> «Նոր-Դար», 1898, № 217:

տակտը և շափը և այն էլ այնպիսի դերի, որը շատ հեշտությամբ կարող էր փոխվել ծաղրանկարի<sup>1</sup>:

Քննադատի վկայությամբ, դերասանը ճիշտ էր գտել Խլեստակովի բնավորության մեջ այն հատկանշականը, որ «նա ստախոս է ոչ թե խարելու կամ մի որեկցի շահադիտական նպատակով, այլ ինչպես սիրող, որն ինքն իր ստախոսությունից ոգևորվում է և մինչև իսկ ինքնախարելության է հասնում»<sup>2</sup>:

Հովհաննես Աբելյանի կենսական ճշմարտացիությունն էր շեշտում նրա դերակատարման ականատեսը, գրելով, որ «թվում էր, թե ոռու տիպը կենդանացած կանգնած է բեմի վրա»<sup>3</sup>:

Ինչո՞վ բացատրել Ն. Վ. Գոգոլի հանձարեղ կոմեդիայի այսպիսի ճշգրիտ և խորը մեկնաբանումը հայ բեմի վրա: Նրանով, որ ներկայացման բոլոր կատարողները բազմակողմանիորեն ուսումնասիրել էին ոռու թատրոնի փորձը և նրանցից շատերը մինչ արդ խաղացել էին ոռու բեմի վրա:

Պետք է նշել, որ հայ դերասանների կողմից ոռու թատրոնի ստեղծագործական փորձի յուրացումը Մոսկվայում և Պետերբուրգում սկսվել էր

վաղուց՝ դեռևս XIX դարի 40—50-ական թվականներին: Ուժունական թվականներին այդ տրադիցիաներն առավել ամրապնդվում են Պետրոս Ադամյանի կողմից: Կամ թե Հիշեցնենք, օրինակ, այնպիսի մի ուելիստ-դերասանի, ինչպիսին Գրիգոր Աբրահամյանն էր (1859—1894), որը 80-ական թվականների վերջին փոխադրվում է Մոսկվա և «երկու տարի շարունակ, ամենայն լրջությամբ, հետևում է Մոսկվայի Փոքր թատրոնի արտիստների խաղին, աշխատելով մշակել յուր ներքինը և խաղի մի որոշ ձև իրացնել»<sup>1</sup>: Փոքր թատրոնը վճռական դեր խաղաց այդ դերասանի ստեղծագործության մեջ, օգնեց նրան կանգնելու ուելիստական դիրքերի վրա: Դաստիարակված մեծ Շշեպկինի տրադիցիաներով՝ Գ. Աբրահամյանը դերի պատրաստման մեջ զլիսավորը համարում էր նրա հիմնավոր ուսումնասիրությունը, արտասանության մշակման վրա կատարած աշխատանքը, արտասանություն, որ պետք է պարզ լիներ և լի զգացմունքով: Գ. Աբրահամյանի համար «վատ» և «լավ» դերեր շկային, ոնա դերի արժանավորությունը գրած թերթերի բանակով չէր չափում»<sup>2</sup> և շատ մեծ բարեխղճությամբ էր վերաբերում իր աշխատանքին:

<sup>1</sup> «Թատրոն», Թիֆլիս, 1895, № 3, էջ 91—92;

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 92:

<sup>1</sup> ՏԵ՛՛ «Մշակ», 1898, № 218;

<sup>2</sup> Նույն տեղում;

<sup>3</sup> Նույն տեղում:

Նույն այդ պրոցեսն է տեղի ունեցել նաև «Բնիգորի» ներկայացման մասնակիցների ստեղծագործության մեջ:

Հովհաննես Աբելյանը ևս 1889 թվականի ձմռանը համարյա չորս ամիս ապրեց Մոսկվայում, հաճախ լինում էր Փոքր թատրոնում, տեսնում էր Գ. Ն. Ֆեդոտովային, Մ. Ն. Երմոլովային, Օ. Օ. Սադովսկային, Ա. Պ. Լենսկուն, Ա. Ի. Յուժին-Մոսքատովին, Մ. Պ. Սադովսկուն և ուրիշներին<sup>1</sup>: Իսկ 1895 թվականին Հովհաննես Աբելյանը արդեն գաստրոլներ էր տալիս Մոսկվայում: Նույնամբ տիրապետություն էր ոռուաց լեզվին, լավ ծանոթ էր ոռու կուլտուրային և ոռու բեմում խաղալու փորձ ուներ, որ հաճախ էր հանդես եկել մինչև հայ թատրոն փոխադրվելը:

Գրիգոր Ավետյանը՝ Բոբչինսկու այդ սքանչելի գերակատարը, իր գերասանական կոփվածքը ստացել էր նույնպես ոռու թատրոնում: Նրա ստեղծագործության համար, իր իսկ խոստովանությամբ, բեկող նշանակություն է ունեցել Մոսկվայում ապրելը, ոռու գերասանների արվեստի հետ ունեցած մոտ ծանոթությունը: Ահա թե նա ինչ է պատմում այդ մասին. «Ամենից շատ սիրեցի և

<sup>1</sup> Տե՛ս Սարգսի Ավելիքսենթյան, Հովհաննես Աբելյան, Հայությունքատ, Երևան, 1984, էջ 42:

ջերմորեն հաճախում էի կայսերական Փոքր և Կորցի թատրոնները, ուր կոմեդիաներ շատ էին խաղացվում: Փոքր թատրոնում մի քանի անգամ տեսնել եմ «Վերաբննիշ», «Խելքից պատուհաս» և Մոլիկի պիեսները: Ինձ չափազանց դուր չէին դալիս «Երկրորդ երիտասարդություն», «Օրվա շարիք» և այլ թաված պիեսները: Կորչի մոտ էլ դնում էին «Վերաբննիշ» և նման պիեսներ, և այդտեղ էլ գնում էի՝ Փոքր թատրոնի հետ համեմատություն անելու համար: Կային Կորչի մոտ գերասաններ, որ որոշ դերերում ավելի լավ էին, քան Փոքր թատրոնում, և ընդհակառակը: Չէի սիրում Կորչի մոտ չափազանց հաճախ բեմադրվող ֆրանսիական թեթե, բայց նաիվ բովանդակության պիեսները: Իր վրա ոռու թատրոնի թողած ազդեցության մասին Գրիգոր Ավետյանը գրում է. «Մինչև Մոսկվա գնալս լավ շեմ հիշում, թե բեմի վրա ես ինչպես էի խոսում և ինձ պահում, բայց Մոսկվայից վերադառնալուց հետո ինքս գտնում էի, որ թե՛ խոսելու, թե՛ բեմի վրա մնալու և քայլելու ժամանակ բնականին ավելի մոտ եմ: Իմ ականջն էր ծակում, երբ բեմի վրա խոսելու փոխարեն երգում էին: Հայ գերասանների դեպի լավը փոխվելու

<sup>1</sup> Գրիգոր Ավետյան, Քառասուն և հինգ տարի հայ բեմի վրա, Հայությունքատ, Երևան, 1933, էջ 25:

պատճառը, — շարունակում է Գ. Ավետյանը, — և իսկ հետո երկու անգամ՝ 1883 և 1892 թթ., զնացել գտնում եմ ոռւսաց ներկայացումների աղդեցության մեջ Ռուսաստան և խաղացել Մոսկվայում ու Պետերբուրգում մեջ: Մերոնք մեծ սիրով էին հաճախում բուրգում<sup>1:</sup>: Իր տեսական ելույթներում Գևորգ Նիքոլայ անդամ էր, և Թիֆլիսում Պատրոսյանը եռանդուն կերպով պրոպագանդել է նրանց ներկայացումները, և Թիֆլիսում ու Բաքու Փատրոսյանը ու անդամ էր: Պոքր թատրոնի ու ամսագրերի մեջ նա հոչակիվել Ռուս գերասաններին ևս խոր համոզմունքով մեր Հայոց թատրոնի պատմության մեջ նա հոչակիվել ուսուցիչներն եմ համարել և այժմս էլ համարում են մեծական մարմարավորման սրանչելի նմուշների մի հմք<sup>1:</sup>

Պոլոս Արաքսյանը սովորել է Պետերբուրգում՝ ամբողջ շարքով: Այդպիսիներից են Զացկին, Գրիգոր Հաճախ Ներկա է եղել Ալեքսանդրինյան թատրոնում՝ «Ռևիվոր»-ում, որը Գևորգ Պետրոսյանը խաղում էր նի Ներկայացումներին:

Ինչ վերաբերում է Գևորգ Պետրոսյանին՝ ապա սինչ իր կյանքի վերջը և հասարիա իր լավագույն թես կարծատե, սակայն բեմական հարուստ դերը՝ ձգտելով ոռւա բեմի հայտնի դերակատարնենք, թեև կարծատե, սակայն բեմական հարուստ մի ի խաղի ոչ թե պարզ ընդորինակման, այլ այդ կյանքը հարազատ հայ թատրոնին ծառայելու մի ի խաղի ոչ թե պարզ ընդորինակման, այլ այդ հուզիչ օրինակ է և միաժամանակ դեպի ոռւա թագերպարի իր իսկ սեփական մեկնաբանման<sup>2</sup>:

Հայ բեմի աշքի ընկնող գործիչ, դերասան լիտերատուր և պոեզիա Գեորգ Պետրոսյանը (1860—1906) նշանավոր հանդիսականները մինչև այդ ներկայացումը լավ նակալից դեր է խաղացել Հայ թատրոնի կողմից ծանոթ էին Ն. Վ. Գոգոլի Հանճարեղ երկին<sup>3</sup>: Հայերեն առաջադեմ ամսագրերը և լրագրերը, ուստի ուսալիստական թատրոնի փորձը յուրացնելու հարցում: Երիտասարդ տարիներին նա Հանգիս |

նկատի ունենալով Գեորգ Պետրոսյանի բեմադրությամբ «Մկիզորի» հաջողությունը, գերասանների առջև շատ որոշակի խնդիր էին զնում՝ բեմական ոեալիստական արվեստը սովորել միայն և միշտ ուսա թատրոնից, նրանից սովորել բեմի վրա խոսելը. «Ով ուզում է լսել ինչ աստիճանի գեղեցիկ կարող է լինել լեզուն, թող զնա Փոքր թատրոն»<sup>1</sup>:

Այս կապակցությամբ կամենում ենք հիշեցնել ևս մի փաստ: Պահպանվել է գերասան Ամիրան Մանդինյանի եղբայրակման խոսքի ձեռագիրը: Այդ խոսքը նա արտասանել է 1893 թվականի ապրիլի 30-ին իր արտիստական գործունեության 25-ամյա հորելյանին նվիրված երեկոյին: Պատասխանելով ուսա թատրոնի գործիչների շնորհավորանքներին, Ամիրան Մանդինյանը խոսել է ուսա գերասանների հետ ունեցած իր անձնական և ստեղծագործական խորը բարեկամության մասին, և այն մասին, թե հայ թատերական կուլտուրայի զարգացման համար որքան խոշոր նշանակություն ունի հայ բեմի գործիչների մշտական շփումը ուսա թատրոնի հետ<sup>2</sup>:

Ամիրան Մանդինյանի այդ միտքը, որին անվերապահորեն կարող էին միանալ հայ շատ գե-

<sup>1</sup> «Մշակ», 1898, № 181:

<sup>2</sup> Տե՛ս Հայկական ՍՍԾ ԳԱ Գրականության և արվեստի թանգարան, Ամիրան Մանդինյանի արխիվը, ձեռագիր № 7:

րասաններ, հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչու այդպես ճշմարտացի, ռեալիստորեն է հայ բեմում խաղացվել «Մկիզորը», որի բեմադրությունն ունեցել է նաև այն սկզբունքային նշանակությունը, որ օգնել է հայ թատրոնի բեմից վտարելու հակագեղարվեստական «Բաժանման ծաղկիները», «Հոգով աղքատները», «Մայրական սերը» և նույնանման այլ պիեսներ:

«Մկիզորի» ներկայացման շուրջը ևս,— ինչպես այդ միշտ լինում էր ոսւսական ոեալիստական դրամատուրգիայի բեմադրությունների ժամանակ,— ծավալվում է մեզ ժանոնթ կրքոտ պայքարը: Պահպանողական քննադատությունը հանդիս է գալիս միշտ նույն մեղադրանքներով. հարյուրերորդ անգամ կրկնվում է այն միտքը, թե «Մկիզոր»-ում պատկերված կերպարները և սոցիալական միջավայրը հայ հանդիսականի համար անպիտք և անմատչելի են, որովհետեւ իբր թե «տեղականն այստեղ» («Մկիզոր»-ում— Բ. Հ.) միանգամայն գերակշռում է համամարդկայինին»<sup>1</sup>: Դրան հակառակ պրոգրեսիվ գործիչները միանգամայն դրականորեն են արտահայտվում այդ բեմադրության մասին: Նրանք նշում են Ն. Վ. Գոգոլի կոմեդիայի գիմազերծողը բնուվթը, նրա քաղաքական նշանակությու-

<sup>3</sup> Տե՛ս «Նոր-Գար», 1898, № 221:

նկատի ունենալով Գևորգ Պետրոսյանի բեմադրությամբ «Մեկնորի» հաջողությունը, դերասանների առջև շատ որոշակի խնդիր էին դնում՝ բեմական ուեալիստական արվեստը սովորել միայն և միշտ ուսա թատրոնից, նրանից սովորել բեմի վրա խոսելը. «Ով ուզում է լսել ինչ աստիճանի գեղեցիկ կարող է լինել լեզուն, թող դնա Փոքր թատրոն»<sup>1</sup>:

Այս կապակցությամբ կամենում ենք Հիշեցնել ևս մի փաստ: Պահպանվել է դերասան Ամիրան Մանդինյանի եղբափակման խոսքի ձեռագիրը: Այդ խոսքը նա արտասանել է 1898 թվականի ապրիլի 30-ին իր արտիստական գործունեության 25-ամյա հոբելյանին նվիրված երեկոյին: Պատասխանելով ուսա թատրոնի գործիչների շնորհավորանքներին, Ամիրան Մանդինյանը խոսել է ուսա դերասանների հետ ունեցած իր անձնական և ստեղծագործական խորը բարեկամության մասին, և այն մասին, թե Հայ թատերական կուտուրայի զարգացման համար որքան խոշոր նշանակություն ունի Հայ բեմի գործիչների մշտական շփումը ուսա թատրոնի հետ<sup>2</sup>:

Ամիրան Մանդինյանի այդ միտքը, որին անվերապահորեն կարող էին միանալ Հայ շատ դե-

<sup>1</sup> «Մշակ», 1898, № 181:

<sup>2</sup> Տե՛ս Հայկական ՍՍԾ ԳԱ Գլուխանության և արվեստի թանգարան, Ամիրան Մանդինյանի արխիվը, ձեռագիր № 7:

րասաններ, Հնարավորությունն է տալիս հասկանալու, թե ինչու այդպես ճշմարտացի, ոեալիստորեն է Հայ բեմում խաղացվել «Մեկնորը», որի բեմադրությունն ունեցել է նաև այն սկզբունքային նշանակությունը, որ օգնել է Հայ թատրոնի բեմից վտարելու հակագեղարվեստական «Բաժանման ծաղիկները», «Հոգով աղքատները», «Մայրական սերը» և նույնանման այլ պիեսներ:

«Մեկնորի» ներկայացման շուրջը ևս, — ինչպես այդ միշտ լինում էր ուսա կան ուեալիստական դրամատուրգիայի բեմադրությունների ժամանակ, — ծավալվում է մեզ ծանոթ կրքու պայքարը: Պահպանողական քննադատությունը հանդիս է գալիս միշտ նույն մեղադրանքներով. Հարյուրերորդ անգամ կրկնվում է այն միտքը, թե «Մեկնոր»-ում պատկերված կերպարները և սոցիալական միջավայրը Հայ հանդիսականի համար անպետք և անմատչելի են, որովհետև իբր թե «անդականն այստեղ («Մեկնոր»-ում — Բ. Հ.) միանգամայն գերակշռում է համամարդկայինին»<sup>1</sup>: Դրան հակառակ պրոգրեսիվ գործիչները միանդամայն դրականութեն են արտահայտվում այդ բեմադրության մասին: Նրանք նշում են Ն. Վ. Գոգոլի կոմեդիայի գիմագեծող բնույթը, նրա քաղաքական նշանակությու-

<sup>3</sup> Տե՛ս «Նոր-Դար», 1898, № 221:

նը: «Իրավացի այս գործը, — գրում էին թերթերը, — Գոգոլի հրաշակերտն է անվանվում և դասական գրականության գլուխ գործոցներից մինը... Դյուրավ ըմբռնում ենք, թե ինչու երկար ժամանակ այս խաղը մնաց թղթերի մեջ պահպած՝ գրաքննիչի խիստ տնօրինությամբ...»<sup>1</sup>:

Գաղափարական նույն սուր պայքարով է բացատրվում և այն, որ 1902 թվականին, Ն. Վ. Գոգոլի մահվան 50-ամյակի կապակցությամբ, մեծ բանավեճ էր ծավալվել լրագրերի և ամսագրերի էջերում այն թեմայով, թե Ն. Վ. Գոգոլի տիպերն արդյոք ընդհանուր ինչ-որ բան ունե՞ն Հայ կյանքի կերպարների հետ, թե՝ ո՞ւս գրամատուրդի երկերում Հայերի համար օգտակար և հետաքրքիր կողմեր չկան: Առաջավոր քննադատությունը պատասխանում էր — այո՛, ունեն, և շատ բան<sup>2</sup>:

Այսպիսով, Հայ թատրոնի կյանքում, 90-ական թվականների երկրորդ կեսին շարունակվում է Հայ թեմական գործիչների կողմից ոսու դերասանների փորձի սիստեմատիկ յուրացման պրոցեսը: Մոսկվայի Փոքր և ոռուսական այլ թատրոնների դերասանների գաստրոլները Թիֆլիսում, ինչպես և ոռու թատրոնի ստեղծագործական մշտական գործունեությունը Թիֆլիսում և Բաքվում, մի-մի դպրոց-

<sup>1</sup> «Նոր-Դար», 1898, № 217.

<sup>2</sup> Տե՛ս «Մշակ», 1902, № 36:

ներ էին՝ իրականությունը բեմական կերպարներով ուսալիստորեն արտացոլելու համար: Հայ թատրոնի շատ գործիչները լինում էին Մոսկվայում, մոտիկից ծանոթանում ուսաւական առաջավոր թատրոնների գեղարվեստական պրակտիկայի հետ, իսկ մի քանի-սը, որոնք, ինչպես նշեցինք, առաջ խաղացել էին ուսաւական բեմում, վերադառնում էին հարազատ բեմ՝ հարատացած ուսաւական թատրոնի ուսալիստական մեծարժեք փորձով: Այդ գերասանները հետագայում իրենց շարքերից առաջ քաշելով Հայ բեմի մի քանի սրբանչելի վարպետներ, XIX—XX դարերի սահմանադժին պատմական դեր խաղացին ինչպես Հայ-ռուսական թատրոնի զարգացման, նույնպես և Հայ-ռուսական թատերական կապերի ամրապնդման մեջ՝ նրանց զարգացման հետագա ավելի բարձր էտապներում:

### 3

Քսաներորդ դարի սկզբից, ինչպես Ռուսաստանում, նույնպես և Անդրկովկասում ավելի ու ավելի է ծավալվում բանվորական շարժումը՝ ամենաբարձրագույն թափի հասնելով՝ 1905—1907 թվականներին Ռուսական առաջին ռեռլյուցիայի տարիներին:

Ամբողջ Ռուսաստանով մեկ հնչում է ուսուցչացի մրրկահավ, ազատագրական շարժման 213—8

պրոլետարական էտապի գաղափարների արտահայտիչ Մաքսիմ Գորկու ձայնը:

Հայաստանում ևս թե՛ ուսուցիչոն պայքարը և թե՛ այն ժամանակվա հայ գրականությունը սերտորեն կապված էին ոռոսական ուսուցիչայի և ոռոս կովտուրայի հետ:

Պատմական նշանակություն ուներ այնպիսի փայլում հայ մարքսիստ-քննադատների հանդես գալը, ինչպիսիք էին Ստեփան Շահումյանը և Սուրեն Սպանդարյանը, որոնք արվեստի այս կամ այն երկի զնահատման մեջ ամբողջապես և լիովին կանգնած էին Վ. Ի. Լենինի դիրքերի վրա:

Մեր թեմայի համար առանձնապես հետաքրքրիր են այդ շրջանի թատրոնի վերաբերյալ հայ մարքսիստական քննադատության արտահայտած հիմնական դրույթները:

Ստեփան Շահումյանը և Սուրեն Սպանդարյանը գտնում էին, որ թե՛ թատրոնն իր ամբողջությամբ և թե՛ դերասանների արվեստը դաստիարակչական խոշոր նշանակություն ունեն: Պայքարելով արտաքին էֆեկտների դեմ, հանուն ոհալիքմի, հանուն ուսուցիչոն առաջավոր գաղափարներով տոգորված ժողովրդական թատրոնի, Սուրեն Սպանդարյանը առանձին տեղ էր հատկացնում գեղարվեստական կերպարի մեկնարանմանը թեմում: Ստեփան Շահումյանը և Սուրեն Սպանդարյանը

վճռականապես ժխտելով նացիոնալիզմը՝ հանդես էին գալիս որպես պրոլետարական կուլտուրայի բոցավառ մարտիկներ, մարտիկներ, որոնք պայքար էին մղում անկումային, հակաժողովրդական ուղղությունների դեմ գրականության և արվեստի բոլոր բնագավառներում:

Այդ ժամանակաշրջանում սոցիալական խոր տեղաշարժերի ազդեցության տակ, որոնց հետեւ վանքով հասարակության առաջատար ուժը դառնում է պրոլետարիատը, հայ թատրոնի ստեղծագործական կյանքում տեղի են ունենում նշանակալից փոփոխություններ: Այդ տեսակետից կուլտուրական ուշագրավ դեպք է, օրինակ, Թիֆլիսում ժողովրդական հանրամատչելի թատրոնի կազմակերպումը:

Կսած 90-ական թվականներից հայ հասարակական առաջավոր միտքը՝ զինված թատրոնի մասին Վ. Գ. Բելինսկու գաղափարներով, հարց է զնում թատրոնը դեմոկրատացնելու և աշխատավոր ժողովրդին մոտեցնելու, ապա նաև տոմսերն էժանացնելու և ոեպերտուարի մեջ այնպիսի պիեսներ մտցնելու մասին, որոնք մոտ ու հասկանալի կլինեն բանվոր հանդիսականին, ընդունակ կլինեն օգնելու նրան կյանքում և պայքարում:

պրոլետարական էտապի գաղափարների արտահայտիչ Մաքսիմ Գորկու ձայնը:

Հայաստանում ևս թե՛ ռեռլյուցիոն պայքարը և թե՛ այն ժամանակվա հայ գրականությունը սերտորեն կապված էին ռուսական ռեռլյուցիայի և ռուս կուսուրայի հետ:

Պատմական նշանակություն ուներ այնպիսի փայլուն հայ մարդունությունների հանդես գալը, ինչպիսիք էին Ստեփան Շահումյանը և Սուրեն Սպանդարյանը, որոնք արվեստի այս կամ այն երկի գնահատման մեջ ամբողջապես և լիովին կանգնած էին Վ. Ի. Լենինի դիրքերի վրա:

Մեր թեմայի համար առանձնապես հետաքրքրիր են այդ շոշանի թատրոնի վերաբերյալ հայ մարդունության բննադատության արտահայտած հիմնական դրույթները:

Ստեփան Շահումյանը և Սուրեն Սպանդարյանը գտնում էին, որ թե՛ թատրոնն իր ամբողջությամբ և թե՛ դերասանների արվեստը զաստիարակչական խոշոր նշանակություն ունեն: Պայքարելով արտաքին էֆեկտների դեմ, հանուն ռեալիզմի, հանուն ռեռլյուցիոն առաջավոր գաղափարներով տոգորված ժողովրդական թատրոնի, Սուրեն Սպանդարյանը առանձին տեղ էր հատկացնում զեղարվեստական կերպարի մեկնաբանմանը բեմում: Ստեփան Շահումյանը և Սուրեն Սպանդարյանը

վճռականապես ժխտելով նացիոնալիզմը՝ հանդես էին գալիս որպես պրոլետարական կուսուրայի բոցավառ մարտիկներ, մարտիկներ, որոնք պայքար էին մղում անկումային, հակաժողովրդական ուղղությունների դեմ գրականության և արվեստի բոլոր բնագավառներում:

Այդ ժամանակաշրջանում սոցիալական խոր տեղաշարժերի ազդեցության տակ, որոնց հետեւ վանքով հասարակության առաջատար ուժը դառնում է պրոլետարիատը, հայ թատրոնի ստեղծագործական կյանքում տեղի են ունենում նշանակալից փոփոխություններ: Այդ տեսակետից կուտուրական ուշագրավ դեպք է, օրինակ, Թիֆլիսում ժողովրդական հանրամատչելի թատրոնի կազմակերպումը:

Ակսած 90-ական թվականներից հայ հասարակական առաջավոր միտքը՝ զինված թատրոնի մասին Վ. Գ. Բելինսկու գաղափարներով, հարց է զնում թատրոնը դեմոկրատացնելու և աշխատավոր ժողովրդին մոտեցնելու, ապա նաև տոմսերն էժանացնելու և ռեպերտուարի մեջ այնպիսի պիեսներ մտցնելու մասին, որոնք մոտ ու հասկանալի կլինեն բանվոր հանդիսականին, ընդունակ կլինեն օգնելու նրան կյանքում և պայքարում:

Այդ ձգտումների գործնական արտահայտությունն էր 1895 թվակասին Թիֆլիսի Կուկիա բանվորական թաղամասում, այսպես կոչված, «Ավճալյան» ժողովրդական առևտիտորիայում ուսուերեն և հայերեն առաջին հանրամատչելի ժողովրդական ներկայացումների կազմակերպումը:

Քաններորդ դարի սկզբին բանվորական թատրոնների ցանցը ավելի ևս ընդլայնվում է: Նույն այդ, Թիֆլիսի Հավաքաբարի ուայոնում, 1902 թվականին կազմակերպվում է ժողովրդական թատրոն՝ ուսուական, վրացական և հայկական սեկցիաներով: Վերջինիս ղեկավարն էր Պողոս Արաքսյանը, որը բեմադրում էր հայ, ուսու և արեմտյան հեղինակների լավագույն պիեսները:

Այդպիսի ներկայացումների կարիքն առանձնապես զգում էր Բաքուն՝ Անդրկովկասի արդյունաբերական այդ խոշորագույն կենտրոնը: Այդ պատճառով էլ նույնպիսի շարժում է ծավալվում նաև Բաքում, ուր խոշոր աշխատանք է կատարում ներկայում Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ Ամո Խարազյանը: Ամո Խարազյանն իր թատերական կրթությունը ստացել է Մոսկվայում՝ Վ. Ի. Նեմիրովիչ-Դանչենկոյի ղեկավարության տակ: 1901 թվականին Ստեփան Շահումյանի խորհրդով նա Բաքի նավթարդյունաբերական շրջաններից մեկում, Բալախանիում, կազմակերպում է

Հայկական բանվորական թատրոն, ուր ներկայացումներ էին տրվում նաև ռուսերեն լեզվով: Մամովը նշում էր այդ թատրոնի մեծ հաջողությունը և բանվորների խոշոր ձգտումը դեպի թատրոն, որի դահլիճը երբեք չէր կարողանում տեղավորել բոլոր ցանկացողներին<sup>1</sup>:

Այդ հանրամատչելի բանվորական թատրոնները, որոնք իրենց ուսկերտուարով և ստեղծագործական սկզբունքներով հակադրվում էին Թիֆլիսի Հայկական դրամատիկական ընկերության պաշտոնական թատրոնին, հիշյալ տարիներին շատ բան են արել թատերական արվեստը ժողովրդական հանդիսատեսին մոտեցնելու ուղղությամբ:

Նման թատրոնների ցանցի լայնացումը առանձին թափ է ստանում 1905—1907 թթ. ուևլյուցիայի տարիներին, երբ դրանց ներկայացումներից շատերը վերածվում էին ցասումնալից բողոքի և զայրութի ցուցի՝ ցարիզմի դեմ:

Ռեոլյուցիոն իրագրությունը ավելի ևս ակտիվացնում է հայ գերասանների գործունեությունը թատերական արվեստի ուսալիստական կենսահաստատ արագիցիաների ամրապնդման գործում: Դրան օգնում են Փոքր թատրոնի գաստրոլները Թիֆլիսում և Բաքում 1903 թվականին:

<sup>1</sup>Տե՛ս «Մշակ», 1903, № 82:

Մամովը նշել է Փոքր թատրոնի գերասանների սքանչելի արվեստը, նրանց ստեղծած կերպարների ամբողջականությունը, ուելիստականությունը, «արտաքին շլացումներից խուսափելու ձգտումը: «Եյդ ներկայացումները թե՛ հաճելի են և թե՛ ուսանելի», — գրում էին թերթերը<sup>1</sup>:

Այդ տարիներին շարունակելով բեմապեկ ոռուսական կլասիկայի լավագույն պիեսները, հայ թատրոնը միենուն ժամանակ իր ուելիստուարը հարստացնում է հայ, ուսւ և վրաց դրամատուրգների նոր պիեսներով, այդ ձեռվ արտահայտելով իր բողոքը ցարիզմի և տեղական բուրժուազիայի նացիոնալիստական քաղաքականության դեմ Անդրբկովկասում:

Այդ ժամանակ հայ բեմում հաջողությամբ բեմադրվում են «Պեպոն», «Պատվի համարը», «Ինկիզորը», «Եկամտավոր պաշտոնը», «Ավագակները», «Նորան», «Ուրվականները», «Դոկտոր Շտոկմանը», Ա. Յագարելու «Խանուման» ու «Սիրիականը», Ա. Առաջին անգամ բեմադրվում են Ա. Ն. Օստրովսկու «Անօժիտը» (1902) և «Անտառը» (1903), Ա. Ա. Նայդյոնովի «Վանյուշինի զավակները» (1902), Ա. Ի. Յուժին-Սումբատովի «Դավաճանությունը» (1904):

<sup>1</sup> «Մշակ», 1903, № 100,

Հայ թատրոնի գեմոկրատացման և հասարակական ակտիվացման, ինչպես և ուսւ առաջավոր թատրոնի հետ նրա կապերի ամրապնդման մի նոր վկայությունն ու փաստն է 1905 թ. ռևոլյուցիոն տարում Ա. Պ. Զեխովի հայտնի «Որոր» («Վայկ») դրամայի բեմադրումը հայ թատրոնում:

Զեխով-նովելիստին հայ գեմոկրատական ինտելիգենցիան ճանաչում և բարձր էր գնահատում գեռևս 80-ական թվականներին. նրա վողելիները վաղուց արդեն խաղացվում էին հայ բեմում, սակայն նրա մեծ պիեսներին մեր թատրոնները վերաբերում էին ինչ որ անվատահությամբ և մասսամբ դրա պատճառներից մեկն էլ «Որորի» տապալումն էր՝ 1896 թվականին, Պետերբուրգի Ալեքսանդրինյան թատրոնում<sup>1</sup>:

Ճիշտ է, հիմք կա կարծելու, որ հայ ականավոր գերասանուցի Սիրանույշը ձգտում էր խաղալ Ռանևսկայի գերը «Բալենու այգում», որի մասին նա հիշատակում է իր նամակներից մեկում<sup>2</sup>: Սակայն Սիրանույշի այդ ցանկությունը այդպիս էլ շիրականացավ:

Ա. Պ. Զեխովի դրամատուրգիայի հայ բեմում

<sup>1</sup> Տե՛ս «Նոր-Թար», 1896, № 189:

<sup>2</sup> Տե՛ս Ռուբեն Զարյան, Սիրանույշ, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկադիր», 1954, № 1, էջ 47:

երեան գալու գործում կարեոր նշանակություն է ունեցել այն բարձր գնահատականը, որ տվել է այդ դրամատուրգիային հայ դիմոկրատական քըն-նադատությունը։ Դեռևս 1904 թվականին՝ Ա. Պ. Չեխովի մահվան կապակցությամբ՝ ոռու կլասիկ պոեզիայի հայտնի թարգմանիչներից մեկը՝ պո-ետ-դեմոկրատ Ալեքսանդր Շատուրյանը Ա. Պ. Չեխովի ստեղծագործության մասին հրապարակեց մի մեծ հոդված, ուր գրում էր, թե Ա. Պ. Չեխովի պիեսները «գրված են նուրբ և պոետիկ, հագեցված լիրիկական տրամադրությամբ»<sup>1</sup>, նրանք լի են հա-վատով՝ աշխարհիս երեսին՝ մարդու սրանշելի և դարմանալի նախասահմանված դերի մասին։

Ել, վերջապես, «Որորի», «Երեք քույրերի» ու «Թալենու այգու» հոյակապ բեմադրությունները Մոսկվայի Գեղարվեստական թատրոնում, ինչպես և այդ պիեսների բեմադրությունները Թիֆլիսի ու Քաքվի ոռու բեմերում հայ թատրոնին ևս ստիպեցին հարկ եղած ուշադրությունը դարձնել դրանց վրա։

1905 թվականին, Բաքվում, գերասանուհի Քնարիկը իր բենեֆիսի օրը, իր թարգմանությամբ հայերեն բեմադրել է «Որորը» և խաղացել նի-նա Զարեհնայայի դերը։ Մյուս դերերը խաղա-

ցել են նշանավոր դերասաններ Գևորգ Պետրոսյա-նը, Խաչակ Ալիխանյանը, Արամ Վրուզը, Հովհաննես (Ծնիկ) Ստեփանյանը և ուրիշները։ Ներկայացումը հաջող է անցել, գերասանները հիմնա-կանում կարողացել են ճշտորեն դրսերել այդ դրամայի առանձնահատկությունները<sup>1</sup>։

Սակայն, XIX դարի վերջին և XX դարի սկզբ-րին հայ ժողովրդի կյանքում սոցիալական տեղա-շարժերը իրենց գեղարվեստական լավագույն արտացոլումը ստացան հայ մեծ դերասաններ Հովհաննես Արելյանի և Սիրանուցի ազգային ինք-նատիպ ստեղծագործության մեջ, որն միաժամա-նակ հայ և ոռու թատրոնների լավագույն տրադի-ցիաների սքանչելի սինթեզն էր հանդիսանում։

Ականավոր ողբերգակ դերասանուհի Սի-րանուցի (1857—1933) բեմական կյանքը ցույց է տալիս, որ գերասանուհին անցել է ստեղծագոր-ծական զարգացման գրեթե նույն ուղին, ինչ որ Պետրոս Աղամյանը։ Դաստիարակված լինելով Պոլսում, արևմտամելքոպական սակավ-գեղարվես-տական դրամատուրգիայի երկերի վրա՝ Սիրանուց-ը 1879 թվականին գալիս է Անդրկովկաս և հայ-կական ու ոռուսական ուսալիստական արվեստի

<sup>1</sup>Տե՛ս «Մշակ», 1905, № 12 և 200; «Նոր կյանք», 1906, № 27, էջ 341;

<sup>1</sup> «Մշակ», 1904, № 152;

բարերար ազդեցության տակ ապրում է իր բեմական ստեղծագործության կատարյալ վերափոխությունը:

Սիրանուշի ստեղծագործության մեջ տեղի ունեցած այդ բեկումը առանձնապես կարևոր է նշել նրա համար, որ ժամանակակից թե՛ հայ և թե՛ ոռու մամուլը Սիրանուշին համարում էր ֆրանսիական դպրոցի դերասանուհի, մի դերասանուհի, որն իր գտնվում էր Հողակավոր Սառա Բեռնարի ազդեցության տակ: Դա միանդամայն սիալ տեսակետ է: Ճիշտ է, Սիրանուշն իր գործունեության սկզբին հրապուրվում էր զուտ արտաքին տեխնիկայով և արտասանությամբ, սակայն դա 70—80-ական թվականներին էր, իսկ XX դարի սկզբից մոտիկից ծանոթանալով արևելահայ և ոռու բեմական արվեստներին ու խաղի ճշմարտացի ձևերին, Սիրանուշը համոզված կերպով դառնում է թատերական ուսավիստական դրաբոցի դերասանուհի: Նրա ստեղծագործության մեջ տեղի ունեցած այդ փոփոխությունները նշել է ոռու մամուլը՝ 1912 թվականին դերասանուհու Մոսկվայում տված գաստրոլների օրերին: Քննադատությունը ընդգծել է նաև Սիրանուշի խաղի այն առանձնահատկությունները, որոնք անիմաստ են դարձնում նրա համեմատությունը Սառա Բեռնարի ֆրանսիական դպրոցի հետ: «Դերասանուհին կեր-

պարանափոխվում է գործող անձի և մոռանալով անձնական «եսը» ամբողջովին խորանում է ստեղծած կերպարի շրջանակներում՝ իր ապրումներով գերելով հանդիսականին»<sup>1</sup>: Ինչպես արդեն նշել ենք, ժամանակին Պետրոս Արամյանն էլ Սիրանուշի, Երմոլովայի և Կոմիսարժեսկայայի խաղը հակադրել էր Սառա Բեռնարի արվեստին:

Այս թե ինչ է պատմում այդ մասին ինքը դերասանուհին իր զրուցներից մեկում. «Երբ ես Կովկաս եկա, Հատկապես Թիֆլիս, Բաքու, ապա եղա Մոսկվա, Օդեսա, Մոստով, երբ բեմերի վրա տեսա հիշածս նշանավոր դերասանուհիներուն (Երմոլովային և Ֆեգոտովային — Բ. Հ.) խաղը, մասնավորապես Քոմիսարժեսկայայինը՝ ես հետզհետե փոխեցի իմ խաղի էությունը, նրա բնույթը և աշխատեցա մոտենալ իրական դպրոցին»<sup>2</sup>:

Սիրանուշը ստեղծագործական հսկայական դիապազոնի տեր դերասանուհի էր: Հաջողությամբ հանդես գալով Մեդեայի, Հուդիթի, Ժաննա դ'Արլի, Օֆելիայի ողբերգական դերերում, խաղալով նույնիսկ տղամարդու դեր (Համլետ), նա ոչ պակաս

<sup>1</sup> „Студия“, М., 1912, стр. 5.

<sup>2</sup> Ա. շ. Ա. թ. Ա. թ. ա. ս. յ. ա. ն. (Սալ-Ման), Հուշեր հայոց թատրոնի մասին, Հայկական ՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարան, ձեռագիր № 1102, էջ 143:

փայլով բեմում մարմնավորում էր նաև կոմեդիական և խարակտեր կերպարներ:

Ուժունական թվականներին Սիրանույշը ուս կլասիկ դրամատուրգիայից խաղում է երեք դեր՝ Յովինկա («Եկամտավոր պաշտոն», 1880), Լիդոչկա («Կրեչինսկու հարսանիքը», 1880), Սոֆիա («Խելքից պատուհաս», 1881):

Սիրանույշը առանձնապես մեծ հաջողություն է ունեցել Յովինկայի դերում: Յովացնելով ուս բեմական ռեալիզմի արտահայտչական միջոցները և օգտագործելով իր տաղանդի մեծ ուժը, դերասանուհին ստեղծել է Յովինկայի խորապես անհատական և միենույն ժամանակ տիպիկական բնավորությունը:

Սկսած 90-ական թվականներից Սիրանույշը ուս կլասիկ դրամատուրգիայի ներկայացումներում հաջողությամբ հանգեստ է գալիս Կրուինինայի («Անմեղ մեղավորներ»), Կարենինայի («Կենդանի դիակ»), Շտրայլի («Դիմակահանդես») դերում, ինչպես և ոչ սակավ անգամներ խաղում է Վ. Նեմիրովիչ-Դանչենկոյի, Ա. Յովին-Սումբատովի և ուրիշների պիեսներում:

Ոգևորված ուս առաջավոր թատրոնի լավագույն գաղափարներով և նրա ականավոր դերասանուհիներ Մ. Ն. Երմոլովայի, Գ. Ն. Ֆեդոտովայի, Վ. Ֆ. Կոմիսարժևսկայայի խաղով՝ Սիրանույշն

իր ստեղծագործության մեջ հանդես էր գալիս հանուն մարդու ազատագրման, հանուն իր հայրենիքի ազատագրման, արտահայտելով հայ առաջավոր հասարակության ազատասիրական ձրգությունները և ամեն կերպ ձգտելով արվեստը մոտեցնել ժողովրդին: Սիրանույշի կատարողական արվեստը՝ դերասանուհու այդ ձգտման և ուս թատերական կուտուրայի հետ շփվելու հետևանքով՝ ձեռք բերեց արտակարգ պարզություն, ճշշմարտացիություն, դիմախաղի արտահայտչականություն, մանրամասնությունների մանրակրկիտմշակում:

Սիրանույշի արվեստը բարձր գնահատվեց ուս թատրոնի խոշորագույն վարպետների՝ Վ. Ի. Նեմիրովիչ-Դանչենկոյի, Ա. Ի. Յովին-Սումբատովի, Մ. Ն. Երմոլովայի և ուրիշների կողմից:

Սիրանույշի արվեստի հերոսական, ազգային ճնշման դեմ բողոքով ողբերգական էությունը Ռուսական առաջին ռեպուլիտական տարիներին առանձնապես ուժեղ կերպով երեան եկավ նրա կատարած վրաց թագուհի Զեյնաբի գերում (1904 թվականից) Ա. Յովին-Սումբատովի Դավաճանություն» դրամայում, որ առաջին անգամ բեմադրվել է 1903 թվականին Մոսկվայի Փոքր թատրոնում՝ Հեղինակի և Մ. Ն. Երմոլովայի մասնակցությամբ:

Այդ գերում Սիրանովը, ինչպես և Մ. Ն. Երմոլովան Փոքր թատրոնում, իր հերոսուհու՝ վրաց ժողովրդի կեղեքիների նկատմամբ ունեցած ատելությունը և հայրենիքի ազատազրումը տեսնելու անսահման ցանկությունը արտահայտում է հրաշալի արվեստով:

Հետաքրքրական է նշել, որ Մ. Ն. Երմոլովայի խաղի անմիջական տպավորության տակ Սիրանովը վերացրեց այդ գերակատարման թուլ կողմերը և անդադար կատարելագործեց իր խաղը: Այսպես, օրինակ, քննադատությունը նշել է, որ պիեսի երրորդ գործողության մեջ, երբ Զեյնաբը ուրացող Օթար-բեկին, իր ամուսնու՝ Վրաստանի թագավորի նախկին զինակցին, պատմում է պարսկական լծի տակ հեծող իր հայրենիքի տանշանքների մասին, Սիրանովը սկզբում չի կարողանում մինչև վերջ բաց անել իր գերի հայրենասիրական էռթյունը, որովհետև ուշադրություն չի դարձնում «առանձին բառերի շեշտերի» վրա, որոնք կարևոր նշանակություն ունեին կերպարի ողջ միտքը արտահայտելու համար, այն ժամանակ, երբ Մ. Ն. Երմոլովան այդ տեսարանում «հրաշքներ է գործում և բուն հուզմունքներ առաջ բերում հանդիսականների մեջ»<sup>1</sup>:

<sup>1</sup> «Մշակ», 1905, № 12:

Սիրանովը հաշվի է առնում քննադատության դիտողությունները և իր խաղը ազատում այդ թերությունից, որի հետևանքով թե՛ Սիրանովը և թե՛ Մ. Ն. Երմոլովայի ստեղծած Զեյնաբի կերպարը ուկայուցիայի օրերին, ինչպես և ուեակցիայի հետագա տարիներին գերում է գեմոլիրատական հայացքներով տոփորված հանդիսականին «իր սուր արհամարհանքով դեպի ուրացողները և ժողովրդական գործից հեռացողները, իր հաղթական կոչով՝ դեպի հանուն ազատության պայքարը»<sup>1</sup>:

Այդ ուղղությամբ պակաս գեր չի խաղացել Օթար-բեկի գերակատար հայ մեծ գերասան Հովհաննես Աբելյանը: Ծնորհիվ Հովհաննես Աբելյանի և Սիրանովի վիրտուոզ խաղի, երրորդ գործողության վերոհիշյալ տեսարանում այդ պատկերը անջնջելի հետք է թողել հանդիսատեսների և «Թավաճանություն» ներկայացման շատ մասնակիցների հիշողության մեջ (Օ. Գուլազյան, Գր. Ավետյան և ուրիշներ):

Հայ ուեալիստական թատրոնի ազգային տրադիցիաները՝ զուգորդված ուսուական գեմոլիրատական բեմական արվեստի տրադիցիաների հետ,

<sup>1</sup> С. Н. Дурылин, Мария Николаевна Ермолова, Очерк жизни и творчества, Издательство АН СССР, М., 1953, стр. 447—448.

ահա այն Հիմքը, որի վրա աճում է հայ մեծ դեռասան Հովհաննես Աբելյանի (1865—1936) ստեղծագործությունը, որն իր դերասանական ուղին, ինչպես արդեն նշվեց, սկսել է ոռւս բեմից և ոռշոր, պայծառ տաղանդը և ոեալիստական վարպետության հսկայական փորձը մեծապես օգնեցին Հովհաննես Աբելյանին խորապես ըմբռնելու հայ դրամատուրգիայի էլությունը ու շարունակելու և ավելի ու ավելի զարգացնելու Գևորգ Զմշկյանի, Պետրոս Ադամյանի և Սիրանովյանի ազգային ոեալիստական դերասանական դպրոցի տրագիֆիաները:

Այս տեսակետից նրա ստեղծագործության միշտ բնութագիրն է տալիս Ռուբեն Զարյանը. «Մինչև Աբելյանը հայ թատրոնում ոեալիզմը ոճական իմաստով երկու արտահայտությամբ է դըրսնորվել. մի կողմից՝ հերոսականությամբ տուգորված ոեալիզմ, որի առաջին խոշոր ներկայացուցիչը մեզանում, ինչպես արդեն ասվեց, Զմշկյանն էր: Այս արագիցիայի մյուս և ավելի խոշոր ներկայացուցիչը Պետրոս Ադամյանը եղավ: Այնուհետև այդ գործը շարունակում է ապրել Սիրանովյանի ստեղծագործության մեջ: Մյուս կողմից՝ քննադատական ոեալիզմ, որի առաջին և ամենախոշոր ներկայացուցիչը Ամբիկյանն էր: Ոեալիզմի զարգացման այդ երկու գիծը հայ թատրոնում

ընթացել են, միշտ է, իրարից անկախ, բայց իրար լրացնելով: Առաջին խոշոր արվեստագետը, որի ստեղծագործության մեջ այդ երկու գծերը միախառնվեցին, դարձան մի կուռ ամբողջություն — Աբելյանն էր»<sup>1</sup>:

Սկսած տասնիններորդ դարի 90-ական թվականների երկրորդ կեսից Հովհաննես Աբելյանը դառնում է ոռւս դրամատուրգիայի ժողովրդականացնողը հայ հասարակության մեջ: Նա բազմիցս հանդես է գալիս Ա. Վ. Սուլյանվորիլինի (Ռասպալյան), Ն. Վ. Գոգոլի (Օսիպ և Քաղաքագլուխ), Ա. Ն. Օստրովսկու (Նեզնամով և Նեսաստլիվցե), Լ. Ն. Տոլստոյի (Աբրեգկով), Ա. Մ. Գորկու (Դերասան և Լուկա) ստեղծած դերերում, ինչպես և շատ հաճախ խաղում է Ս. Նայդոյոնվի, Ա. Յուժին-Սումբատովի, Ա. Պոտեխինի և այլ դրամատուրգների պիեսներում:

Հայ բեմում ոռւս ոեալիստական դրամատուրգիայի բեմադրություններին Ռուսական առաջին ուկուցուցիչի նախօրեին և նրա ընթացքում շարունակում էր կատաղի դիմադրել հայ թատերական ոեալիցիոն-պահպանողական քննադատությունը:

Այսպես, օրինակ, Հովհաննես Աբելյանի նա-

<sup>1</sup> Բուրեն Զարյան, Պայքար ոեալիզմի համար հայ թատրոնում, էջ 22,

խաճեռնությամբ 1903 թվականի նոյեմբերի 27-ին  
հայ թատրոնում առաջին անգամ բեմադրվում է  
Ա. Ն. Օստրովսկու «Անտառը»: Պիեսը բեմադրում  
է Պետերբուրգի Ալեքսանդրինյան թատրոնի դե-  
րասան Մ. Գ. Շևչենկոն: Աշա այս բեմադրությու-  
նը կատաղի դիմադրության է հանդիպում հետա-  
դիմականների կողմից: Հովհաննես Արելյանի՝  
Նեսլաստիվցեի դերի կատարումը անխոցելի էր  
հետադիմ քննադատության համար, բայց դրա  
փոխարեն՝ այդ քննադատությունը հարձակվում է  
պիեսի վրա, իբրև «մեր իրականությանը չհամա-  
պատասխանող»<sup>1</sup>, և դրանից անհեթեթ եղրակացու-  
թյուն է հանում, թե «երկու շրջիկ դերասանների  
(Նեսլաստիվցեի և Սշաստիվցեի — Բ. Հ.) մասնակ-  
ցությունը կարելի էր բաց թողնել, և պիեսի հիմ-  
նական իդեան ոչ մի վնաս չեր կրիլ դրանից»<sup>2</sup>:  
Այդ քննադատությունը արտահայտում էր ցասում-  
նալից վրդովմունք և բողոք՝ «Աման» երկերի բե-  
մադրության դեմ: «Մի՞թե ժամանակ է մեզ կերա-  
կրելու այդպիսի ոչ բեմական պիեսներով, որի  
մեջ ոչ կեցվածք կա, ոչ էլ լուծում: Միմիայն ան-  
նպատակ մենախոսություններ, դատարկ և ան-  
գույն սիրահարություններ և ուրիշ ոչինչ»<sup>3</sup>:

<sup>1</sup> «Տարագ», 1904, № 37, էջ 317:

<sup>2</sup> «Նոր-Դար», 1903, էջ 217:

<sup>3</sup> «Տարագ», 1903, № 37, էջ 327:

Հովհաննես Արելյանի սքանչելի խաղի հա-  
ջողությունը տակնուվրա է անում այդ կոպիտ  
ու անհիմն հարձակումները, որոնց նպա-  
տակն էր վարկաբեկել Ա. Ն. Օստրովսկու լա-  
վագույն պիեսներից մեկը, որն ուղղված էր  
մարդկային արժանապատվության ձնշման և ստո-  
րացման դեմ:

Հովհաննես Արելյանը խորապես սիրում էր  
Փոքր և Գեղարվեստական թատրոնները և խո-  
նարհվում էր Մ. Ա. Շեպկինի, Պ. Ա. Մոշալովի  
ու ի. Մ. Մոսկվինի տաղանդի առջև, արտիստներ,  
որոնց ստեղծագործությունը նրա վրա միշտ էլ  
բարերար ազդեցություն է ունեցել:

Հայ թատրոնի պատմության մեջ Հովհաննես  
Արելյանի խոշոր ծառայությունը կայանում է  
նրանում, որ նա կարողացավ ոռա ոեալիստական  
թատրոնի դեմոկրատական տրադիցիաները կիրա-  
ռել հայ դրամատուրգների պիեսներում իր մարմ-  
նավորված կերպարների մեջ:

Ռուսական առաջին ուռույուցիայի օրերին,  
երբ հայկական թատրոնը ապրում էր ստեղծագոր-  
ծական չտեսնված վերելք, երբ նա լարում էր իր  
ուշադրությունը գեպի Անդրկովկասի ժողովուրդ-  
ների բարեկամությունը, Հովհաննես Արելյանի  
արվեստը ձեռք բերեց առանձնապես խոշոր նշա-

նակություն։ Նրա ելույթները Ա. Ի. Յուժին-Սումբատովի «Դավաճանության» մեջ Օթար-բեկի դեռում, վրաց դրամատուրգ Ա. Յագարելու «Սիրիսական»-ում և հայ գեմոկրատ գրող Վրթանես Փափազյանի «Ժայռ» դրամայում փոխարկվում էին հայ առաջավոր հասարակության իսկական բողոքի ցուցի ցարիզմի դեմ և այն ժամանակ, անկանած, ունվազիոն մեծ դեր խալացին։ Հովհաննես Արելյանը պահպանեց իր ստեղծագործության դեմոկրատական գիծը նաև վրա հասած ռեակցիայի օրերին, համառ կերպով շարունակելով հանդես գալ Ա. Շիրվանզադեի, Ն. Գոգոլի և Մ. Գորկու, Վ. Շեքսպիրի և Հ. Իբսենի պիեսներում։

Որպես գերասան՝ Հովհաննես Արելյանը աշքի էր ընկնում իր լայն դիապազոնով, փայլուն և ուժեղ տեմպերամենտով, ճշմարտացիությամբ, խաղի հյութեղությամբ և կերպարի մեջ ներթափանցելու խորությամբ։ Իր ստեղծագործության մեջ Հովհաննես Արելյանը, իրոք որ, ժողովրդական արվեստագետ էր։ Աչա թե ինչու նա նողկանքով էր խոսում ամերիկյան բուրժուական նեխվող արվեստի մասին, երբ 20-ական թվականներին Ամերիկայում գաստրոներ տալուց հետո վերադարձավ իր հայրենիքը՝ Սովետական Հայաստան։

## 4

Ռուսական առաջին ունվազիայի պարտությունից հետո սկսվում են սոուլիպինյան ռեակցիայի տարիները, երբ Ռուսաստանի և նրա ազգային ծայրամասերի ժողովրդական մասսաների ունվազիոն շարժումը ժամանակավորապես թուլանում է։

1907—1917 թթ. տասնամյակի մասին Մաքսիմ Գորկին ասում էր, որ նա «...արժանի է ամենախայտառակ և ամոթալի անունը կրելու ոուսինտելիգենցիայի պատմության մեջ»<sup>1</sup>։ Ա. Ա. Ժդանովը նշում էր, որ «1905 թվականի ունվազիայից հետո ինտելիգենցիայի զգալի մասը երես դարձրեց ունվազիայից, գլորվեց ռեակցիոն միստիկայի և պոնոգրաֆիայի ճահիճը, գաղափարակրկությունը հոշակց իրուք իր գորոշ, իր ունենքատությունը քողարկելով «գեղեցիկ» ֆրազով «և ես այրեցի այն բոլորը, ինչին երկրպագում էի, երկըրպագեցի նրան, ինչ այրում էի»<sup>2</sup>։

Հայ թատրոնում դեռևս երբեք այնպիսի կատաղի պայքար չէր բորբոքվել, ինչպես Ռուսական առաջին ունվազիայից հետո եկած տարիներին,

<sup>1</sup> М. Горький. Литературно-критические статьи, ГИХЛ, М., 1937, стр. 647.

<sup>2</sup> Ա. Ա. Ժդանով, «Զվեզդա» և «Լենինգրադ» ամսագրերի մասին, Հայպետհրատ, Երևան, 1946, էջ 11.

ընդհուպ մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում:

Ինչո՞վ բացատրել այդ: Նրանով, որ թատրոնում, ինչպես և գրականության ու արվեստի մյուս բնագավառներում, այդ տարիներին լայն տարածում են ստանում հակաժողովրդական, գեկադենտական, սիմվոլիստական ամեն տեսակ ուղղություններ:

Այսպես, օրինակ, հայ մամովի օրգաններից մեկը հրապարակ է գալիս լեռ սիմվոլիստներից մեկի՝ Ստ. Պշիբիշևկու դրամայի և թատրոնի մասին արտահայտած միստիկ-մոդեռնիստական հայացքների պրոպագանդիստի դերում<sup>1</sup>: Եվ դա կատարվում է հենց այն ժամանակ, երբ հայ առաջավոր հասարակությունը նշում էր նոր ժամանակի հայ պրոֆեսիոնալ թատրոնի 50-ամյակը, ամեն կերպ ժողովրդականացնում էր նրա ռեալիստական տրամփիցիաները, այն ժամանակ, երբ տոնվում էին Ն. Վ. Գոգոլի և Ա. Ն. Օստրովսկու հորելյանները և երբ թատրոնի առաջավոր գործիչները, ինչպես Ռուսաստանում, նույնպես և Հայաստանում, հանդիս էին գալիս հանուն այդ մեծ դրամատուրգների ռեալիստական տրամփիցիաների ստեղծագործական զարգացման, — հենց

<sup>1</sup> Տե՛ս «Հուշաբարք», 1908, № 8, էջ 114:

այդ ժամանակ, այսպես կոչված «նոր թատրոնի» ներկայացուցիչները դեմ էին գնում ռեալիզմին, Գորկու դրամատուրգիան անվանելով թույլ և անպետք, իսկ Ն. Ա. Օստրովսկուն՝ ոչ ավել, ոչ սկասած, քան սոսկական մի կենցաղագիր:

Մուս սիմվոլիստական և ֆուտուրիստական թատրոնի այդ հակառակալիստական վնասակար տենդենցները ներթափանցում են նաև հայ թատրոն և հայ մամուլ, որոշ շափով խոշնդրութանդիսանալով հայ բեմում Ա. Ն. Օստրովսկու պիեսների բեմադրությանը:

Ավելին, այդ տարիներին գտնվում են մարդիկ, որոնք պաշտպանելով ապոլիտիկությունն ու գաղափարագրկությունը միտում են թատրոնի հասարակական հակայական դերն ու նշանակությունը, սկսում են առհասարակ բացասական թատրոնը, հանդինորեն հայտարարելով, թե թատրոնի, այսպես կոչված, «վերջը» եկել է այն պատճառով, որ «թատրոնը չի էլ սկսվել: Էսթետիկորեն նա չի կարող արդարացվել» Նրա փաստական գոյությունը դեռևս չի վկայում նրա խելացիության մասին: Թատրոնը արվեստի խարուսիկ և ապօրեն ձեռն է»<sup>1</sup>:

Հայ թատրոնում այդ անկումային ուղղու-

<sup>1</sup> «Ստուգ», 1912, № 23, стр. 2.

թյունների աշխուժությունը արտահայտվեց բավկան մեծ թվով արևմտյան, ոռուս և հայ գրողների սիմվոլիստական, միստիկական, գաղափարազուրկ պիեսների, ինչպես և ազգայնական կեղծ-պատմական դրամաների բեմադրությամբ, որի դեմ՝ մշտապես պայքարել է առաջավոր հասարակայնությունը, խոր վրդովմունքով՝ դիմավորելով, օրինակ, Լ. Անդրեևի «Արքա, Օրենք և Ազատություն» պիեսը՝ հայտարարելով, որ դրա մուտքը հայկական խմբի ռեպերտուրի մեջ կոպիտ սխալ է եղել<sup>1</sup>:

Պրոգրեսիվ գործիչներն ավելի խիստ արտահայտվեցին հայ բեմի վրա Հ. Կարենյանի «Վարդան Մամիկոնյան» տիրահռչակ պատմական ողբերգության երկրորդ անգամ երևան գալու առթիվ, պիես, որը դեռևս 60-ական թվականներին ծաղրանքի էր ենթարկվել հայ պրոգրեսիվ քննադատության կողմից<sup>2</sup>:

Հայ թատերական դեմոկրատական քննադատությունը և թատրոնի առաջատար գործիչները մատնանշում էին այն տիխուր հանդամանքը, որ ռեակցիայի այդ շրջանում հայ բեմի վրա մեծ տեղ էր գրավել հակառակիստական դրամատուրգիան,

<sup>1</sup>Տե՛ս „Կավազ“, 1914, № 274.

<sup>2</sup>Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1868, № 4, էջ 28,

որ թատրոնը, իրոք, ապրում էր ստեղծագործական սուր ճգնաժամ, սակայն այդ երեսովի պատճառը նրանք որոնում էին ոչ թե թատրոնի «ապօրինության» և «ոչ-խելացության» մտացածին թեորիաների մեջ, այլ սոցիալական կարգի երեսովիների մեջ։ Այստեղից հետեւում էր բնական, տրամաբանական մի եղանակացություն՝ որ միայն հասարակության ներկա դրության փոփոխությունը կարող է վերացնել այդ ճգնաժամը նաև թատրոնի բնագավառում։

Հետադիմական, պահպանողական ուժերի դեմ Հայաստանում պայքարում էին դեմոկրատական ռեալիստական արվեստի պաշտպանները և հայ-ռուսական թատերական կապերի հետագա ամրապնդման կողմնակիցները, որոնք ոռամկան առաջավոր թատրոնի հետ անհրաժեշտ միավորման մեջ էին տեսնում հայ թատրոնի ռեալիզմի և առաջավոր տրադիցիաների փրկությունը։

Այդ տարիներին ոռու պրոգրեսիվ գրականությունը, արվեստն ու հասարակական առաջավոր միտքը պրոպագանդելու ինդրում առանձին դեր են խաղում մարքսիզմի հայ տեսաբաններ Ստեփան Շահումյանը, Առքեն Սպանդարյանը ու Ներանց զինակիցներ Բոգդան Կնունյանցը, Ասքանազ Մովսեսյանը և ուղիղներ, որոնք պայքարում էին հանուն Վ. Բելինսկու, Ն. Գ. Զերնիշևսկու,

Ն. Ա. Գորբոլլուբովի հայացքների և ոռումնեծ գրողներ. Ա. Մ. Գորկու, Լ. Ն. Տոլստոյի, Ա. Պ. Չեխովի և ուրիշների ստեղծագործության ճիշտ լուսաբանման ու տարածման:

Առանձին նշանակություն ունի այն հանդամանքը, որ XIX դարի վերջին և XX դարի սկզբին հայ թատրոնի հանդեպ ոռուս գրողների և ժուռնալիստների հետաքրքրության ուժեղացման հետևանքով մամուլի էջերում սկսում են երեան դալ հոդվածներ հայ դրամատուրգիայի և դերասանների մասին, որիր հերթին ակտիվացնում է հայ գեմոկրատական քննադատությունը, օգնելով թատրոնին՝ հաջողությամբ զարգանալու ռեալիզմի ձևապարհով։ Այդ շրջանում թատրական քննադատությամբ սկսում են զբաղվել հայ ականավոր գրողներ Հովհաննես Թումանյանը, Հակոբ Հակոբյանը, Վլթանես Փափազյանը, Ավետիք Իսահակյանը, Ալեքսանդր Շիրվանզադեն, Դերենիկ Դեմիրճյանը։

Հայուսուական կուլտուրական կապերի ամրապնդման մեջ այդ տարիներին ակտիվ մասնակցություն են ունեցել Մաքսիմ Գորկին և Ալակերի Բրյուսովը, որոնք մեծ հետաքրքրություն են հանդիսաբերել հայ պատմության ու արվեստի նկատմամբ և հայ գրականության ակտիվ պրոպագանդիստներ են դարձել Ծովագործության 1916 թվա-

կանին Վ. Յա. Թրյուսովի խմբագրությամբ, նրա ընդարձակ առաջաբանով, Մոսկվայում լույս է տեսնում «Պօէզիա Արմենի» ստվար անթոլոգիան։ Նույն թվականին Մաքսիմ Գորկին՝ հայ պոետ Վահան Տերյանի աշխատակցությամբ հրատարակում է «Сборник армянской литературы» ժողովածուն։

Հայ կլասիկ դրամատուրգիայից Ա. Մ. Գորկին շատ բարձր էր գնահատում Գարբիել Սունդուկյանի «Թեպոն», որը Վահան Տերյանի թարգմանությամբ և իր՝ Գորկու խմբագրությամբ մտավ այդ ժողովածովի մեջ։

Հայաստանում բեմական ռեալիզմի գաղափարների կրողը եղավ դերասանների այն փայլուն պլեատան, որն ամբողջությամբ ու լիովին կապված էր ոռու գեմոկրատական թատրոնի առաջապես տրադիցիաների և, առաջին հերթին, Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի հետ։ Դա XX դարի սկզբի հայ նշանավոր դերասանների նոր սերունդն էր — Օլգա Մայսուրյան (1871—1931), Պողոս Արաքյան (1862—1912), Սաթենիկ Ադամյան (1875—1915), Խաչակ Ալիխանյան (1876—1946), Գրիգոր Ավետյան (1870—1946), Արշակ Մամիկոնյան (1872—1937), Միքայել Մանվելյան (1877—1944), Օլգա Գուլազյան (ծնվ. 1885 թ.) և ուրիշներ։

Նրանք բոլորը հիանալի ծանոթ էին ոռւս դրամատորգիային ու թատրոնին, իսկ 1912 թվականին Մոսկվայում ունեցած իրենց գաստրոլների ժամանակ, մոտիկից ծանոթացան Գեղարվեստական թատրոնի ստեղծագործական կյանքի հետ: «Մեծ վարպետ Կաչալովի և ամբողջ խմբի ունակութական խաղի ձևը, — գրում է Օլգա Գովազյանը, — այնպես էր հրապուրում մեզ, հայ դերասաններին, որ մի ինչ-որ զգացմունք՝ նրանց նման խաղալու բարի զգացմունք համակել էր մեզ բոլորին»<sup>1</sup>: Օլգա Գովազյանը առանձնապես շեշտում է Գեղարվեստական թատրոնի դերասանների զարմանալի մաքուր, պարզ առողքանությունը, որի շնորհիվ նույնիսկ «շշուկով արտասանած բառը իր նյուանների բոլոր նրբություններով ամբողջությամբ հասնում է հասարակությանը»<sup>2</sup>:

Օլգա Գովազյանը հիշում է նաև Կ. Ս. Ստանիսլավսկու և Վ. Ի. Նեմիրովիչ-Դանչենկոյի նրբազգաց գերաբերմունքը ռեպի հայ դերասանները, որոնք ամբողջ հայկական խմբին հատկացրել էին իրենց ռեժիսյորական օթյակը<sup>3</sup>:

Հայ նշանավոր դրամատիկ դերասանութիւն

<sup>1</sup> Օլգա Գովազյան, Հուշեր, Հայպետհրատ, Երևան, 1943, էջ 215:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում:

Սաթենիկ Աղամյանի ողջ ստեղծագործությունը մի համոզիլ վկայություն է հայ դերասանների ռեալիստական բարձր արվեստի առաջացման հարցում ոռւս թատրոնի կատարած խոշոր դերի մասին: Հայ բեմում «Անօժիտի» մեջ լավագույն կարիսան, դրամատիկական ուժեղ տեմպերամենտի և հոգեբանական խորության տեր դերասանուհի Սաթենիկ Աղամյանը ամենայն իրավամբ համարվում է հայ բեմի Կոմիսարժեսկայան:

Դեռևս 1899 թվականին Սաթենիկ Աղամյանը մեկնում է Պետերբուրգ, Հաճախում Ալեքսանդրինյան թատրոնի դերասանութիւն Մ. Մ. Զիտառի բացած դրամատիկ դասընթացներին և սկսում ուսումնասիրել Վ. Ֆ. Կոմիսարժեսկայալ արվեստը: Ավարտելով դասընթացը՝ նա մի տարի խաղում է Յարոսլավի ոռւսական բեմում, ապա գնում Բաքու և մտնում հայ թատրոն:

Վ. Ֆ. Կոմիսարժեսկայայի կրքուտ, ճշմարտացի խաղը՝ հագեցած մեծ և խորը գաղափարականությամբ՝ միշտ բարձր է գնահատվել հայ թատրոնի առաջավոր գործիչների կողմից: Նրանցից մեկն, օրինակ, այսպես է բնութագրում ոռւս մեծ դերասանուհու արվեստի սոցիալական բովանդակությունը: «Կոմիսարժեսկայան հեգնում է կյանքությունը, ուստի բացասություն է և հուսահատություն: Նաքատ շուտ նկատում է կյանքի պակասավոր կող-

մերը, նա ծաղրում և մտրակում է շրջապատռղներին:

Կոմիսարժենսկայան խորշում է նազանքից և գվանքից, նա խորթ զավակ է, նա բողոքող, դատապարտող ուժ է, նա ձգում է վրեժիննդիր լինել և հետո իր կյանքը վերջացնել՝ իրեն ջուրը գցելով կամ զնդակահարվելով»<sup>1</sup>:

Սաթենիկ Աղամյանը, ինչպես և մինչ նրա ասպարեզ գալը՝ Սիրանուցը, շատ բան սովորեցին Վ. Ֆ. Կոմիսարժենսկայայից: Ինչպես Վ. Ֆ. Կոմիսարժենսկայան, նույնպես Սաթենիկ Աղամյանը իր ստեղծագործության մեջ բողոք էր արտահայտում նրանց գեմ, ովքեր ոտնակոխ էին անում կանացի պատիվը և արժանապատվությունը: Ինչպես Կոմիսարժենսկայայի, նույնպես և Սաթենիկ Աղամյանի ստեղծած բեմական կերպարները պասսիվ չեն, նրանք վրեժիննդիր են լինում հասարակությունից իրենց ստորացման համար և, կործանվելով հանդերձ՝ լի են հավատով դեպի ապագան: Հարազատ լինելով Վ. Ֆ. Կոմիսարժենսկայայի արվեստին՝ Սաթենիկ Աղամյանի ստեղծագործությունը, միաժամանակ նաև խորապես ազգային է և այդ տեսակետից մոտենում է Սիրանուցի ստեղծագործությանը:

<sup>1</sup> «Մշակ», 1913, № 84:

Այդ տարիներին, ինչպես նշել ենք, բնորոշ և սովորական էր գարձել հայ դերասանների ձգումը՝ իրենց կրթությունն ստանալու մուասատանում՝ ուսում թատրոնի լավագույն գործիչների մոտ:

Հետաքրքիր է մեջ քերել հետևյալ բնորոշ փաստը՝ Հայ-ռուսական թատերական կապերի պատմությունից: Հայ և ուսումնական իրադացող երիտասարդ դերասանուհի Իզաբելլա Քալանթարը, որը հայ մամուկի վկայությամբ մեծ հույսեր էր տալիս հայ թատրոնին, 1908 թվականին Մոսկվայումն է եղել և խրախուսանք է ստացել Ա. Ի. Յուժին-Սումբատովից, որի երաշխավորությամբ էլ նա մեկնել է Պետերբուրգ՝ Կ. Յակովլեսի և Ա. Պետրովսկու դրամատիկական եռամյա դասընթացներում ուսանելու<sup>1</sup>:

Հետագայում, արգեն սովորական տարիներին, ի. Քալանթարը գարձավ ուսուական թատրոնի դրամատիկական առաջատար դերասանուհիներից մեկը և ՌՍՖՍՌ վաստակավոր արտիստուհի:

Քսաներորդ դարի հայ թատրոնի ամբողջ պատմությունը, կարելի է ասել, սերտորեն կապված է Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի, Կ. Ս. Ստանիսլավսկու և Վ. Ի. Նեմիրովիչ-Դանչենկոյի արվեստի հետ:

<sup>1</sup> Տե՛ս «Գեղարվեստ», Թիֆլիս, 1909, Ա. 3, էջ 168:

Աշխարհի լավագույն թատրոնի ստեղծագործության հետ հայ թատրոնի գործիչներն սկզբում ծանոթանում էին Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի ներկայացուցիչների մասին գրվող ռեցենզիաների, այդ ներկայացումների մասին ականատեսների պատմածների միջոցով։ Այսպես, Հայաստանում գիտեին Գեղարվեստական թատրոնում Ա. Մ. Գորկու, Ա. Պ. Չեխովի, Ի. Ս. Տոլստոյի, Լ. Ն. Տոլստոյի և ուրիշ գրամատուրգների պիեսների բեմադրությունների մասին։ Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի կյանքի հետ կապված բոլոր կարևորագույն գեղարքերը կենդանի արձագանք էին գտնում հայ մամուկի էջերում։ Այդ թատրոնի հետ էին կապում հայ առաջավոր գործիչները իրենց լավագույն երազները ազգային ռեալիստական, մնայուն թատրոն ստեղծելու մասին, հակառակ հետադիմական քննադատների, որոնք Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի արվեստը համարում էին «հնացած»<sup>1</sup>։ Նրանք առանձին նշանակություն էին տալիս Ա. Պ. Չեխովի և Գեղարվեստական թատրոնի ստեղծագործական բարեկամությանը, կոչ անելով Հայաստանի դրամատուրգներին՝ նույնպիսի կոնտակտ հաստատելու հայ թատրոնի հետ։ «Չե-

խովը անհուն սիրով նվիրված էր Գեղարվեստական թատրոնին, ինչպես նաև վերջինս հսկայական դեր է խաղացել նրա տաղանդի զարգացման և մեծ հոչակի գործում», — զրում էր «Մշակը»<sup>1</sup>։ Մոսկվայի Գեղարվեստական թատրոնը, Ա. Պ. Չեխովի, Ա. Մ. Գորկու պիեսների՝ նրա բարձրարվեստ բեմադրությունները հսկայական դեր խաղացին հայ թատրոնի և կուլտուրայի գործիչների գեղարվեստական դաստիարակության մեջ։ Ռիակցիայի տարիներին հայերը Գեղարվեստական թատրոնի «Երեք գույրեր», «Հատակում», «Որոր» և ուրիշ ներկայացումներից գալիս էին այն անխախտ համոզմանը, որ մեր կյանքը, իրոք, սքանչելի կդառնա, երբ իրականանան գեղեցկության և ճշմարտության այն իդեալները, որ պրապառնդում է Գեղարվեստական թատրոնը։

Հայաստանի թատերական գործիչները հիացած էին Գեղարվեստական թատրոնի գերասանների խաղով և պրոպագանդա էին մղում հանուն այդ թատրոնի սկզբունքների։ «Եվ հուզվում ենք այդ բոլորով (դերասանների խաղով — Բ. Հ.), մոռանում արտիստների անձնավորությունն ու մեր առաջ կարծես իրենք հերոսներն են տանչվում իրենց մրրկահույզ ձգումներով, ներփին պայ-

<sup>1</sup> Տե՛ս «Կավказ», 1900, № 267.

<sup>1</sup> «Մշակ», 1910, № 22:

թումներով, հաղթանակներով ու գահավիժումներով<sup>1:</sup>

Հայտնի է այն շտեսնված հաջողությունը, որ նոնցավ Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի գաստրոլյային շրջագայությունը Եվրոպայի քաղաքներում 1906 թվականին և գաղափարական այն մեծ ազդեցությունը, որ նա գործեց Արևմտյան Եվրոպայի հանդիսականի վրա:

Այս կապակցությամբ շատ հետաքրքիր մի գեպք է պատմում հայ մի քննադատ, որ ներկա է եղել 1906 թվականի մարտի 30-ին, Գրեգրենում Գեղարվեստական թատրոնի բեմադրած «Քեռի Վանյայի» ներկայացմանը: Այդ ներկայացման վերջում Դրեգենի դերասանական խմբի անոնցից ելույթ է ունենում Պառլ Վիկենը, ասելով, որ Մոսկվայի Գեղարվեստական թատրոնը ստեղծել է նոր ուղղություն, որին, իհարկե, պետք է հետեւի գերմանական թատրոնը: Ինչպես գրում է «Մշակ» թղթակիցը, Պառլ Վիկենը հայտարարեց, որ գերմանական թատրոնը իրեն համարում է պարտված ուսական թատրոնից և խոնարհվում է նրա առջև՝ մատուցանելով նրան առաջնության այն դափնին, որը մի ժամանակ Գյոթեն հանձնել էր Շիլերին՝ ի նշան իր «պարտության»<sup>2:</sup>

<sup>1</sup> «Գեղարվեստ», 1908, № 1, էջ 87—89:

<sup>2</sup> Տե՛ս «Մշակ», 1908, № 83:

Ապա հոդվածի հեղինակը մեջ է բերում գերմանական թերթերի արտահայտությունները այն մասին, որ գերմանական թատրոնն ևս կարող է առաջ գնալ՝ միայն Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի ուղղությանը հետևելով<sup>1:</sup>

Հայ բեմում Գեղարվեստական թատրոնի ստեղծագործական սկզբունքների մարմնավորումը ամենից ավելի կապված է նշանավոր դերասան և ուժիսյոր Օվի (Հովհաննես) Սկոմյանի անվան հետ:

Օվի Սկոմյանը (1878—1920) սերտ կապված էր ուսական թատրոնի հետ, մասնակցել էր Գեղարվեստական թատրոնի գործնական աշխատանքներին, մոտիկից ծանոթ էր Կ. Ս. Ստանիլավսկու և Վ. Ի. Նեմիրովիչ-Դանչենկոյի ստեղծագործությանը: Այստեղ, Մոսկվայում, նա մասնակցեց Ռուսաստանի ուժիսյորների 1908 թվականի համագումարին: Այդ համագումարնի առաջին համագումարին: Այդ համագումարականի առաջին համագումարին: Այդ համագումարական թատրոնի, այդ թվում նաև Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի նշանավոր գործիչների ելույթները շատ մեծ դեր խաղացին Օվի Սկոմյանի թատերական հայացքների ձևավորման մեջ:

Վերադառնալով Թիֆլիս, նա սկսեց ոչ միայն

<sup>1</sup> Տե՛ս «Մշակ», 1908, № 83:

գրչով (որ նա անում էր մինչև Մոսկվա դնալը), այլև իր ստեղծագործական աշխատանքով կրքոտ խանդավառությամբ պրոպագանդել Գեղարվեստական թատրոնի տրադիցիաները:

Գրավոր և բանավոր իր բոլոր ելույթներում Օվի Սկումյանը պայքարում էր Հայ ռեալիստական թատրոնի հետագա զարգացման համար՝ իրեւ օրինակ վերցնելով Մոսկվայի Գեղարվեստական թատրոնը: Հայ թատրոնի վերակառուցման և այն իր ապրած գննաժամից դուրս բերելու համար Օվի Սկումյանը ամենից առաջ անհրաժեշտ էր համարում թատերական կոլեկտիվի ստեղծագործական ղեկավարի, իսկական ստեղծագործ ռեժիսորի դաստիարակությունը: Նա գտնում էր, որ առանձին դերասաններ, նույնիսկ այնպիսիները, ինչպես Աբելյանն ու Սիրանովը, չեն կարող սոսկ իրենց ուժով ու տաղանդով փրկել թատրոնը, որ դրա համար անհրաժեշտ է ստեղծագործական ողջ կոլեկտիվի համար գտնել և մշակել խաղի միասնական ոճ: Օվի Սկումյանը դնում էր այնպիսի կարևոր պրոբլեմներ, ինչպիսին է գերասանական խաղի մեջ «վերապրումների» մեթոդի առավելությունը՝ «ներկայացնելու մեթոդի համեմատությամբ, հարձակվելով շտամպի ու շինծուության վրա և պայքարելով գերասանների կողմից պիեսի գաղափարները գեղարվեստական կերպա-

վորմամբ և ինամքով վերարտադրելու համար: Հայ թատրոնը այդ բանը պետք է սովորի Գեղարվեստական թատրոնից, շեշտում էր Օվի Սկումյանը: «Կրկնում եմ, տունը փլվում է, մի երկու նոր սյուններով նրան անհնար է պահել, հարկավոր է արմատից, հիմքից նորոգել»<sup>1</sup>, — զրում էր Օվի Սկումյանը՝ նույն Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի օրինակով բարեփոխվելու կոչ անելով Հայ թատրոնին:

Օվի Սկումյանը հարձակվում էր նրանց վրա, ովքեր լոկ «թեթև կյանքի» համար են ընտրում դերասանի պրոֆեսիան, որպիսին իրականում պահանջում է ստեղծագործական լարված ու դժվարին աշխատանք:

Նա դուրս էր գալիս հետադիմական, ազգային-սահմանափակ այն գործիչների դեմ, որոնք ձգտում էին Հայ թատրոնի զարգացումը անշատել ուսւ թատրոնից: «Մուական թատրոնը միծ գեր է խաղում համաշարհային թատրոնի պատմության մեջ, այդ խոստովանում են Ելրոպայի բեմական նշանավոր ռեժիսորմատորները: Բնականաբար Հայ թատրոնն էլ պետք է գտնվի նրա անմիջական ազգեցության տակ», — զրում էր Օվի Սկումյանը:

<sup>1</sup> «Հուշարար», 1908, № 3, էջ 34—35:

Իր հայացքները և առաջարկությունները հայ թատրոնի վերակառուցման մասին Օվի Սկումյանը շարադրել էր մի ծավալուն գեկուցման մեջ, կարդացած 1913 թվականի հունիսի 1-ին Հայկական դրամատիկական ընկերության ընդհանուր ժողովում, որ նույն թվականին լույս տեսավ Թիֆլիսում առանձին գրքույկով: Այդ զեկուցման մեջ նա առաջարում է հայ թատրոնի ապագայի համար շատ կարևոր՝ ստուդիայի, մանկական թատրոնի, ռեպերտուրի, ազգային դրամատուրգիայի և այլ հարցեր:

Օվի Սկումյանի և հայ պրոգրեսիվ գործիչների մի ամբողջ սերնդի ձգտումը՝ ստեղծել հայկական նոր թատրոն, դժբախտաբար, շպսակվեց և չէր էլ կարող պսակվել հաշողությամբ ո՛չ ցարկան և ո՛չ էլ հետափայում դաշնակցական Հայաստանի պայմաններում:

Իր արտիստական ստեղծագործության մեջ Օվի Սկումյանը՝ Գեղարվեստական թատրոնի գերասանների անմիջական աղդեցության տակ ստեղծեց մի շարք նշանակալից դերեր: Այդպիսին էր, օրինակ, նրա Սատինը՝ Մ. Գորկու «Հատակում» պիեսի ներկայացման մեջ, որ մոտ էր Սատին-Ստանիսլավսկուն՝ Գեղարվեստական թատրոնում:

Նրա ոեժիսյորական լավագույն աշխատանքներից են «Հատակում» (1909), «Կենդանի դիակ» (1912), «Ծեփոր» (1914) պիեսների բեմադրությունները: Ուշագրավ է նաև այն, որ Մոսկվայում, 1910—1911 թթ. Սկումյանը բեմադրեց Ալեքսանդր Շիրվանզադեի «Եվգինեն» և Գաբրիել Սունդովյանի «Պեպոն»:

Հակառեալիստական գաղափարագործի արվեստի կողմնակիցների դեմ, հայ դեմոկրատական թատրոնի լավագույն տրավիցիաները պահպանելու համար մզված պայքարը հիմնականում շոշափում էր ոեպերտուարի հարցը: Դա պայքարը էր կլասիկ դրամատուրգիայի համար: Հայ թատրոնի լավագույն գործիչները եռանդուն կերպով պաշտպանում էին ոռու կլասիկայի բեմադրությունները: Այդ տարիներին առաջին անգամ հայ բեմում երևան եկան Ա. Մ. Գորկու «Հատակումը» (1908), Լ. Ն. Տոլստոյի «Կենդանի դիակը» (1912), Ա. Կ. Տոլստոյի պատմական ողբերգությունները՝ «Ֆեոդոր Խոհաննովիլ արքան» (1909) և «Խոհանն Ահեղի մահը» (1912), Ա. Ն. Օստրովսկու «Ամպուպը» (1915) և շարունակում էին բեմադրվել «Ծեփորը», «Դիմակահանդեսը» ու մի շարք այլ պիեսներ:

Զնայած քննադատության պահպանողական մասի ցասումնալից դիմադրությանը՝ առանձին

Հաջողություն են ունենում Ն. Վ. Գոգոլի և Ա. Ն. Օստրովսկու պիեսների բեմադրությունները: «Ռե վիզորը» շորս անգամ թարգմանված է եղել Հայերեն, «Ամուսնությունը»՝ հինգ անգամ: Ա. Ն. Օստրովսկու շորս պիեսը երեսունչորս թարգմանություններ են ունեցել և միաժամանակ խաղացվել են գանացան թատրոններում:

1914 թվականին Օվի Սկումյանի բեմադրած «Ռե վիզորի» հսկայական հաջողությունը ապացուցեց, որ բոլոր վեճերը — պե՞տք է արդյոք թե ոչ ռիմիզորը» հայ հանդիսականին — զորի են որևէ հիմքից, որ «հայկական իրականության մեջ շատ և շատ կան գոգոլյան տիպեր, որոնք դեռ այսօր գործում են մեր կյանքի ասպարեզներում և աղդում իրերի այս կամ այն վիճակի վրա»<sup>1</sup>, որ «կովկասահայ երիտասարդությունը, որը կամ ուսի է պետության դպրոցներում, կամ տեսել է նշանավոր գրողի «Վերաքննիչ» պիեսը ոսւսական և հայերի բեմերի վրա, կամ կարդացել է նրա հեղինակությունների բնագիրը և մասամբ հայ թարգմանություններով, կրթվել է Գոգոլի գրվածքների ազդեցության տակ,— նրան ընդունում է մոտ իր սրտին»<sup>2</sup>:

<sup>1</sup> «Մշակ», 1909, № 59:

<sup>2</sup> Նույն տեղում, № 58:

«Ռե վիզորն» Օվի Սկումյանի բեմադրությամբ ապացուցեց հայ ֆորմալիստական քննադատության ողջ սնանկությունը, այն քննադատության, որն այդ տարիներին հանդես եկավ մի լողունգով, թէ՝ կարեոր չէ «ինչ խաղալ», այլ «ինչպես խաղալ», և որն, այսպիսով, անշատում էր երկի գեղարվեստական ձեզ նրա բովանդակությունից՝ դարձնելով այն ինքնանպատակ<sup>1</sup>: Այդ քննադատությունը գիտակցաբար բացասում էր թատրոնի ակտիվ գերը հայ հասարակության առաջավոր հայցքների ձևավորման մեջ՝ հայտարարելով, թե իրը սխալվում են այն բեմական գործիչները, որոնք ճնայում են թատրոնին որպես մտավոր կրթավայրի, ուստի և շարունակ պիեսների ընտրությունները կատարում են դրանց բովանդակության համեմատ»<sup>2</sup>:

Վերջապես կարեորն այն է, որ հայ հասարակության ուսուցչին շարժման վերելքի տարիներին երեան եկած «Ռե վիզորը» ավելի ևս ուժեղ կերպվ է հրահրում հանդիսականների ատելությունը դեպի այն հասարակարգը, որ ծնունդ էր տալիս այդպիսի ծախու կաշառակերների ու անպիտանների, ինչպիսիներին պատկերել է պիեսի անմահ հեղինակը:

<sup>1</sup> Տե՛ս «Մշակ», 1910, № 124:

<sup>2</sup> Նույն տեղում:

«Ռեփորտի» ներկայացման մեջ խաղում էին հայ թատրոնի լավագույն ուժերը՝ Մայսուրյան (Աննա Անդրեևնա), Ալիխանյան (Խեստակով), Աբելյան (Օսիպ), Մամիկոնյան (Դորչինսկի), Ավետյան (Բոբչինսկի), Ժաման (Մարիա Անտոնովնա), Հասմիկ (Պոշլյոպկինա) և ուրիշներ: Թատերական քննադատությունը նշում էր ներկայացման զարմանալի գեղարվեստական ամբողջականությունը, ինչպես և այն, որ նույնիսկ էպիգոդիկ դերերը ոռու իրականության տիպիկ նմուշներ էին պատկերում<sup>1</sup>:

Ինքը՝ Օվի Սկումյանը տակավին 1911 թվականից սկսած համարվում էր Քաղաքապետի լավագույն դերակատարներից մեկը: Մի քննադատ, որ առաջին անգամ էր տեսել նրան բեմում, գրում էր. «Ուր էր, թե տիպական այդօրինակ գծերի նուրբ վերարտադրման օրինակներ կարողանար տալ մեզ պ. Սկումյանը ուրիշ դերերում ևս»<sup>2</sup>:

Օվի Սկումյանը Մոսկվայի Գեղարվեստական թատրոնում Քաղաքապետի դերում տեսել էր ի. Մ. Ռուբելի սքանչելի խաղը, որ կարևոր նշանակություն էր ունեցել նրա կողմից այդ կերպարի ստեղծման գործում: Ընդհանրապես ոռու դրամա-

<sup>1</sup> Տե՛ս „Կավկազ“, 1914, № 257:

<sup>2</sup> «Արոր», Թիֆլիս, 1911, № 10—11, էջ 132:

տուրգիայի բոլոր այն դերերում, ուր նա հանդես էր գալիս՝ լիներ դա Քաղաքապետը, Նեղնամովը («Անմեղ մեղավորներ»), թե Դիկոյը («Ամպրոպ»): Նա աշքի էր ընկնում դերի բազմակողմանի ուսումնամիտությամբ, դիմախաղի, շարժումների մանրազնին մշակմամբ, կերպարանափոխման վարպետությամբ<sup>1</sup>:

1912 թվականի հունվարի 9-ին Օվի Սկումյանը բեմադրում է Լ. Ն. Տոլստոյի «Կենդանի դիակը»: Լ. Ն. Տոլստոյի դրամատուրգիան ևս իր համար պայքարով էր ճանապարհ հարթում դեպի հայ բեմը<sup>2</sup>: Հանրածանոթ է, թե ինչպիսի աղմուկ բարձրացրեց Լ. Ն. Տոլստոյի մահից հետո՝ նրա անվան շուրջը բոլոր բարձրական քննադատությունը: Հայ առաջավոր քննադատական միտքը, սակայն, դեռևս XIX դարի վերջերին շատ բարձր էր գնահատում Լ. Ն. Տոլստոյի դրամատուրգիայի անխնանեալիզմը, նշելով նրա դիմակազերծող հանճարի սոցիալական հակայական նշանակությունը: Այսպես, ոռու բեմում «Խավարի թագավորություն» պիեսի բեմադրության մասին հայ քննադատներից մեկը գրում էր, թե նրա հեղինակը «իր գեղարվես-

<sup>1</sup>Տե՛ս «Մշակ», 1911, № 145:

<sup>2</sup> Այս մասին մանրամասն տե՛ս Ռուբեն Զարյան, «Կենդանի դիակ» բեմական պատմությունը, Հայկական ԱՄՆ ԳԱԱ «Տեղեկագիր», 1953, էջ 19—33:

տական գրչով կարողանում է այնպես ուժեղ ցընցում պատճառել և ստիպել մտածելու, թե պետք է պատճել այդ խավարը...»<sup>1</sup>:

Հայ կուլտուրայի գործիչների համար հանձարեղ Տոլստոյի անողոք, «բոլոր և ամեն տեսակ» դիմակներ պատռող ոեալիզմը միշտ եղել է ճշմարիտ գեղարվեստի իսկական դպրոց: Հայ ժողովրդի դեպի Տոլստոյն ունեցած անհուն սիրո արտահայտություններից է հետեւյալ հետաքրքիր փաստը: Ինչպես հայտնի է, և. Ն. Տոլստոյը հրապարակորեն հրաժարվել էր ոռուական ուղղափառ եկեղեցուց, այդ պատճառով էլ նրա մահվանից հետո Սինոդն արգելել էր նրա համար հոգեհանգիստ կատարել: Եվ ահա հայ դեմոկրատ ինտելիգենցիայի նախաձեռնությամբ, իբրև բողոքի միցուց, Մոսկվայի հայկական եկեղեցում առաջին անգամ, հենց հանձարեղ գրողի թաղման օրերին, կատարվում է հանդիսավոր հոգեհանգիստ այն մեծ մարդու հիշատակին, որը եղել է կղերական դոգմաների կատարի մերկացնողը<sup>2</sup>:

Հետաքրքիր է նշել, որ ինքը և. Ն. Տոլստոյը հետաքրքրվում էր հայ ժողովրդի ճակատագրով և նրա դրությամբ Թյուրքիայում, ինչպես և ծանոթ

<sup>1</sup> «Մշակ», 1895, № 143:

<sup>2</sup> Տե՛ս «Մուրհանդակ», Թիֆլիս, 1910, № 177—178:

էր մի քանի հայ գրողների ստեղծագործություններին<sup>1</sup>:

«Կենդանի դիակ» դրաման, որ տպագրվեց միայն և. Ն. Տոլստոյի մահվանից հետո, առաջ բերեց աշխույժ դիմուսականներ ուսագրակական և գրական-թատերական շրջաններում: Եվ դա բոլորովին էլ պատճական չէր, քանի որ պիեսը շոշափում էր ժամանակակից կյանքի մի շարք հրատապ հարցերը և դիմակազերծ էր անուանություններու հարաբերական հարաբերությունների կեղծ էությունը: Բնական է, որ Ֆեղյա Պրոտասովի կերպարը տարբեր մեկնարանություն էր ստանուած դեմոկրատական և լիբերալ քննադատների կողմից:

Գեղարվեստական թատրոնում «Կենդանի դիակի» հոյակապ բեմադրությունից հետո, այդ երկը չտեսնված տարածում ստացավ. Ուսւաստանի և նրանից դուրս գտնվող բոլոր թատրոններում: Հայ պահպանողական մամուլի բացասական վերաբերմունքը դեպի այդ պիեսը երեան էր և կել արդեն այն ժամանակից, երբ այն բեմադրությել էր Գեղարվեստական թատրոնում: Մոսկվայում հրատարակվող հայերեն «Մարտ» ամսագիրը, որը, ըստ էության, զբաղվում էր լոկ նրանով:

<sup>1</sup> Տե՛ս «Մուրհանդակ», Թիֆլիս, 1909, № 67:

որ սիստեմատիկ կերպով նսեմացներ հայ կուտուրայի նվաճումները, փոխանակ իր ընթերցողներին Տոլստոյի երկի հետ ծանօթացնելու, — գրում էր, թե պիեսը թուզլ է և նրա հաջողությունը բացատրվում է միայն նրանով, որ այն բեմադրել է Գեղարվեստական թատրոնը<sup>1</sup>:

Թիֆլիսում ևս Ֆեդյա Պրոտասովի կերպարք առաջ բերեց մեծ դիսկուսիա, ինկ ոռուական թատրոնում «Կենդանի դիակի» բեմադրությունից հետո նույնիսկ դրամայի գլխավոր հերոսի գրական դատն են կազմակերպում:

«Կենդանի դիակի» հայերեն ներկայացման մեջ և՝ էպիգոդիկ, և՝ հիմնական դերերում խաղում էին մեր բեմի նշանավոր վարպետները. Պրոտասովը խաղում էր Ի. Ալիխանյանը, Լիզա՛ Օ. Մայսուրյանը, Կարենին՝ Օ. Սևոմյանը, Կարենինա՝ Սիրանուցը, Արքեզիկով՝ Հ. Աբելյանը, Սաշա՝ Ժասմենը, Աննա Պավլովնա՝ Զարեկը, Քննիչ՝ Մ. Մանվելյանը, Պետուշկով՝ Գ. Ավետյանը, Գնչուհ՝ Ա. Հարությունյանը և այլն:

Այդ ներկայացումը հիացմունքով ընդունվեց պրոգրեսիվ քննադատության կողմից, որն առանձնապես նշեց ինչպես ուժիւրական բարձր կով-

<sup>1</sup>Տե՛ս «Մարտ», Մոսկվա, 1911, № 2, էջ 12.

տուրան, նույնպես և դերասանական սքանչելի անսամբլը: Կարեորն այն է, որ ուժիւրակովը և գլխավոր դերակատար հսահակ Ալիխանյանը, ինչպես նշել էր մամուլը, առաջնորդվել էին ոչ թե գուտ էսթետիկական պահանջներով, այլև երկի գաղափարական կողմով՝, գրա համար էլ քննադատները նրանց անվանում էին հայ բեմի բարեկարգիշներ<sup>2</sup>:

Եթե քննադատության դեմոկրատական թեր ոգորությամբ ընդունեց ներկայացումը, ապա բոլորուական լիբերալ ինտելիգենցիան ուղղակի «Վրդովվեց» նրանով: «Պարտերում նստած ինտելիգենտ հասարակությունը մի առանձին ախորժանք չէր գտում Տոլստոյի պիեսից»<sup>3</sup>:

Այդպիսով, «Կենդանի դիակ» պիեսի շուրջը մղված պայքարը հայ թատրոնում վերածվեց ունակությունից համար մղվող պայքարի, «արվեստը արվեստի համար» գաղափարազուրկ տեսության դեմ մղվող պայքարի:

Այս ներկայացման հետ միասին անհրաժեշտ է նշել ևս երեք կարևոր իրադարձություն այդ տարիների հայ թատրոնի կյանքից:

Դա, նախ և առաջ, Ա. Ն. Օստրովսկու «Ամպ-

<sup>1</sup>Տե՛ս «Հնկեր», Թիֆլիս, 1912, № 3, էջ 10.

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում:

թոպի» 1915 թվականի հունվարի 26-ին կայացած բեմադրությունն էր:

Ա. Ն. Ստրովսկու լավագույն դրամայի «Ամպրոպի» հայ թատրոնում այդքան ուշ երկան գալը բացատրվում է պահպանողական քննադատության կողմից նրա դեմ սկսած կատաղի հարձակումներով: Այդ քննադատությունը պարզապես չէր կամենում, որ այդ պայծառ շողը լուսավորեր հայ իրականության «խավարի թագավորությունը»:

«Ամպրոպի» դեմ մղվող պայքարը սկսվել էր տակավին 80-ական թվականներին, դեռ այն ժամանակ, երբ Կատերինայի դերում Թիֆլիսում հսկայական հաջողությամբ հանդես եկան Մ. Ն. Երմոլովան, Մ. Գ. Սավինան և Պ. Ա. Ստրեպետովան: Այդ ներկայացումների հաջողությունը պահպանողական քննադատությունը բացատրում էր միայն և միայն դերասանութիւների տաղանդավոր խաղով:

«Ամպրոպի» բեմադրության նախաձեռնությունը պատկանում էր Օլգա Մայսուրյանին, որն այդ պիեսն ընտրել էր իր բենեֆիսի համար: Քըն-նադատներից մեկը, կշտամբելով դերասանութուն այդ ընտրության համար, գրում էր հետեւյալը. «Նկարագրված են սովորական սիրահարություններ, որոնց մեջ աշքի ընկնող ապրումներ չկան: Բեմը ծանրաբեռնում են ավելորդ մարդիկ» (Թի-

կոյ): Իսկապես, ժամանակակից հասկացողությամբ, պիեսում դրամա չկա: «Փոթորիկը» (այսինքն «Ամպրոպը» — Բ. Հ.) գուցե որոշ հետաքրրերություն ներկայացներ իր ժամանակին, բայց այժմ նման պիեսները հնացած պետք է համարել: «Փոթորիկը» տակավին գուցե մի բան ասե գավառացի ոռուի սրտին, սակայն նա մեզ, հայերիս համար՝ անհարազատ է, և մասամբ դրա համար է, որ անհաջող ենք համարում նրա ընտրությունը»:

Իսկ ներկայացումը, որի մեջ բացի Օ. Մայսուրյանից, որ հանդես էր գալիս Կատերինայի դերում, մասնակցում էին Հասմիկը (Կաբանովա), Օ. Սկումյանը (Դիկոյ), Ա. Բերոյանը (Բորիս), Ի. Ալիխանյանը (Տիխոն), Ա. Մամիկոնյանը (Կուրյաչյան), Լ. Սկումյանը (Վարվառա), Վ. Միրզոյանը (Կովկասին), — հանդիսականին բոլորովին հակառակն էր ասում: Ռուս մամուկը բարձր դնահատական տվեց դերասանների խաղին, նշեց ներկայացման մեջ պատկերված իրականության կենսունակությունը և տիպականությունը: Առանձնապես բարձր է գնահատվում Օ. Մայսուրյանի տաղանդավոր խաղը Կատերինայի դերում՝ 4-րդ գործողության մեջ: «Երբ Կատերինան գոջում է

1 «Մշակ», 1915, № 19:

իր «Հանցանքը» և ուշաթափվում՝ տիկին Մայ-սուրյանը ցնցող տպագլություն է թողնում»<sup>1</sup>:

1917 թվականի Հունվարի 23-ին, ներկայումս նշանավոր ողբերգակ Վահրամ Փափազյանի բննե-ֆիսին կայացավ Մ. Յու. Լեռմոնտովի «Դիմակա-հանդես» դրամայի բեմադրությունը, լավագույնը հայ բեմում, որովհետեւ այն ազատված էր գրա-քննչական կրամառումներից և նրանում առավել ուժեղ, քան երեկէ, զնշեց Արքենինի սոցիալական ողբերգությունը: Եվ դա երբորդ կարևոր իրա-գարձությունն էր այդ տարիների հայ թատրոնի կյանքում:

Վահրամ Փափազյանը Արքենինի դերում ստեղծեց տեմպերամենտով, գեղարվեստորեն ամ-սովորական, կատարյալ մի կերպար<sup>2</sup>: Մյուս դերե-րում մասնակցեցին՝ Սիրանուշը (բարոնուհի Շտրայլ), Համմիկը (Նինա), Օվի Սկումյանը (Անհայտ) և ուրիշներ:

Այսպիսով, հայ թատրոնի լավագույն մասը ուսւ կլասիկ դրամատուրգիայի բնմադրություննե-րով քայլ առ քայլ զարգացնում և ամրապնդում էր հարազատ թատրոնի ռեալիստական տրադի-ցիաները: Այդ տեսակետից նշանակալի դեր խա-

<sup>1</sup> «Կավազ», 1915, № 22:

<sup>2</sup> Տե՛ս «Մշակ», 1917, № 14:

ղաց Մաքսիմ Գորկու «Հատակում» պիեսի ներ-կայացումը, որի մասին կխոսվի առանձին:

Այդ ժամանակաշրջանում մերթ ընդ մերթ հայ բեմում դեռևս երեան եկող կլասիցիստական կեղծ-պատմական դրամատուրգիայի դեմ մղվող պայ-քարում կարեռագույն նշանակություն ունեցավ ուսւ պատմական լիարժեք դրամատուրգիան, օրի-նակ, այնպիսի գործերը, ինչպես Ա. Կ. Տոլստոյի «Ֆեոդը Իոհաննովիլ արքան» և «Իոհան Աշեղի մահը» դրամաները: Իոհան Աշեղի դերում փայ-լուն կերպով հանդես եկավ Հովհաննես Արքյանը: Եվ դա, վերջապես, երրորդ կարևոր դեպքն էր այդ տարիների հայ թատրոնի կյանքում:

Ֆեոդոր արքայի անփոխարինելի դերակա-տարն էր Խաչակ Ալիխանյանը: Մամովը գրում էր, որ այդ գերում Խաչակ Ալիխանյանը հասավ այնպիսի բարձունքի, որին կնախանձեին նույ-նիսկ ուսաց շատ դերասաններ: Նա այնքան նույր, մտածկու, զոգեբանական և խարակուրի ճշտությամբ դուրս բերեց հիվանդու, կամքից զարդ, թույլ, բարի թագավորին, որ դրանից ավե-լին դժվար է տեսնել<sup>3</sup>:

1916 թվականի փետրվարի 15-ին տեղի ունե-ցավ «Ֆեոդոր Իոհաննովիլ արքայի» նոր բե-

<sup>3</sup> «Հովհան», Թիֆլիս, 1910, № 1, էջ 13:

մադրությունը, որ լավագույններից էր հայ բեմում։ Քննադատությունը գրում էր, որ Ա. Կ. Տուստոյի պիեսը գեռ երրեք «այնպես կանոնավոր, մշակված ու սահուն» չէր խաղացվել, ինչպես այս անգամ, որ «այդ ներկայացումը պատիվ է բերում մեր գերասաններին»<sup>1</sup>:

Այդ հաջողության մեջ, ինչպես նշում էին թերթերը, կարեռ դեր խաղաց ներկայացման բեմագրովը՝ ոռու ռեժիսյոր, ներկայումս Ազրբեջանական ՍՍՌ ժողովրդական արահստ Ա. Ա. Տուգանովը։ Այդ մասին կարդում ենք. «Եթե հնարավոր լիներ թատերաշրջանի ընթացքում մի քանի ներկայացումներ տալ, մանավանդ երբ բեմադրվում են ոռուական և թարգմանական պիեսներ, փորձված ոռու ռեժիսյորի ղեկավարությամբ, մայրենի բեմը կշահեր դրանից»<sup>2</sup>:

Խոսելով ներկայացման ռեալիզմի, պատմական իրականության ճշգրիտ արտացոլման մասին, քննադատությունը տեսնում էր այն հսկայական անշրապետը, որ բաժանում էր այդ բեմադրությունը հայկական կեղծ-պատմական պիեսների բեմադրություններից։ Այդ բեմադրությունը իր բարձր կուլտուրայով և գեղարվեստական վարպետու-

<sup>1</sup> «Մշակ», 1916, № 36;

<sup>2</sup> Նույն տեղում:

թյամբ, իրոք որ, մեծ նվաճում էր մինչունուցիոն հայ թատրոնում։ Քննադատությունը այսպես էր նկարագրում ներկայացումը. «Դերերի շատ լավ սերտողություն և շատ լավ գրիմներ, շարժումներն ու ձևերը կանոնավոր ու մտածված, խմբական տեսարաններն առանց շփոթի և խանգարման, խաղն ու միմիկան չափված ու ձևած, արտասանության տոնը բնական և ոռուական խարակտերին համապատասխան։ Մենք այդ երեկո որքան նախարարներ, իշխաններ, թագուհի, պալատականներ և այլ սպասավորներ ու ժողովրդի ներկայացուցիչներ տեսանք, բոլորն էլ բնական, մարդկային շարժումներով և ձևերով ու տոնով ցուցադրված, այլ ոչ ըստ սովորականին, երբ նույն դերասանները հայկական անցյալից կամ թարգմանական պատմական պիես են ներկայացրել, տվել են մեզ բնմի վրա արքաներ, նախարարներ և թագուհիներ, շինծու, կեղծ և արտառոց քայլվածքով, կեղծ արտասանություն, խոսակցություննը երգելու նման և այլն»<sup>1</sup>:

«Ֆեոդոր Իոհաննովիչ արքան» դրամայում հոյակապ էին խաղում նաև Հովհաննես Աբելյանը՝ իվան Շուշուկի, Օվի Սևումյանը՝ Թորիս Գողունով,

<sup>1</sup> «Մշակ», 1916, № 36;

Հասմիկը՝ Իրինա, Միքայել Մանվելյանը՝ Լուպ Կլեշնին:

Հայ դերասանների այն նշանավոր պլեադան, որն այդ տարիներին ճանապարհ էր Հարթում ոռու դրամատուրգիայի համար դեպի Հայ բեմը, սերտորեն կապված էր ոռու առաջավոր թատերական կուլտուրայի հետ և հայ դեմոկրատական հանդիսականի հայացքների իսկական արտահայտիչն էր հանդիսանում: Այդ դերասանները, բացի Հայկական դրամատիկական ընկերության ներկայացումներին մասնակցելուց, մշտական մասնակիցներն էին նաև Թիֆլիսի Զուբալովի անվան Ժողովրդական տան հայկական դրամատիկական սեկցիայի ներկայացումների, ուր միաժամանակ աշխատում էին ոռուական, վրացական, ուկրաինական սեկցիաները և այդ հանգամանքն անտարկույս խոշոր դեր խաղաց եղբայրական ժողովուրդների թատերական գործիչների բարեկամական հարաբերությունների ամրապնդման գործում:

Կարեռ է և այն, որ իր կաղմակերպման առաջին օրերից, այսինքն 1909 թվականի ապրիլից, կապված լինելով Գաբրիել Սունդովյանի դրամատուրգիայի հետ, հայկական սեկցիայի գործունեությունը միաժամանակ կապված էր նաև ոռու ռեալիստական պիեսների բեմադրության հետ. այդտեղ ևս դրվում էին «Թիֆլորը», «Եկամուափոր

պաշտոնը», «Անմեղ մեղավորները», «Վանյուշինի զավակները» և մի շարք այլ պիեսներ:

Այդ ժամանակաշրջանի հայ լավագույն դերասանների ռեալիստական արվեստը ցուց էր տրվում Մոսկվայի և Պետերբուրգի հանդիսականներին, ուր Հայ դրամատիկական խումբը գաստրոնոմներ էր տալիս 1912 թվականի մարտ ամսին: Խմբի ռեպերտուրում էին Ա. Շիրվանցաղի «Նամուսը», Ա. Յուժին-Սումբատովի «Դավաճանությունը», Ա. Սուվորինի և Վ. Բուրենինի «Մեղան», Հ. Զուգերմանի «Հայրենիքը»:

Մոսկվայի և Պետերբուրգի մամուլը շատ բարձր գնահատեց հայ դերասաններ՝ Սիրանովշի, Հովհաննես Արելյանի, Հովհաննես Զարիֆյանի, Միքայել Մանվելյանի, Օլգա Մայսուրյանի և ուրիշների խալը: Առանձնապես հաջողություն ունեցներ Սիրանովշի Ա. Յուժին-Սումբատովի դրամացան Սիրանովշի Ա. Յուժին-Սումբատովի դրամացանը Զեյնարի և Հովհաննես Արելյանը՝ Օթար-բելի դերերում:

Քննադատությունը անգերազանցելի համարեց Սիրանովշին Զեյնարի, Մեդեայի և Մագդայի դերերում, գտնելով, օրինակ, որ Զեյնարի դերում Սիրանովշի կատարմամբ մեծ վարպետությամբ

1. Տեատր и искусство, СПБ, 1912, № 12, стр. 255.

ներդաշնակվում էր «փառքի ձգտումը մայրական քնքույշ զգացման հետ»<sup>1</sup>:

Հայ բեմի ներկայացումներին ներկա էին լինում Կ. Ստանիսլավսկին, Վլ. Նեմիրովիչ-Դանչենկոն, Մ. Երմոլովան, Կ. Մարշանովը, Ա. Յուժին-Սումբատովը և ոռուսական թատրոնի այլ նշանավոր գործիչներ, որոնք այն օրերին շատ զովասահական գնահատականներ են տվել Հայ թատրոնի արտիստների կատարողական արվեստին:

Լրագրերը հաղորդում էին գերասանների մեծ հաջողության մասին, Սիրանուցի տարած հաղթանակի մասին, որ ծաղկեփունչ ստացավ Մ. Երմոլովայից<sup>2</sup>, այն մասին, որ «Դավաճանության ներկայացումից հետո Սիրանուցին և Մայսորյանին ժաղկե կողովներ տրվեցին, իսկ Արելյանին՝ դափնե պսակ: Հեղինակից՝ Ա. Յուժին-Սումբատովից տիկին Սիրանուցին պսակ էր տրվել՝ հետևյալ մակագրությամբ. «Տաղանդավոր Զեյնաբ-Սիրանուցին՝ «Դավաճանության» հեղինակից»<sup>3</sup>:

<sup>1</sup> „Ռանու յորո“, Մ., 1912, 9 մարտ. Հայկական ներկայացումներին՝ Մոսկվայի մամուլի տված զրական գնահատականների մասին աե՛ս. „Տուդիա“, 1912, № 23, 24, 25; „Ռուսական ամսագրությամբ. Տաղանդավոր Զեյնաբ-Սիրանուցին՝ «Դավաճանության» հեղինակից“<sup>3</sup>:

<sup>2</sup> Տե՛ս „Ռուսական ամսագրությամբ. Տաղանդավոր Զեյնաբ-Սիրանուցին՝ «Դավաճանության» հեղինակից“<sup>3</sup>:

<sup>3</sup> „Ռանու յորո“, 1912, 9 մարտ.

Օլգա Գուլազյանը հիշում է խմբի, Սիրանուցի, Արելյանի մեծ հաջողության մասին. «Մոսկվայում նրան տեսնողները ասում էին, որ Սիրանուցի բոլոր զգերի Զեյնաբներից ամենահաջողն է ու կատարելության հասածք»<sup>1</sup>:

Եթե Մոսկվայում հայկական խմբի ունեցած հաջողությունը հայ պահպանողական քննադատության սրտովը չէր, ապա մեր բեմի պրոգրեսիվ գործիչները դրանում տեսնում էին հայ թատրոնի ապագա ծաղկման հաստատ գրավականը և ոռու թատրոնի հետ նրա կապերի ամրապնդման անժմանելի վկայությունը: Դրա համար էլ նրանք ցանկություն են հայտնում, որպեսզի հայ դրամատորդիան էլ տեղ գտնի ոռու բեմում, որն «այսօր տիեզերական բեմի վրա առաջինն է»<sup>2</sup>:

Հայկական խոմբը դեռևս Մոսկվայումն էր, երբ տեղեկություն ստացվեց հայ մեծ դրամատուրգ Գաբրիել Սունդուկյանի մահվան մասին: Նշանավոր դրամատուրգին ծանոթ էին և բարձր էին գնահատում ոռու ժողովրդի կուլտուրայի խորագույն գործիչները: Նրանցից շատերը՝ Ա. Ա. Յարլոշկինան, Ա. Ի. Յուժին-Սումբատովը և ու-

<sup>1</sup> Օլգա Գուլազյան, Հուշեր, էջ 209;

<sup>2</sup> «Մարտ», 1912, № 5-6, էջ 16-17:

րիշները Գաբրիել Սունդովյանի մահվան կապակցությամբ խորը ցավակցություն հայտնեցին հայ ժողովրդին։ Ա. Ա. Յաբլովինան, այժմ՝ Փոքր թատրոնի հնագույն դերասանուհին, ՍՍՌՄ ժողովրդական արտիստուհին՝ գրում էր. «Խորապես զգացված եմ մեծ հայ դրամատուրգի մահվամբ։ Ընդունեցեք իմ անկեղծ ցավակցությունը ձեզ հասած ծանր վշտի համար»<sup>1</sup>։

Սուկվայում և Պետերբուրգում տված գաստրոները հայ թատրոնի կյանքում դարձան նրա արվեստի ստուգումը՝ ոռւս թատրոնի առաջավոր գործիչների գատաստանի առջե, միևնույն ժամանակ դա ստեղծագործուեն ավելի սերտ մոտեցրեց իրար թե՛ հայ և թե՛ ոռւս թատրոնները և թե՛ նրանց խանդավառ գործիչներին։

Այս կապակցությամբ մենք կամենում ենք նշել մի շափազանց կարևոր հանգամանք հայ-ոռւսական թատերական կապերի պատմության մեջ։ Մեր թատրոնի պրակտիկայի ամբողջ պատմությունը ցուց է տալիս, որ հայ թատրոնը և նրա լավագույն ներկայացուցիչները եղել են ոռւս կլասիկ դրամատուրգիայի և ոռւս դերասանական դպրոցի պրոպագանդիստները ոչ միայն իրենց հայրենիքում՝ հայ բեմի վրա, այլև արտասահմա-

նում՝ թյուրքիայում, Իրանում, Բուզարիայում, Շումինիայում։

Թերենք մի քանի օրինակ։

1908 թվականին «Աբելյան-Արմենյան» գաստրոներին խումբը մեծ հաջողությամբ ներկայացնելու է տալիս Թյուրքիայի մի շարք քաղաքներում։ Խմբի ռեպերտուրը բաղկացած էր հայ, ոռւս, արևմտահյուսական դրամատուրգների երկերից՝ Ա. Շիրվանզադեի «Պատվի համարը» և «Զար ոգին», Գ. Սունդովյանի «Պեպոն», Ա. Սուխովո-Կորիկինի «Կրեշինսկու հարսանիքը», Ս. Նայբյունովի «Վանյուշինի զավակները», Հ. Իրսենի «Դոկտոր Շտոկմանը», Ֆ. Շիլերի «Աեր և խաղողավանքը» և այլն։ Այդ գաստրոները բեկումնային գեր խաղացին թյուրքական և մասնավորապես արևմտահյա թատրոնների համար, որոնք աչքի էին ընկնում իրենց խաղի շինծուությամբ և մելոդրամատիկ ռեպերտուրով («Փարիզի շրջութիւնը», «Երկու որբ», «Պատիվ և մահ» և ուրիշները)։ Եվ դա հատկապես նշվեց թյուրքահայ մամուլում. «Երբ պոլսահայ թատրոնը ապրում էր անկում, ոռւսները բերում էին ռեալիստական արվեստի գոհարները»<sup>2</sup>։

1910 թվականին, երբ Թեհրանում Հովհաննես

<sup>1</sup> «Առըհանդակ», 1912, № 543։

<sup>2</sup> «Ժամանակ», Պոլիս, 1909, № 126։

Աբելյանի խոսմբը խաղում էր Ն. Վ. Գոգոլի «Ռեկադոր»՝, սիրողների տեղական խումբը՝ ովելորված այդ ներկայացումով՝ խաղաց Գոգոլի այդ նույն կոմեդիան պարսկերեն։ Ներկայացման մասնակիցները և հանդիսականները ցանկություն հայտնեցին ավելի հաճախ տեսնել ուսւ դրամատուրգիայի այդպիսի պիեսներ։ Եվ դա պատահական չէր, քանի որ «Ռեկադոր»-ում արտացոլված իրականությունը այնքան էլ հեռու չէր պարսկական իրականությունից։

Այդ ներկայացման մասնակիցներից մեկն էր հայ դերասանուհի Արմեն Տեր-Օհանյանը<sup>2</sup>, ազգային թատրոնի հիմնադիրը Իրանում։ Նրա ստեղծագործական կենսագրությունը շատ նշանակալից է։ Նա սովորել էր Մոսկվայում՝ դրամատիկական կուրսերում և պլաստիկայի դպրոցում։ Իրոք դերասանուհի նա մի ժամանակ աշխատել էր Մոսկվայի Գեղարվեստական թատրոնում, իսկ իրեւ պարուհի՝ Թիֆլիսի օպերային թատրոնում։

Ինչպես պատմում է ժամանակակիցներից մեկը, Արմեն Տեր-Օհանյանին բախտ էր վիճակ-վել դառնալ ազգային առաջին թատրոնի հիմնադիրը Իրանում։ Այդ գործը գլուխ բերելու համար

<sup>1</sup> Տե՛ս „Կավказ“, 1910, № 197.

<sup>2</sup> Նույն տեղում։

նա բացառիկ համառությամբ սկսում է ուսումնասիրել պարսկերեն լեզուն։ Երկու ամսվա ընթացքում նրան հաջողվում է այնքան տիրապետել պարսկերենին, որ կարողանում է իր դերերը կատարել այլևս առանց հուշարարի<sup>1</sup>։

Թե՛րանում ազգային թատրոնի հիմնադիրների առաջին ժողովը նախապատրաստում և հրավիրում է Ա. Տեր-Օհանյանը։ Այդ ժողովը որոշում է ուսպերտուարի մեջ մտցնել կլասիկ երկեր և պարսկական կենցաղային ինքնուրույն պիեսներ, ինչպես նաև թարգմանել ուսւ հեղինակների դրամատիկական լավագույն ստեղծագործությունները և միանգամայն մի կողմ նետել էժանագին վուկելիներն ու մելոդրամաները։ Ներկայացումներից ստացված եկամուտը հատկացվելու էր զպրոցների բարեկարգությանը և լուսավրական նպատակների<sup>2</sup>։ Առաջին ներկայացմանը բեմադրվեց Ֆ. Շիլերի «Ավագակները» դրաման, և ապա միայն վերոհիշյալ «Ռեկադորը»։

Հայ դերասանների միջոցով ուսական դրամատուրգիան լայնորեն տարածելու մի այլ համովիչ օրինակ է՝ Ֆ. Դոստովսկու «Ոճիր և պատիժ» վեպի փոխադրության բեմադրությունը Թավրիզում, 1912 թվականին։

<sup>1</sup> Տե՛ս „Թատր и искусство“, 1910, № 5, стр. 104.

<sup>2</sup> Նույն տեղում։

Ռումինիայում և Բուլղարիայում հայ թատրոպնի կողմից ոռւս դրամատուրգների պիեսների բհմադրությունների և նրանց մեծ ընդունելության մասին պատմում է ժողովրդական դերասան Գրիգոր Ավետյանը իր հուշերում<sup>1</sup>:

Այդ ժամանակաշրջանում հայ-ռուսական թատերական կապերի ամրապնդման լավագույն արտահայտությունն է հայ բեմում ոռւս մեծ դրամատուրգ Մաքսիմ Գորկու պիեսների բեմադրությունը:

## 5

Ռուսական առաջին ռեօլյուցիայի պարտությունից հետո և ապա դրան հաջորդող տարիներին, չնայած ցարական ռեակցիայի անընդհատ հալածանքներին, հայ ռեակտարական թատրոնի լավագույն արադիցիաների հետագա զարգացումը, այնուամենայնիվ, շարունակվում է: Այդ ժամանակաշրջանում հեշտալ տրադիցիաների զարգացմանը քիչ չի նպաստել հատկապես Մաքսիմ Գորկու դրամատուրգիան:

Հայ պրոգրեսիվ հասարակայնությունը ձանաշում էր և սիրում Մաքսիմ Գորկուն նրա գրա-

<sup>1</sup>Տե՛ս Գը ի գ ո ր Ա վ ե տ յ ա ն, Քառասուն և հինգ տարի հայ բեմի վրա, էջ 102—111:

կան կյանքի առաջին իսկ քայլերից: Ճիշտ է, ցարական գրաֆնությունը բավական երկար ժամանակ թույլ չէր տալիս Գորկու պիեսների բեմադրությունը հայ թատրոնում, սակայն Գորկու գրամատուրգիայի շուրջը, նրա առաջին իսկ պիեսների ոռւսական բեմադրություններից սկսած՝ սուր պայքար էր մղվում նաև հայ մամուկի էշերում: Այսպես, իր 1902 թվականին Մոսկվայի Գեղարվեստական թատրոնում բեմադրվեց Մաքսիմ Գորկու «Քաղքենիները» առաջին պիեսը, հայ քննադատության մի մասը այն համեմատեց Ալ. Շիրվանզադեի, այդ նույն քննադատության կարծիքով թույլ «Ունե՞ր իրավունք» դրամայի հետ, (որն իր սուր ծայրով ուղղված էր բուրժուական ընտանիքի բարոյական հիմունքների դեմ՝ հանուն կնոջ ազատագրման) և օգտվելով հենց Գորկու հայտարարությունից, թե իր պիեսները, իր թե «բեմական չեն»՝ փորձեց միանգամայն ի շիք դարձնել «Քաղքենիների» նշանակությունը: Դրանով նա աշխատում էր մարել հայ թատերական գործիչների՝ Գորկու պիեսը բեմադրելու բուռն ցանկությունը<sup>1</sup>:

Հակառակ այդ հայացքներին, առաջավոր քննադատներից մեկը «Քաղքենիների» առաջին

<sup>1</sup>Տե՛ս «Մշակ», 1903, № 105:

իսկ ներկայացման կապակցությամբ գրում էր. «Գորկու պիեսը թևպետև կոչվում է դրամատիկական էսքիզ, բայց նա ավելի ուժեղ և գեղարվեստական է, քան մի քանի տասնյակ՝ ժամանակակից կյանքից առնված պիեսները»<sup>1</sup>:

Կամ մի այլ օրինակ.

1904 թվականի նոյեմբերին Պետերովովում, Վ. Ֆ. Կոմիսարժեսկայայի Դրամատիկական թատրոնում բեմադրվում է Մաքսիմ Գորկու «Հոգեկները» («Дачники») պիեսը: Այդ պիեսի առաջին ներկայացմանը «տեղի ունեցավ հանդիսականների գեմոկրատական մասի բուռն բախումը պահպանողական տրամադրությամբ համակված բուրժուական ինտելիգենցիայի հետո»<sup>2</sup>:

Այդ ներկայացմանը ներկա է եղել հայ պրոգրեսիվ գործիչներից մեկը, որը հետո մամուլում հրատարակել է մի հոդված: Հոդվածում նա նկարագրում է այն ցնցող տպավորությունը, որ գործել էր այդ ներկայացումը դեմոկրատական հայացքներ ունեցող հանդիսատեսի վրա, ինչպես և բուրժուական ինտելիգենտների զայրույթը, որոնք պիեսի մեջ տեսել էին անխնա պատկերված

<sup>1</sup> «Նոր-Դար», 1902, № 194:

<sup>2</sup> Б. В. Михайловский, Драматургия М. Горького эпохи первой революции, Изд. АН СССР, М., 1951, стр. 14.

սեփական նկարագիրը. «Եվ, երբ երրորդ գործողությունից հետո հեղինակին բեմ կանչեցին, ծափահարությունների հետ բարձրացան և սաստիկ սուզցներ: Բայց անվեհեր մերկացնողը կանգնած էր այդ վրդովլածների առաջ, հպարտ ու անվախ հայացքով շափում էր դահլիճը, կարծեն ուզում էր իմանալ, թե ովքեր են անբավական-ները»<sup>1</sup>:

Հոդվածի հեղինակը, կարծես թե, պատասխանում է Գորկուն. «Դրանք նույն ամառանոցավորներն են, նույն խոսող, դատարկ, դեմ ու դեմ վազող, բայց վերջիվերջո անկարող ու անպիտք ինտելիգենտները: Ի՞նչպես շվրդովվեն: Երեկվա «բույյակը», իր տաղանդի շնորհիվ, բարձ տացել է անշափի և արհամարհանք է նետում այդ բասակարգի երեսին, որ դիպլոմներով է զարդարված, որ հասարակության աղն է համարվում և ամբողջ ժամանակ համոզված է, որ ծառայում է կուլտուրային... Եվ նրա երեսովն են տալիս, թե նա ոչնչություն է... Ճշմարտությունը ծակեց, հայելին անողորմ էր իր պարզությամբ... Վրդովլում են: Բայց խոսքը արտասանված է: Եվ այն չնշելու համար շատ բիշ է վրդովլմունքը»<sup>2</sup>:

<sup>1</sup> «Մշակ», 1904, № 268:

<sup>2</sup> Նույն տեղում:

Հոդվածագիրը գալիս է այն և զրակացության, թե «Ճերկացման համարձակ ախոյանները» հենց այդպես էլ վարդում են: «Շատվոր չեն լինում նրանք: Ժամանակը միշտ հարուստ չի լինում այդպիսի առաքյալներով: Երկում են նրանք մանավանդ հասարակական անկման, մտքի գերության և ամլության ժամանակներում: Եվ նրանց ույժը հենց այն է, որ նրանք ըմբռնում են վատությունը, պարզում են նրա հրեշտակոր կերպարանքը և այդպիսով բարձր են կանգնում տափակ, գետնաքարշ շրջապատից»<sup>1</sup>:

Դահլիճում նստած և բեմում գործող անձանց մեջ իրեն տեսնող բուրժուական ինտելիգենցիայի վրդովմունքը հեղինակը համեմատում է կապիկի վրդովմունքին, որը «նայում է հայելուն, տեսնում է նրա մեջ իր այլանդակ դիմքը և զարդում է հայելին: Նա էլ վրդովված է»<sup>2</sup>:

Հայ բուրժուական քննադատները, ինչպես և նրանց ուստ կոլեգաները, անողոք կերպով հարձակվեցին Գորկու պիեսի վրա: Ինչպես հայտնի է, Գորկին իր պիեսներում դիմակալերծ էր անում ինտելիգենցիայի այն ներկայացուցիչներին, որոնք հեռու էին կանգնած ժողովրդից և «գլորվել էին

ոեակցիայի ձահիճը», նրանց, որոնք վերջնականապես կորցրել էին իրենց ինքնուրուցնությունը և ամբողջովին կախված էին կապիտալից: Այդ պրոբլեմին Գորկին հատկապես նվիրել էր իր «Հովեկները», «Բարբարոսները» և «Արևի զավակներ» պիեսները: Բոլոժուական քննադատությունը գոռում էր, թե իրը Գորկին դեմ է ինտելիգենցիային ընդհանրապես, որ նա ազգայնորեն սահմանափակ է, որ նա բացասում է քաղաքակրթությունը և այլն, և այլն:

Հայ հասարակական մտքի շրջաններում հակասական կարծիքներ առաջացրեց նաև «Հատակում» պիեսը: Այսպես, եթե Հայ հասարակության պրոգրեսիվ գործիչները, բոլշևիկյան պարտիայի ներկայացուցիչների գլխավորությամբ, բարձր էին զնահատում Գորկու ստեղծագործության գաղափարական էությունը, ապա բուրժուական պահպանողական քննադատությունը աշխատում էր ամեն կերպ նսեմացնել Գորկու դրամատուրգիայի սոցիալական և գեղարվեստական նշանակությունը: Օրինակ՝ «Հովարար» ամսագրի թատրական այդ տիպի քննադատներից մեկը ապացուցում էր, թե իրը «Հատակում» պիեսը «միանգամայն զորկ է գեղարվեստական արժեքից և հոգեբանական ամբողջությունից»<sup>3</sup>:

<sup>1</sup> «Մշակ», 1904, № 268:

<sup>2</sup> Նույն տեղում:

Այդ հարձակումներին պատասխանացին մամուլում հայ կուլտուրայի առաջավոր գործիչները՝ Գրականագետ Ստեփան Լիսիցյանը, որ 1902 թվականի գեկտեմբերի 18-ին ներկա էր եղել «Հատակում» պիեսի առաջին ներկայացմանը Մոսկվայի Գեղարվեստական թատրոնում, այդ ներկայացման կտպակցությամբ իր մանրամասն հոդվածում գրում էր. «Այդ երկը, իսկապես, դրամա չէ սովորական մտքով, այլ զգոր վրձինով նկարված գարմանալի տեսարաններ, որոնք տոփթեն տալիս հեղինակին՝ հասարակության մեջ որոշ հայացքներ արծարծելու»<sup>1</sup>:

Առանձին հիացմունքով է խոսում Ս. Լիսիցյանը՝ Գեղարվեստական թատրոնի դերասանների խաղի մասին:

«Հատակում» պիեսը բազմիցս բեմադրվել է Եվրոպայում, առանձնապես շատ հաճախ այն ներկայացվել է Բելլինում: Այդ ներկայացումներից մեկին ներկա է եղել նաև Ստեփան Շահումյանը: Եվ ահա՝ «Մշակ» լրագրում այդ օրերին իրեան է գալիս մի հոդված, որն ինչպես նշում է գրականագետ Գորգեն Հովհաննը, պատկանում է Հենց Ստեփան Շահումյանի գրչին<sup>2</sup>:

<sup>1</sup> «Մուրճ», Թիֆլիս, 1903, № 1, էջ 191:

<sup>2</sup> Տե՛ս նրա հոդվածը, «Մ. Գորկին և հայ թատրոնը» տպագրված «Մովեսական» գրականություն և արվեստ ամսագրում, 1950, № 4, էջ 119—120:

Ստեփան Շահումյանը գրում էր, որ «Հատակումի» բեմադրությունը թեովինում մեծ հաջողություն ունի գերմանացի հանդիսատեսի մոտ և որ Մ. Գորկին դարձել է գերմանացիների ամենասիրելի գրողը, որ համարյա օր չի լինում, որ շրեմագրի «Հատակումը», որ մեկը եթե տեսել է պիեսը մի անգամ՝ գնում է երկրորդ, երրորդ անգամ և «Ընայած մինչև այժմ ավելի քան երկու հարյուր հիսուն անգամ ներկայացվել է, բայց և այնպես թատրոնը ամեն օր ծայրեիծացը լիքն է»<sup>1</sup>: Ստեփան Շահումյանը այդ հոդվածում արտահայտում է այն կարենը միտքը, թե «Հատակումը» — դա սոցիալական ոլլերգություն է՝ լի հումանիզմով, Մ. Գորկու մեծ սիրով գեպի մարդը:

Հայ առաջավոր հասարակական միտքը նախապատրաստեց Գորկու դրամատուրգիայի հանդես գալը հայ բեմում, սակայն Գորկու պիեսների բեմադրությունը հաջողվեց իրականացնել ո՛չ շուտով և ո՛չ միանգամից:

Դեռևս 900-ական թվականների սկզբին, Սիրանուցը մտադիր էր բեմադրել Մ. Գորկու «Արևի պավակները»<sup>2</sup>: 1903 թվականին, Մոսկվայի Գեղարվեստական թատրոնում «Քաղքենիները» բե-

<sup>1</sup> «Մշակ», 1903, № 195:

<sup>2</sup> Տե՛ս Ռ. Զարյան, Սիրանուցը, Հայկական ԱՍՏ Գև. «Տեկեկադիր», 1951, № 1, էջ 17:

մադրելուց մեկ տարի հետո, Նոր-Նախիչևանում նույնպես սկսում են պիեսը բեմադրության պատրաստել, սակայն գրաքննությունը ներկայացումը արգելում է<sup>1</sup>: Նույն քաղաքում 1906—1907 թթ. տեղական Հայկական դրամատիկական ընկերությունը «Քաղքենիները» մտցնում է իր ռեպերտուարի մեջ, սակայն ներկայացումը կայացել է, թե ոչ՝ հայտնի չէ<sup>2</sup>:

Հայ թատրոնի պայքարը Մ. Գորկու պիեսները բեմադրելու իրավունքի համար հաջողությամբ պսակվեց միայն 1908 թվականի հոկտեմբերի 17-ին, երբ Հայկական արտիստական ընկերության թիֆլիսի խոսմբը վերջապես ցուցադրեց այդքան երկար սպասված «Հատակում» պիեսը: Սակայն, ինչպես ճիշտ եզրակացնում է թատերագետ Ս. Ռիզակը, «Գորկու դրամատուրգիայի յուրացումը հայ մինչունույցիոն թատրոնի գործիշների կողմից սկսվում է ոչ թե 1908 թվականին «Հատակում» պիեսի բեմադրությունից, այլ 1900-ական թվականների սկզբից»<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Ա. Զարյան, Պայքար հայ թատրոնում Մաքսիմ Գորկու դրամատուրգիայի համար, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1954, № 10, էջ 29—30:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> С. А. Ризаев, Драматургия М. Горького на армянской сцене (автореферат кандидатской диссертации), Ленинград, 1954, стр. 6.

Եվ «Հատակումի» բեմադրության նախօրեին, և պիեսի բեմադրման պահին բուրժուական քըն-նադատությունը համառորեն շարունակում էր այն համարել ոչ-բեմական երկ՝ զորկ գեղարվեստական արժանիքներից և ամբողջականությունից, գրում էր, թե դա ոչ թե պիես, այլ մեկը մյուսին չկապվող առանձին տեսարաններ են, որոնց մեջ որևէ ընդհանուր «թեր» չկա: Այդ հանգամանքը առավել ևս բարձրացնում է տվյալ բեմադրության պատմական նշանակությունը, որի նախաձեռնողը եղել է Օվի Սևումյանը<sup>4</sup>:

Հայ բեմում «Հատակումի» առաջին բեմադրության պատիվը պատկանում է հայ թատրոնի կուպուրական գործիշներից մեկին՝ ուժիւոր Ստեփան Քափանակյանին (1877—1944): Ավարտելով Լազարյան ճեմարանը և Մոսկվայի համալսարանի պատմա-ֆիլոլոգիական ֆակուլտետը, Ս. Քափանակյանը լավ ծանոթ էր ուսու արվեստին և հատկապես ուսու թատրոնին: Իր թատերատին և հատկապես ուսու թատրոնին մեջ նա ձգում էր ուսու կան գործունեության մեջ նա ձգում էր ուսու թատրոնի ուսու կան սկզբունքները փոխարժեական սկզբունքները փոխա-

<sup>1</sup> Տե՛ս «Տեղեկագիր», Թիֆլիս, 1906, № 51: «Գործ», Թիֆլիս, 1906, № 36 և 41:

<sup>2</sup> Տե՛ս Ա. Զարյան, Պայքար հայ թատրոնում Մաքսիմ Գորկու դրամատուրգիայի համար, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1954, № 19, էջ 37:

դրել Հայ թատրոն։ Ընդհանրապես պետք է ասել, որ ներկայացման համարյա բոլոր մասնակիցները դաստիարակված էին ոռու ռեալիստական թատրոնի և, առաջին հերթին, Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի տրադիցիաներով, որոնց մասին մենք արդեն խոսել ենք, և դա մեծապես նպաստեց այն մեծ հաջողությանը, որը, մամուկի վկայությամբ, ունեցավ այդ ներկայացումը։

«Մշակ» թերթը գրում էր. «Այսպիսով մի դժվար դրամայի հաջող ներկայացման համար կարող ենք շնորհավորել Հայ Դերասանական Ընկերությանը»<sup>1</sup>։

Նույնիսկ պահպանողական քննադատությունը, չնայած իր բացասական վերաբերմունքին դեպի Մ. Գորկու պիեսը, չէր կարող լուսնական մատնել ներկայացման խոշոր առավելությունները։ «Գործ» թերթի ոեցենզենտը, որ հարձակվում էր Գորկու պիեսի վրա, նրա իբր ոչ-բեմական լինելու և կոմպոզիցիոն թուլության համար, ստիպված էր խոստովանել. «Մենք սպասում էինք, որ այս պիեսը մեր բեմի վրա պետք է անցնի թուլ, քանի որ արժեքը միմիայն ոռու լեզվի ուրույնություն էր, ժողովրդական լեզվի բարբառների,

<sup>1</sup> «Մշակ», 1908, № 239.

ժարգոնի, որը հայերեն թարգմանության մեջ պիտի գոնատվեր, ոչնչանար, բայց մեր սպասածից հաջող դրս եկավ խաղն՝ առհասարակ»<sup>1</sup>. Իսկ հաջող դրս եկավ խաղն՝ առհասարակ»<sup>1</sup>. Իսկ ոռուսական «Զակավակազսկօ օօօօօօ» թերթը գրում էր. «Սպասածին հակառակ՝ Մ. Գորկու «Հատակումը» հայ թատրոնի բեմում անցավ միանգամայն հաջող։ Թվում էր, որ շափազանց դժվար է հայերեն լեզվով տալ Գորկու հերոսների տիպական գծերը, սակայն շատ քիչ բացառություններով ամեն ինչ հաջող անցավ»<sup>2</sup>։

Առաջավոր մամուլը բարձր գնահատեց այս բեմադրությունը, մի բան, որ վկայում էր ոչ միայն Հայ թատրոնի արվեստում առկա ռեալիստական վարպետության և հոգեբանական խորության մասին, ոչ միայն այն, որ «գերակատարները լավ էին ուսումնասիրել և լավ ըմբռնել իրենց գերերը»<sup>3</sup>, այլ գերակատարման այն համաներդաշնակ անսամբլի մասին, որտեղ կարևոր գեր խաղաց, անշուշտ, Սահմանականի ոեժիսյորական տաղանդավոր աշխատանքը։ Պիեսը թարգմանել էր Գրիգոր Ավետյանը՝ Լուկայի լավագույն դերակատարը մինչունվուցիոն հայ թատրոնում։

<sup>1</sup> «Գործ», 1908, № 41, էջ 3-4։

<sup>2</sup> «Զակավակազսկօ օօօօօօ», Տիֆլիս, 1908, 30 օկտոբեր։

<sup>3</sup> «Մշակ», 1908, № 239։

Ներկայացման մեջ խաղում էին հայ թատրոնի նշանավոր դերասաններ Օվի Սևումյանը (Սատին), Օլգա Մայսուրյանը (Նատաշա), Արշակ Մամիկոնյանը (Բարոն), Սաթենիկ Աղամյանը (Նատյա), Գեղեռն Միրազյանը (Բուբնով), Վարդան Մելիքյանը (Վասիլիսա), Միքայել Վանշիրը (Դերասան), Օլգա Գուլազյանը (Ալյոշա) և ուրիշները<sup>1</sup>:

Այդ օրվանից Մ. Գորկու «Հատակում» պիեսը այլևս չի իջնում հայ թատրոնի բեմից: Գորկու դրամատուրգիայով դաստիարակվել է հայ դերասանների և ոեժիսյորների նոր սերունդը, որ ձգտում էր վերակառուցել հայ թատրոնը՝ համաձայն Գեղարվեստական թատրոնի ունալիստական սկզբունքների:

«Հատակումի» երկրորդ բեմադրությունը 1909 թվականին՝ իրականացվեց Օվի Սևումյանի ղեկավարությամբ, Զուբարյովի անվան ժողովրդական Տանը: Նա աշքի ընկալ Սատինի դերի ավելի խորը մեկնաբանությամբ, որը կատարում էր ինքը՝ Օվի Սևումյանը:

<sup>1</sup> Այս բեմադրության երեք դերակատարների մասին՝ Լուկա-Ավետյան, Սատին-Սևումյան, Ալյոշա-Գուլազյան տե՛ս Ռուբեն Զարյանի «Պայքար հայ թատրոնում Մաքոմ Գորկու դրամատուրգիայի համար» հոդվածում, Հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1954, № 10, էջ 38—44:

«Հատակում» պիեսի 1909 թվականի բեմադրության մասին հիացմունքով է խոսել հայ պրոլետարական զրոյ Հակոբյանը: Ճիշտ գնահատելով պիեսի սոցիալական հսկայական նշանակությունը՝ Հ. Հակոբյանը շեշտում էր այն միտքը, որ հայ առաջավոր հասարակությունը պահանջում է բարձր գեղարվեստականությամբ և պահանջում է բարձր գեղարվեստականությամբ լեցուն երկեր: Հ. Հակոբյանը գրում էր, «Տվեք այս ոգով շատ պիեսներ և հասարակությունը միշտ կգտ՝ կլցնի թատրոնը: Այս կողմից գովելի է ոեժիսյոր Սևումյանի ընտրությունը: Հումանք, որ նա ապագայում ևս կդեկավարվի նույն ուղղությամբ»<sup>1</sup>:

«Հատակումի» բեմադրությունը Օվի Սևումյանի ոեժիսյորական առաջին փորձերից մեկն էր: Դրա համար էլ Հ. Հակոբյանի գովայնը լուրջ հանակություն ուներ նրա ոեժիսյորական հետագա աշխատանքի համար:

«Հատակումը» երրորդ անգամ բեմադրվեց 1919 թվականին՝ Օլգա Մայսուրյանի ոեժիսյորությամբ: Այս անգամ ավելի ևս զգացվեց Մուկվայի Գեղարվեստական թատրոնի բարերար ազգեցությունը, հատկապես Սատինի դերի մեկնաբանման մեջ: Սատինի դերը խաղում էր հսահակ Ալիխան-

<sup>1</sup> «Մշակ», 1909, № 281:

յանը: Նա առանձնապես հոյակապ էր վերջին գործողության մեջ՝ մարդու մասին իր Հայտնի մենախոսության ժամանակի: Այստեղ Սլիփանյանի «Խաղը մտածված էր և ձայնը հումկուա<sup>1</sup>: «Սուր- ձանդակ» թերթը նշում էր, որ «դերասանները խա- զում էին ոչ վատ ոռւս դերասաններից»<sup>2</sup>:

1913 թվականին լույս տեսան Գորկու «Կարամազգովշշինայի մասին» և «Դարձյալ Կարամազգովշշինայի մասին» նշանավոր հոդվածները՝ ուղղված ուսւ թատրոնի ռեպերտուարի հիմքանդադին, ֆատալիստական, միստիկական թերման դեմ, «դոստովշշինայի» դեմ։ Այդ հոդվածները լիովին կարող էին օգտագործվել նաև հայ հասարակության սոցիալական խոցերի դեմ պայքարելիս։ Հայ դեմոկրատ գրող և գրամատուրգ Վրթանես Փափազյանը նույն 1913 թվականին, իզմիրում հրատարակվող «Հայկական գրականություն» ամսագրում, Գորկու այդ ելույթների լույսի տակ, նշում էր հայ գրականության և արվեստի ծանր դրույթունը։ Խիստ քննադատության ենթարկելով կեղծ-պատմական, կրոնա-միստիկական, ռեակցիոն պիեսների բեմադրությունը հայ թատրոնի բեմում, Վրթանես Փափազյանը ցավով գրում էր.

<sup>1</sup> «*Առևլուկանդակ», 1910, № 51:*

## 2 Um jū m̄kqnu d̄z

«Մեր մեջ եւ սկսել է հնչել այն միտքը, թե «Հկա վնասակար գրականություն», «Հկա որեէ ստեղծագործություն, որ վնասակար լինի, եթե նա պատկերացած է գեղարվեստորեն և եթե նրա մաքերը արհամարժանքի տան նույնիսկ ամեն վսիմ գաղափարը, ամենայն շարժում...»<sup>1</sup>:

Վրթանես Փափազյանը լավատեսորեն էր նա-  
յուած հայ թատերական արվեստի և գրականության  
ապագային. «Հոգու այս աղքատության շրջանը,  
սակայն, անցողակի է, վիճվածքները երկար չեն  
ապրում...» Գորկու նման մարդկանց հզոր կոշերը  
«իգուր չեն անցնիր»<sup>2</sup>:

Ս. Գորիկու գրամատուրգի ան նշանակալից դեր է խաղացել Հայ պրոլետարական գրամատուրգի ծագման ու զարգացման գործում։ 1912 թվականին գրվել է Անուշավան Վարդանյանի «Գործադրու» պիեսը, որը գրաքննչական հետապնդումների պատճառով միայն 1913 թվականին բեմ հանվեց՝ «Տգիտության գոհեր» վերափոխված անունով, և մեծ հաջողություն ունեցավ

<sup>1</sup> «Հայկական դրականություն», 1913, № 5; Մեջ է բեր-  
վում Գուրգեն Հովհաննի գրքից. «Մաքսիմ Գորկին և հայ,  
կուտարան», Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչություն,  
Երևան, 1952, էջ 202:

2 զ ուր պ ե ն չ ո վ ն ա ն, Մաքսիմ Գորկին և հայ  
կուլտուրան, էջ 203:

բանվորական շարժման նոր վերելքի շրջանում։ Բեմադրության ռեժիսյորն էր այժմ Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ՝ Արմեն Արմենյանը։

Առաջավոր քննադատությունը ողջունեց հայ պրոլետարական դրամատուրգիայի այդ առաջին ծիծեռնակի հանդես գալը, մի գործի, որի մեջ առաջին անգամ ցուց էր տրվում պրոլետարիատի դասակարգային պայքարը։ Քննադատությունը պահանջում էր, որ այն մտցնեն հայ թատրոնի ռեպերտուրի մեջ<sup>1</sup>։ Նա նշում էր նաև, որ երիտասարդ դրամատուրգի համար օրինակ պետք է լինի Մ. Գորկու դրամատուրգիան։ «Մ. Գորկու «Հաճե»-ն «նախկին մարդկանց» հարազատ միջավայրով և դրամայի հետևողական զարգացմամբ, բնական հանգույցներով թող օրինակ ծառայի իր ապագա գործերի մեջ մեր սկսնակ ընկերությը»<sup>2</sup>։ Ա. Վարդանյանի պիեսի մեծ առավելությունն այն էր, որ դրամատուրգը, ինքը բանվորական շաղկերից լինելով, հիանալի գիտեր այն միջավայրը, որը նկարագրել էր, — մի հատկություն, որ բնորոշ էր և Մ. Գորկու համար։ Հետազայում այդ պիեսի պաշտպանությամբ հանդես է եկել բոլշ-

<sup>1</sup> Տե՛ս «Մեր կյանք», Աստրախան, 1912, № 15։  
<sup>2</sup> Նույն տեղում։

վիկյան քննադատությունը՝ Հանձին Ասքանազ Մուավյանի<sup>1</sup>։

Հայ թատերական գործիչների վերաբերմունքը ղեպի Գորկու դրամատուրգիան պարզելու համար հետաքրքիր է այն փաստը, որ երբ «Կովկասյան հայ դրամատիկական խումբը» 1909 թվականին Օվի Սկումյանի և Գրիգոր Ավետյանի ղեկավարությամբ գաստրոլային շրջագայություն կատարեց իրանում, Թյուրքիայում և Բուլղարիայում, Վառնա քաղաքում (Բուլղարիա), նաև տեղական սոցիալ-դեմոկրատների խնդրով ոռուսներեն լեզվով ցուցադրեց Գորկու «Հատակում» պիեսը։ Այդ ներկայացումը տեղի ունեցավ սոցիալ-դեմոկրատների ակումբում, որի կարմիր վարագույրի վրա բուլղարերեն գրված էր — «Որովհետարներ բոլոր երկրների, միացնե՛ք»<sup>2</sup>։ Ներկայացումը շատ մեծ հաջողություն ունեցավ և հանդիսականների պահանջով կրկնվեց։ Այդ փաստը խոսում է ոչ միայն հայերի, այլև բուլղար հանդիսականի մեծ սիրո մասին ղեպի Գորկու դրամատուրգիան։ Ավելին, «Հատադեպի» բեմադրությունների ողջ բեմական պատկումից բեմադրությունների ողջ բեմական պատկումի հայ բեմի վրա, էջ 102—111։

<sup>1</sup> Տե՛ս «Պայքար», Թիֆլիս, 1916, № 10։

<sup>2</sup> Գրիգոր Ավետյան, Քառասուն և հինգ տարի հայ բեմի վրա, էջ 102—111։

Գորկու դրամատուրգիան գաղափարապես և կազմակերպորեն մերձեցը էր հայ թատրոնը սոցիալ-դեմոկրատներին, պրոլետարական ռեռլյուցիոն շարժմանը<sup>1:</sup>

Հայկական մինչույզուցիոն թատրոնում «Հատակովմի» բեմադրությունների մեջ կարևոր տեղ է բռնում 1917 թվականի բեմադրությունը, որ իրականացրեց սեժիսյոր, հետագայում սովորակայ թատրոնի հիմնադիր, այժմ Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ՝ Ալեն Քալանթարը (ծնվ. 1891 թ.): Այդ ներկայացումը ժամանակին դրական գնահատական է ստացել սոցիալ-դեմոկրատական «Պալքար» թերթում<sup>2</sup>:

ինչո՞վ բացատրել այդ բեմակության հա-  
ջողությունը և ինչո՞ւմն է նրա նշանակությունը:

Նախ և առաջ՝ ներկայացումը բեմադրել է մի  
մարդ, որի ստեղծագործական ամբողջ կենսա-  
գրությունը կապված է ուսական թատրոնի հետ,  
և որի ռեալիստական սկզբունքները նա ընկալել  
էր գեռես Պետերբուրգի համալսարանում ուսանող  
եղած ժամանակ: Դաստիարակված լինելով՝ ուսա-  
հասարակայնության առաջավոր գաղափարներով,

<sup>1</sup> С. А. Ризаев, Драматургия М. Горького на армянской сцене, стр. 8.

2 *Տեղագալուք, 1917, № 9:*

զինված բեմական մեծ կուտուրայով, Առող Քաւանթարը իր ամբողջ գիտելիքները ներդրել է Մ. Գորկու պիեսի վրա թափած աշխատանքի մեջ:

Երկրորդ՝ այդ ներկայացման կարևոր հատկությունն էր ուժիւսորի ձգուումը Լուկայի կերպարն ազատել իդեալականացման այն ծածկոցից, որով մինչ այդ նրան պճնել էին թե՛ Հայկական և թե՛ ուսանական թատրոններում:

Հայ թատերական քննադատությունը կովայի կերպարը սխալ մեկնաբանելով՝ թատրոնին ևս ստիպում էր պատկերացնել նրան, որպես մի բարեհոգի «ճարդ աստծո»<sup>1:</sup>

Առաջին ամսագրությունը՝ «Հայոց պատմության» առաջին համարը՝ կայի «Հիմնական պատմության» ուսակցիոն էլեկտրոնային համարվել է Մ. Գորկու անմիջական ցուցմունք-ների ազդեցության տակ, ցուցմունքներ, որ նա ստացել էր մեծ գրողի հետ աշխատակցելիս, երբ Մ. Գորկին 1916 թվականին խմբագրում էր «Сборник армянской литературы» ժողովա-ծուն: Մ. Գորկին այն ժամանակ ասել էր Լ. Քա-լանթարին, որ «Հայություն» ներկայացման ամ-բողջ սույն ծայրը պետք է ուղղել Հենց Լուկայի մտանգավոր և վնասակար փիլիսոփայության

<sup>1</sup> *S. H. & U. 2nd, 1908, № 239:*

գեմ! Այնուամենայնիվ, ուսուլուցիալից առաջ է. Քալանթարին այդպես էլ չհաջողվեց լիովին իրականացնել Մ. Գորկու գուցմունքը:

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ սեռ-  
լյուցիալի օրերին, երբ հասարակական մթնոլոր-  
տը առանձնապես էր շիկացած, «Հասակումի»  
բեմագրությունը մամուլի էջերում առաջ բերեց  
մի շարք հակասական կարծիքներ։ Հակառակ  
պիեսի սոցիալական խոշորագույն նշանակության՝  
պահպանողական քննադատները հայտարարում  
էին, թե նման պիեսները, որ ոռչ միայն ոչինչ  
ընդհանուր բան չունեն հայ կյանքի հետ, այլև  
կզվանք են հարուցանում հանդիսատեսների մեջ  
այն սարսափելի կեղառվ, որ բեմ է հանվում, —  
պիեսը է երբեք լրեմադրվեն»<sup>2:</sup>

Այսպիսով, Հայ բեմում Մ. Գորկու դրամա-  
տուրգիայի երեան դալը և Հաստատվելը իրապես  
նշանավորում էր Հայ թատրոնում քննադատական  
ռեալիզմի զարգացման մի նոր էտապ: Մ. Գորկու  
պիեսները Հայ մինչունվացիոն թատրոնի պատ-  
մության մեջ էտապային նշանակություն ունեցան,  
որովհետեւ դրանք իրենց հետ բերին ոչ միայն կա-

<sup>1</sup> Ст. С. А. Ризаев, Драматургия М. Горького на армянской сцене, стр. 8.

*"Uchib.", 1917, № 261;*

պիտաղիստական հասարակության դիմակազմեր-  
ծումը, այլև մարդկացին ազատ անձնավորության  
վեհության հաստատումը, ապա թե, և պրոլետա-  
րական նոր հումանիզմ ու նոր կերպարներ: Մար-  
սիմ Գորկու գրամատուրգիան նպաստեց հայ  
թատրոնին և նրա զարգացմանը դեպի որա-  
կապես նոր, բարձր աստիճան, դեպի սոցիալիս-  
տական ուսեալիզմի արվեստը, որ և վերջնակա-  
նապես հաղթանակեց հայ բեմում Սովետա-  
կան իշխանության տարիներին: Եվ միայն սովե-  
տահայ թատրոնը կարողացավ հասնել Գորկու  
պիեսների ամբողջ սոցիալական խորության իս-  
կական գեղարվեստական բացահայտմանը, պիես-  
ներ, որոնք կազմում են հայ սովետական թատ-  
րոնի ուսեպերտուարի զարդն ու պարծանքը:

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ուղղության ամենալայն հնարքավորություններ ստեղծեց սուսական կուլտուրայի ազատ և անարգել դարձման համար։ Հայ ժողովրդի հայացքն ուղղված էր սուսակության նրանից էին սպասում հայերն իրենց ազատագրումն ախրա-հոչակ դաշնակցական «կառավարության» արյունությամբ լծից, որն իր արկածախնդրական քաղաքականությամբ հայ ժողովրդին և նրա հոգեսր կուլտուրան հասցրել էր կողմանման եղրին։

Հայաստանում դաշնակցականների տիրապետության մոայլ տարիներին (1918—1920) թատրոնն ապրում էր ծանր ու խորը մի ճգնաժամ։ Հայ բեմի առաջավոր գործիչների փորձը՝ դուրս գալու այդ փակուղուց այն ժամանակ որևէ հաշողություն չունեցավ։ Հայ թատերական ինտելիգենցիայի պահպանութական մասը խրվել էր նացիոնալիզմի ձահիճը, սկսել էր քարոզել գեկադենտություն, հոռետեսություն և միստիցիզմ։ Եվ միայն սովորական կարգերի հաստատումը 1920 թվականի նոյեմբերի 29-ին նոր գարաշրջան բացեց Հայաստանի պատմության համար—գարաշրջան նրա էկոնոմիկայի և կուտուրայի ազատ զարգացման համար։ ՍՍԻՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում, ուսւ մեծ ժողովրդի գլխավորությամբ։

\* \* \*

Այսպես, ընդհանուր գծերով քննելով մինչու վոլյուցիոն հայ-ուստական թատերական կապերի զարգացման ուղին XIX դարում և XX դարի սկզբին՝ մենք տեսանք, թե ինչպես ուստական բեմական առաջավոր կուտուրան բարերար աղքեցություն է գործում հայ թատերական արվեստի վրա։ Ուսւ թատրոնի ուսալիստական գեմոկրատա-

կան տրադիցիաների յուրացումը հայ առաջավոր ուսալիստական թատրոնի կողմից կատարվում էր հայ հասարակական մտքի և արվեստի պահպանողական հոսանքների գեմ մղվող պայքարում։

Ամբողջ ասվածից հետեւում է, որ մինչու վուցիոն հայ թատրոնի հաստատում տրադիցիան է եղել նրա կապերի ամրապնդումը եղբայրական ուրիշ աղքերի արվեստների և առաջին հերթին՝ ուսւ մեծ աղքի արվեստի հետ։ Այդ մեծապես օգնեց մինչու վուցիոն դեմոկրատական հայ թատրոնին հասնելու ուսալիստական գեղարվեստական վարպետության մեծ բարձրության՝ երբեք շատ մանափակվելով աղքային նեղ շրջանակներով։ Գարբել Սունդուկյանի, Գևորգ Զաշկյանի, Պետրոս Ադամյանի, Սիրանուշի, Հովհաննես Աբելյանի և մի շարք այլ հիմնալի վարպետների ստեղծած ուսալիստական պարոցի համար, հայ բեմը շատ բանով է պարտական ուսւ ուսալիստական թատերական առաջավոր կուտուրային։

Նոր ժամանակի հայ և ուսւ դեմոկրատական թատրոնների բարեկամության տրադիցիան մի մեծարժեք ժառանգություն է, որն այժմ որակապես բարձրացված է նոր աստիճանի սովորական հայ թատրոնի կողմից՝ սոցիալիստական աղքերի կուտուրական սերտ համագործակցության մեր էպոխայում։

Ծուս սովետական թատրոնի հետ ստեղծագործական շփումը, նրա գործիչների կողմից անմիջական օգնությունը և օժանդակությունը դառնում է Սովետական Հայաստանի բնակչության կուտուրայի հետագա առավել հզոր աճի և ծաղկման ճշմարիտ երաշխիքներից մեկը:

## ԱՆՎԱՆԱՑԱԿՆԻ

*Մարգարիտ*—8*Էնդելու Ֆրեդրիկ*—8*Լենին* վ. ի.՝ 9, 37, 114*Ստալին* ի. վ.՝ 92*Ժամանով* Ա. Ա.՝ 133*Արելյան Հովհաննես*—101—102, 104, 106, 109, 121, 127—132, 148, 154, 158, 163, 165, 167—169, 171—172, 197*Արով Գևորգ*—48, 50, 52*Արով Խաչատրյան*—11—13, 15, 24*Արքահամբայան Գրիգոր*—105*Արքահամբայան Պհարոս*—65—75, 77, 78—89, 94, 98, 105, 108,*Ագամյան* 121, 123, 128, 197*Ագամյան Սաթենիկ*—139, 141—142, 186*Ագեհեյմ Ռաֆ.* լ.՝ 96*Ագեհեյմ Ռոբ.* լ.՝ 96*Աթանասյան Աշոտ*—123*Ալաղաթյան Նիկողայոս*—27—29*Ալամդարյան Հարություն*—15*Ալիլյանյան Խոահակ* 121, 139, 154, 158—159, 161, 163, 188*Ամիրջանյան Բեգլար*—98*Ամիրիկյան Միքայել*—30, 53, 55, 57, 59—61, 128

Անդրեա-Բուռլակ Վ. Ն.—70—73, 81  
 Անդրեև Լ. Ն.—136  
 Ազոլոնսկի Ռ. Բ.—95  
 Ավալյան Մկրտիչ—75, 77  
 Ավետյան Քրիգոր—101, 106—108, 127, 139, 154, 158, 174,  
     185, 191  
 Արաքսյան Պողոս—101—103, 108, 116, 139  
 Արամյան Քեթեան—57  
 Արմենյան Արմեն—171, 190  
 Արշարունի Արշարույս—25, 28, 30, 44—45  
 Արծրունի Սենեքրիմ—82—83

Բագրատիոն Ոռման—22  
 Բելինսկի Վ. Գ.—24—26, 31, 33—34, 39—43, 48, 50—51,  
     53, 60—61, 65, 73, 115, 137  
 Բեռնար Սառա—85, 122—123  
 Բեսոնուժ Ա. Ա.—14  
 Բերոյան Արտեմ—161  
 Բըենկո Ա. Ա.—81  
 Բըյուսով Վ. Յա.—138—139  
 Բուրենին Վ. Պ.—167

Գայանե (Գավթյան)—58  
 Գարագաջյան Երանուհի—76—77  
 Գարագաջյան Վերգինե—76—77  
 Գերցեն Ա. Ի.—24, 39, 48, 50  
 Գյոթե Վոլֆանգ—146  
 Գրիբունինա Ա. Յ.—96  
 Գրիբունին Ա. Ա.—14, 16—17, 19—23, 31, 34, 48—50, 64—  
     65, 74, 78, 94, 96, 98  
 Գուլազյան Օլգա—127, 139—140, 169, 186

Գուրգենը Կովկաս—27, 29  
 Գողով Ն. Վ.—23, 31, 42, 46—48, 50, 60, 64—65, 68—69,  
     71—72, 74, 94, 96, 104, 109, 111—112, 129, 132, 134,  
     152, 172  
 Գորկի Ա. Մ.—114, 129, 132—133, 135, 138—139, 144—  
     145, 150—151, 163, 174—186, 188—195  
 Գալմատով Վ. Պ.—80  
 Գավթյան Ա.—57  
 Գավիղով Վ. Վ.—14  
 Գավիղով Վ. Ն.—80, 95  
 Գեմիրճյան Գերենիկ—138  
 Գերժավին Գ. Ռ.—13  
 Գմիտրիկ Ի. Ի.—12  
 Գյաշենկո Վ. Ն.—63  
 Գուրիլին Ա. Ն.—127  
 Գոբոլույոբով Ն. Ա.—39—40, 50—51, 138  
 Գոստինսկի Ֆ. Մ.—95, 173

Երիցիովյան Գրիգոր—44  
 Երմոլայա Մ. Ն.—80—81, 85, 95—97, 106, 123—127, 160,  
     168  
 Զաբէլ—158  
 Զարիֆյան Հովհաննես—167  
 Զարյան Առւրեն—20—22, 26—27, 50, 56, 61, 88, 119,  
     128—129, 155, 181—183, 186  
 Զուբարյով Դ.—22  
 Զուղերման Հերման—167  
 Էմին Մկրտիչ—13  
 Էրիսթավի Դավիթ—78

Թումանյան Հովհաննես—138

Ժամեն (Գրիգորյան Մարիա) — 154, 158

Ժուկովսկի Վ. Ա.—13

Իրսկն Հենրիխ—132, 171

Իզանով Կողելսկի Մ. Տ.—95

Խաչակրան Ավետիք—138

Լենսկի Ա. Պ.—80, 106

Լենսկի Պ. Ի.—95

Լեշկովսկայա Ե. Կ.—95

Լերմոնտով Մ. Յու.—13, 64, 74, 82, 97, 162

Լիսիցյան Ստեփան—180

Լոմոնոսով Մ. Վ.—13

Խադամյան Թեոդորոս—25

Խարապյան Ամո—116

Ծատուրյան Ալեքսանդր—120

Կարամզին Ն. Մ.—12

Կարատիգին Վ. Ա.—33, 40

Կարենյան Հակոբ—32—34, 136

Կաչալով Վ. Ի.—140

Կյունելբեկի Վ. Կ.—14

Կնունյանց Բողոքան—137

Կոյածնեն Յա. Բ.—26

Կոիլով Ի. Ա.—13

Կոկոլնիկ Ն. Վ.—31

Կոմիսարժեսկայա Վ. Ֆ.—95—97, 123—124, 141—142

Կորչ Ֆ. Ա.—96—107

Հակոբյան Հակոբ—138, 187

Համազասպյան Համազասպ—13

Հախվերդյան Թյողոր—21

Հասմիկ (Հակոբյան) — 154, 161—162, 166

Հարությունյան Արշակ—158

Հովհակիմյան Բախտիար—34, 41

Հովհանն Գուրգեն—69, 180, 189

Հովհաննիսյան Ռուսեթ—24—26, 67

Հրաչյա Աղնիկ—76

Դամապյան Մաթևոս—22

Ճագապահ Ալեքսանդր—21

Մամիկոնյան Արշակ—139, 154, 161, 186

Մանդինյան Ամիրան—59, 64, 75, 77, 110

Մանդինյան Սեդրակ—29—30, 53, 55, 57—60

Մանվելյան Միքայել—139, 158, 166—167

Մայսուրյան Օլգա—139, 154, 158, 160—161, 167—168,

186—187

Մարշանով Կ. Ա.—168

Մարի-Նվարդ (Գարայան) — 76—77

Մարտինով Ա. Ե.—48

Մեղվեդեկ Ե. Պ.—95

Մելքըյան Վարդառա—186

Մելիքսեթյան Մարգիս—57—58, 79, 105, 109

Միխայլովսկի Բ. Վ.—176

Միջուրինա-Մամոյլովա Վ. Ա.—95

Միրազան Գեղեցին—186

Միրզոյան Վարդան—161

Մնակյան Մարտիրոս—76—79

- Մոլիքը Ժման—64, 76  
 Մոշալով Պ. Ա.—30, 53, 82, 131  
 Մոսկվին Ի. Մ.—131  
 Մոտիյան Առքանագ—137—191
- Յաբլոչկինա Ա., Ա.—96, 169—170  
 Յակովիկ Ն. Կ.—95  
 Յակովիկ Կ., Ն.—143  
 Յաբշեկին Ա.—86  
 Յուժին-Սումբատով Ա. Ի.—95, 106, 118, 124—125, 129, 132, 143, 167—169
- Նալբանդյան Միքայել—39—46, 51  
 Նարզանով Ս. Ա.—118, 129, 171  
 Ներերովիչ-Դանչենկո Վ. Ի.—73, 80, 83, 88—89, 116, 124—125, 140, 143, 147, 168
- Շահազիդ Երվանդ—85  
 Շահազիդ Սմբատ—28  
 Շահլամյան Ներսես—98  
 Շահլամյան Վաղարշակ—29  
 Շահումյան Ստեփան—88, 114, 116, 137, 180—181  
 Շեշենկ Մ. Գ.—130  
 Շերմաղյան Գալուստ—15, 16, 23  
 Շեքսպիր Վիլյամ—26, 64, 76, 132  
 Շիլեր Ֆրիդրիխ—64, 76, 146, 171, 173  
 Շիրվանջագե Ալեքսանդր—103, 132, 138, 151, 167, 171—175  
 Շէպիկն Մ. Ա.—30, 47—49, 131
- Չեխով Ա. Պ.—64, 94, 119—120, 138, 144—145

- Չերնիշևսկի Ն. Գ.—37, 39—40, 45, 50—51, 68, 137  
 Չիտառու Մ. Մ.—141  
 Չմշկյան Գևորգ—30, 46, 53—55, 57—58, 63, 67, 77, 87, 128, 197  
 Չմշկյան Սաբինիկ—53  
 Չույկո Վ. Վ.—82
- Պատկանյան Միքայել—27, 29, 32—34, 55  
 Պարսամյան Վարդան—18  
 Պետրոսյան Գևորգ—101—103, 103—110, 121  
 Պետրովսկի Ա. Պ.—143  
 Պիսարի Մ. Ի.—80—81  
 Պիսիմակի Ա. Ֆ.—96  
 Պշերիշևսկի Ա.—134  
 Պրադիկով Օ. Ա.—95—96  
 Պուշկին Ա. Ա.—13, 14, 48, 98  
 Պոլեգյու Ն. Ա.—31  
 Պատերին Ա. Ա.—129
- Ռասին Ժման—25  
 Ռիզակ Մարիք—182, 192, 194
- Սաղովոկյան Օ. Օ.—106  
 Սաղովոկյան Մ. Պ.—100  
 Սաղովոկյան Պ. Մ.—29, 47, 58—60  
 Սամոյդով Պ. Վ. —80  
 Սամինա Մ. Գ.—80—81, 85—86, 95—97, 160  
 Սկումյան Լյուսի—161  
 Սկումյան Օվի (Հովհաննես)—147—155 —58, 161—162, 165, 183, 186, 191

Սիրանուշ (Քանթարճյան Մերովք) — 77, 85, 119, 121—128, 142, 148, 158, 162, 167, 168—169, 181, 197  
 Սպանգարյան Սուրեն — 114, 137  
 Ստանիսլավսկի Ա. Ս. — 89, 140, 143, 147, 150, 168  
 Ստեփանյան Գառնիկ — 81  
 Ստեփանյան Հովհաննես (Օնիկ) — 121  
 Ստրելետովա Պ. Ա. — 95—96, 160  
 Սուլթանշահ Անանիա — 27, 45  
 Սոււմովո-Կորիլին Ա. Վ. — 58, 68, 129, 171  
 Սումարոկով Ա. Պ. — 26  
 Սունդուկյան Գաբրիել — 30, 46—54, 58, 60, 63—64, 76, 99, 139, 151, 166, 169—171, 197  
 Սուվորին Ա. Ա. — 167  
 Սուքիասյան Արտաշես — 53, 57, 59, 70  
 Վանշիր Միքայել — 186  
 Վարդանյան Անուշավան — 190  
 Վարդանյան Վավիկ — 69—89  
 Վարդուհի (Նամուրազյան Աննա) — 64  
 Վառամով Կ. Ա. — 86  
 Վասիլ Ն. Օ. — 96  
 Վեսելովսկի Ա. Ա. — 17  
 Վեսելովսկի Յու. Ն. — 48  
 Վիկեն Պառլ — 146  
 Վրույր Արամ — 101, 121  
 Տեր-Աղեքսանդրյան Գևորգ — 25—57  
 Տեր-Գրիգորյան Հովհաննես (Վանո) — 69—71  
 Տեր-Գավթյան Գևորգ — 64, 75, 77, 101  
 Տեր-Հովհաննիսյան Գաբրիել — 45  
 Տերյան Վահան — 139  
 Տեր-Օհանյան Արմեն — 172—173

Տիգրանյան Մարգիս — 25, 26  
 Տոլստոյ Ա. Կ. — 151, 159, 163—164  
 Տոլստոյ Լ. Ն. — 94, 129, 138, 144, 151, 155—158  
 Տուզանով Ա. Ա. — 164  
 Տուրգենև Ի. Ս. — 96, 144  
 Տուրչանինովա Լ. Պ. — 96  
 Ցագարելի Ավքաննախ — 118, 132  
 Ռուալով Ի. Մ. — 154  
 Փափազյան Վահրամ — 162  
 Փափազյան Վըթանես — 132, 138, 188—189  
 Փուղինյան Նիկողայոս — 27, 29  
 Քալանթար Իզարելա — 143  
 Քալանթար Լեոն — 192—194  
 Քափանակյան Ստեփան — 183, 185  
 Քիշմիշյան Ալեքսանդր — 44  
 Քնարիկ — 120  
 Օդարյով Ն. Պ. — 24, 39  
 Օդենսկի Ա. Ի. — 14  
 Օգերով Վ. Ա. — 26  
 Օրենս Պ. Ն. — 95  
 Օստրովսկի Ա. Ն. — 47, 50—52, 55—57, 60, 64—65, 68, 72, 80—81, 94, 96, 118, 129—131, 134—135, 151—152, 159 — 160  
 Չեղոստովա Պ. Ն. — 95—96, 106, 123—124  
 Չեղորով Ս. Ն. — 27—28, 45  
 Ֆիլիպով Վ. Ա. — 20

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

հջ

ՀԱՅՈՒ ԳՅԱ Արվեստների պատմության և	
տեսության սեկտորի կողմից . . . . .	5
ԳԼՈՒԽ առաջին . . . . .	7
ԳԼՈՒԽ երկրորդ . . . . .	37
ԳԼՈՒԽ երրորդ . . . . .	91
Անվանացան կ . . . . .	199

Բարկեն Թարեղամի Հարուրյունյան

«Հայ-ռուսական բատերական կապեր»

Պատ. խմբագիր Տ. Ա. Հախումյան  
Հրատ. խմբագիր Խ. Մ. Գյուլնազարյան  
Տեխն. խմբադիր Մ. Ա. Կափլանյան  
Կոնսորտ սրբադրիչ Ա. Հ. Շաղգամյան

ԽՀԱ № 277	ՀՐԱՏ. № 1183	ՊԱՏԳԻՐ 213	Վ.Ը. 1298:
Հանձնված է արտադրության ՀՎՀ 1955 թ., ստորագրված է տպագրության 25/Х 1955 թ., Տիրած 1500, Հրատ. 5,7 մամուր տպագր. 0,5 մամուր թուղթ 70×92 <sup>1/22</sup>	ստորագրված է առաջնական տպարան, Երևան, Արտօվյան, 12	Գինը կազմով 3 ո. 55 կ	

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակության տպարան, Երևան, Արտօվյան, 12

Բ Ա Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ Ն

հջ

ՀՍՄԾԻ ԳԱ. Արվեստների պատմություն և	
տեսության սեկտորի կողմից . . . . .	5
Գլուխ առաջին . . . . .	7
Գլուխ երկրորդ . . . . .	37
Գլուխ երրորդ . . . . .	91
Անգամ առաջնական կողմանը . . . . .	199

Բարկեն Բարեղամի Հարույոնյան

«Հայ-ռուսական բատերական կապեր»

Պատ. խմբագիր Տ. Ա. Հախումյան  
Հրատ. խմբագիր Խ. Մ. Գյուլնազարյան  
Տեխն. խմբագիր Մ. Ա. Կափլանյան  
Կոնսոլու որբագրիչ Ա. Հ. Շաղգամյան

Եջե № 277	Հրատ. № 1183	Պատվեր 213	ՎՅ 1298:
Հանձնված է արտադրության 2/VII 1955 թ., ստորագրված է տպագրության 25/X 1955 թ., Տիրաքանության 1500, հրատ. 5,7 մամուր տպագր. Ծճ մամուր թուղթ 70×92 <sup>1/22</sup> ,	ստորագրված է տպագրության 25/X 1955 թ., Տիրաքանության 1500, հրատ. 5,7 մամուր տպագր. Ծճ մամուր թուղթ 70×92 <sup>1/22</sup> ,	ստորագրված է տպագրության 25/X 1955 թ., Տիրաքանության 1500, հրատ. 5,7 մամուր տպագր. Ծճ մամուր թուղթ 70×92 <sup>1/22</sup> ,	ստորագրված է տպագրության 25/X 1955 թ., Տիրաքանության 1500, հրատ. 5,7 մամուր տպագր. Ծճ մամուր թուղթ 70×92 <sup>1/22</sup> ,
Հայկական ՍՍՌ ԳԱ. Հրատարակության տպարան, Երևան, Արվեստների պատմություն և առաջնական կողմանը . . . . .	Հայկական ՍՍՌ ԳԱ. Հրատարակության տպարան, Երևան, Արվեստների պատմություն և առաջնական կողմանը . . . . .	Հայկական ՍՍՌ ԳԱ. Հրատարակության տպարան, Երևան, Արվեստների պատմություն և առաջնական կողմանը . . . . .	Հայկական ՍՍՌ ԳԱ. Հրատարակության տպարան, Երևան, Արվեստների պատմություն և առաջնական կողմանը . . . . .

Հայաստանի Սզբային գրադարան



NL0444434

Գիլ 3 Ռ. 55 4.

1167